1897

ԹԻՒ Գ· ՄԱՐՏ

ԷՐԵՒԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱՐԱՐԱՏ



ՏՊԱՒՈՐԱՆ Մ· ԱԹՈՌՈՑ Ս· ԷՋՄԻԱԾՆԻ·

ՀՐԱՄԱՆԱԾ Է

Տ· Տ· ՄԿՐՏՉԻ Ա·

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՄՐԱՁՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԴՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԱԶԳԱՑԻՆ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՌՅԽԵ· Լ· ՏԱՐԻ | ՀԱՄԱՐ ԵՐԲՈՐԴ | ՄԱՐՏ 1897 Թ·

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

„Մխիթարեցէ՛ք, մխիթարեցէ՛ք զժողովուրդ իմ, ասէ Աստուած· քահանայքդ խօսեցարո՛ւք ի սիրտ Երուսաղէմի եւ մխիթարեցէ՛ք զդա, զի լե՛ղ տառապանօք՚՚: Ես· Խ. 1·:—

—

Սիրելեա՛լքդ իմ ի Քրիստոս·

1· *Այս է պատգամը զոր Արարիչն երկնի և երկրի և մեր ամենակալ Տէրը կը յղէ իւր Ծառայից Եսայեայ մարգարէի բերանովը: Ես էս իրրև յիանեալս ի քահանայական դասու՝ կը զգամ որ Տէր Աստուած այս խօսքերով ինձ էս կը պատուիրէ, որ մխիթարեմ զիմ տառապեալ ժողովուրդ և ազգ, որ անցեր և անպատում թշուառութեանց և զրկանաց մատնուած է, և կը հեծէ և կողբայ, ինչպէս աշխարհի սաեղծուածն մինչև ցարդ ոչ մի ազգ հեծած է: Այսպիսի ծանր պարագայից մէջ կը հրամայէ մեզ Աստուած· «Մխիթարեցէ՛ք, մխիթարեցէ՛ք զժողովուրդ իմ»:*

2· *Տէր իմ և Աստուած իմ, փառք քեզ յաղագս ամենայնի, օրհնեալ է անուն Քո: Սակայն ի՞նչպէս մխիթարեմ իմ ժողովուրդ, կամ նախ՝ ի՞նչպէս ես ինքս մխիթարուիմ երբ զարերով նեղութիւն և տառապանք կրող իմ ազգս ու Քո սուրբ ժողովուրդ՝ այժմս բնաջինջ լինելու ապառնալեաց նեղքով կը զանուի: Ես ի՞նչպէս միամտեմ իմ և ժողովրդեանս ի՞նչպէս բացատրեմ այն անօրինակ արհաւիրներ,*

որ վերջին տարիներս նկած են մեր սիրելի հայրենեաց վրայ. այն մեր հայրենեաց երկիրն որոյ վերայ կը գտնուէր երբեմն Աստուածատունկ եդեմական դրախտն՝ որ այժմ դժոխային խժդժութեանց վայր է փոխուեր, և բիւրաւոր անմեղ մարդոց արեամբ ոռոգուեր՝ մարդկային մի մեծ սպանդանոց է դարձեր. այն գետեր որք երբեմն ականակիտ աղբիւրներէ զովացուցիչ և առոջարար ջուր կը մատակարարէին եդեմական դրախտին՝ այժմ մարդկային արեամբ ներկուեր են և հազարաւոր անմեղների դիակներ կը տանին ծովը կը թափեն։ Թագէոսի և Բարդուղիմէոսի սրբազան առաքելոց քարոզութեամբ և ս. Գրիգոր Լուսաւորչի և նորա արժանաւոր յաջորդաց ջանիք հաստատեալ Քրիստոսի եկեղեցիք սրբապղծուեր կամ կործանուեր են։ Հայոց ազգի հետ քրիստոնէական լուսաւորութիւնն անհետանալու մերձ է։ Տէր իմ և Աստուած իմ, ինչէս միթարեմ կամ ինչպէս միխիթարուիմ երբ այս ամենը աչքիս առջև կը տեսնեմ։

3. Մինչդեռ ահիւ և դողութեամբ կը կենամ առաջի Աստուծոյ և կը խորհիմ թէ իւր Աստուածային հրաման ինչպէս կատարեմ իւր ժողովրդեան մնացորդ ինչպէս միխիթարեմ վերստին կը լսեմ Աստուածային պատգամ որ գարձեալ Եսայեայ մարգարէին բերանովն ինձ կը դրկուի. «Ել ի վերայ լերինդ բարձու՝ աւետարանիչդ սիովնի, բարձրացո զօրութեամբ զբարբառ քո՝ աւետարանիչդ Երուսաղէմի. բարձրացուցէք, մի՛ երկնչիք. ասա ցքաղաքդ Յուդայ՝ ահաւասիկ Աստուած ձեր, ահաւասիկ Տէր, Տէր գայ զօրութեամբ և բազուկն տէրութեամբ իւրով, ահաւասիկ վարձք իւր ընդ իւր և գործք առաջի նորա»։ Ամ յառաջ բերած պատճառներ Աստուծոյ ընդունելի չեն. պիտի անպատճառ միխիթարեմ, պիտի վստահացնեմ ժողովրդեանս, որ Աստուծոյ նախախնամութեան աչքն բոլորովին մեզմէ հեռացած չէ. նա երկնքէն կը տեսնէ, ամենայն ինչ, արդարութեամբ կը կշռէ ամենայն ինչ, մեր յոյսը տակաւին նորա վերայ դնելու եմք, քանզի «Տէր գայ զօրութեամբ և վարձք իւր ընդ իւր»։

4. Այո՛, Տէր, մենք ալ կուզենք միխիթարուիլ, քանզի կարի զուրկ եմք միխիթարութենէ. փառք քեզ, այս խոստմանդ համար, և միայն կը ցաւինք մեր թերահաւատութեան վրայ. «Ցաւել ի մեզ Տէր, զհաւատս, զյոյս, զսէր»։ Ու յիրաւի, սիրելի՛ ժողովուրդ, ով ենք մենք որ Աստուծոյ նախախնամութեանը վերայ տարակուսենք, կամ նորա անօրինութիւններ քննադատենք, որքան աննշան ենք մենք առաջի Աստուծոյ և այս անսահման տիեզերաց մէջ։ Երևի երբեմն կը մոռանանք մեր ինչ աստիճանի էնչին արարածներ լինելը և մեր մտաց վերին աստիճանի անձուկ ու չափաւոր դրութիւն, և կուզենք քննել և հասկանալ այն բաներ, որ տիեզերաց Արարչագործի յաւիտենական գաղտնիքներն են, և մեր հասկացողութենէն բոլորովին դուրս և վեր են։ Ամբողջ տիեզերքն և նորա կառավարութիւն հրաշիւք և սքանչելեօք շրջապատեալ են, ամեն ինչ Արարչի անհուն իմաստութիւն կը յայտնէ։ Երկիրս և աստեղք ու լուսաւորք իւրեանց սքանչելի ներդաշնակութեամբ, լեռներ, ծովեր և գետեր իւրեանց նպատակայարմար ընթացքով, ծառեր և բոյսեր իւրեանց առոջարար քաղցրաճաշակ պտուղներով և անուշահոտ ծաղիկներով, կենդանեաց բազմազան տեսակներ, թէ օդի թռչուններ, ծովու ձկներ և ցամաքի անասուններ՝ այս ամենը իւրեանց սքանչելի կարգ ու կանոնով խոհական մարդոյն հիացում կը պատճառեն։ Այլ ամենէն աւելի հիացում և սքանչացում պատճառող ստեղծուածը մարդն է, որ իւր մտային հանճարովն բոլոր կենդանեաց թագաւոր և իշխող հանդիսացած է և երկրիս բոլոր բարիքներ և բերքեր իրեն ծառայեցնելու և պիտոյացնելու հնարքը գտեր է։

Մարդն՝ միակ կենդանին որ Աստուածային պատկեր ու շունչ կը կրկ և անմահ հոգի ունի, զԱստուած ճանչնալու և խոստովանելու կարողութիւն ունի։ Սակայն բնութեան այս բոլոր ճոխութեան և գեղեցկութեան մէջ, երբեմն այնպիսի բաներ ևս կը տեսնենք, որ մեր վերայ հակառակ ազդեցութիւն կը գործեն և աւելի սոսկում ու սարսափ կը բերեն, կուզեմ ասել՝ այն մեծ ադէաններ, որք երբեմն Աստուծոյ թոյլատուութեամբ տեղի կունենան աշխարհիս վերայ, երբեմն երկրաշարժն, եր-

բեմն ծովու ալիքներ ու գետերի յորդումն, հողմեր ու կայծակն, երբեմն հրաբուխներ, երբեմն սով ու մահաբեր ախտն, որ հազարաւոր անմեղներ ու բնաիր բնաիր գիւղեր ու քաղաքներ ի կորուստ կը մատնէ: Կը զարմանանք, թէ ինչպէս Աստուծոյ պատկեր կրող և հոգւոյն սրբոյ տաճար լինելու սահմանեալ մարդոյն թոյլ կուտայ այնպիսի անօրէնութիւններ և խժդժութիւններ գործել, որ մեր բարերար ստեղծողի նպատակէն բոլորովին հեռու են: Քանզի ինչպէս կարելի է ենթադրել, որ Աստուած իւր ստեղծուածներր կործանելու հրամանն տայ առանց մի գօրաւոր և օգտակար նպատակի: Այսպէս ևս մեր ազգի ներկայ թշուառ դրութիւն, որ թէպէտ մեզ առայժմ անհասկանալի և անբացատրելի է. սակայն վստահ եմք որ տակաւին մեր Ստեղծողի իշխանութեան և հսկողութեան ներքոյ կր գտնուինք և առանց Աստուածային հրամանի «մազ մի ի գլխոյ մերմէ ոչ կորիցէ»: Այսքան կոտորածներուն բուն պատճառր թէպետև առ այժմ մեզ յայտնի չէ, բայց և այնպէս անհաշիւ և աննպատակ չէ:

5. Բայց ինչ օգուտ, պիտի գոչենք, մեր ազգր գնաց, մեր յոյսեր իղձերև ելին, հայաստանեայց եկեղեցին անարգուեցաւ, Քրիստոսի արեամբ գնեալ հայ ժողովուրդ բնաջինջ լինելու մօտ է. ինչ նպատակ պիտի ունենայ Աստուած, երբ խաչի թշնամին այսպիսի սոսկալի հարուածներով ս. եկեղեցին կը հարուածէ: Բայց համբերութիւն, գուցէ արժանանանք մէկ օր Աստուծոյ նպատակր տեսնելու. մեր հաւատն արդարև բուռն փորձի կենթարկուի, բայց այն է մեծ քաջութիւն, երբ այս սոսկալի փորձանաց հանդէպ չթողունք մեր հաւատ մէկ մազի չափ իսկ մեր Արարչի նախախնամութենէն շեղի:

6. Մտաբերենք ինչ որ Աստուած անցեալին արած է այսպիսի պարագայից մէջ. մի՞թէ պատահած չեն այնպիսի դէպքեր, երբ մի ազգի կամ ժողովրդեան կամ մի արդար դատի վերջին յոյսը կը կարծուէր թէ պիտի հատնի, երբ կը կարծուէր թէ անիրաւ թշնամին պիտի վերջնական յաղթանակը տանի և արդարութիւնը կորսուի, այլ ի վերջոյ մեր կարծածէն տարբեր արդիւնք յառաջ եկած է:

Դարդացէք ս. Աւետարանն և տեսէք, թէ ինչ առելութեամբ հրէայք մեր Փրկչին հալածեցին, տեսէք որքան էր նոցա նախանձ երբ կը տեսնէին նորա հրաշքներ և կր լսէին նորա քարոզներ, որքան կր զայրանային նորա ժողովրդականութեանը վրայ, ինչ ստոնանայական գաւադրութիւններ կր յարէին նորա գէմ և ի վերջոյ կկարծուէր թէ պիտի յաջողին գՔրիստոս և իւր վարդապետութիւնր ջնջել երկրիս վրայէն: Եկան ձերբակալեցին գնա և մեծ ճիգ թափելով՝ յաջողեցան գնա մահուան դատապարտել տալ առաջի Պիղատոսի: Իւր մի խումբ աշակերտաց յոյս հաստատ. նոքա որ կը յուսային գՔրիստոս թագաւորական գահի վրայ նստած տեսնել և իւրեանք իրրև մի մին նախարար և իշխան նշանակուիլ նորա պետութեան մէջ, այժմ արտասւմ և յուսահատ կը փախչին, երբ իւրեանց ծերը կը կախանաւորեն: Միայն Պետրոս կր հետևի, բայց այն ևս շուտով կուրանայ գիւր վարդապետ, երբ ինքզինք վտանգի մէջ կր տեսնէ: Հրէայք կր կարծէին թէ այլ ևս Քրիստոսի հաւատր ջնջուեցաւ: Աւետարանիչը կասէ. երբ խաչի վերայ կախուած էր՝ անցնողներր «Հայհոյէին զնա, շարժէին զգլուխս իւրեանց, և ասէին. վահ, որ քակէիր զՏաճարն և զերիս աւուրս շինէիր զնա, ապրեցո՛ զքեզ, թէ որդի ես Աստուծոյ՝ էջ ի խաչէդ: Նոյնպէս և քահանայապետքն ձաղէին հանդերձ դպրօքն և ծերովք և ասէին. զայլս ապրեցոյց, զինքն ոչ կարէ ապրեցուցանել, և թէ թագաւոր է Իսրայէլի՝ իջցէ այժմ ի խաչէդ, և հաւատասցուք դմա, եթէ յուսացաւ յԱստուած, փրկեսցէ այժմ դգա. քանզի ասաց եթէ Աստուծոյ որդի եմ: Սակայն խընդիրը փոխուեցաւ Յարութեան կիրակի առաւօտ, երբ ծերն մեր «Յաղթահարեաց դժոխոյ և ելոյծ զբռնութիւն մահու»: Փոխանակ խաչի մահուամբ քրիստոնէութիւն ջնջուելու, նոյն իսկ այդ խաչն եղաւ հալածուած կրօնի յաղթական նշան, և այդ ապարդական մահուան դործիքն գարձաւ կենդանութեան և հանդերձեալ կենաց առհաւատչեայ:

7. Կամ յիշենք նախկին դարու քրիստոնէից հալածանքներ, որ շատ կը նմանէին

մեր ազգի կրած ներկայ հալածանքին, և նպատակը միևնոյն էր, որպէս մեր ներկայ հալածողներինը։ Քրիստոնէութիւնը կու գային բնաջինջ անել, և այս նպատակին հասնելու համար՝ միևնոյն միջոցների կը դիմէին, որպէս մեր ներկայ թշնամիք. զոհանս նաւթով կօծէին և ապա կայրէին, զոհանս կը խաչէին, կամ կը տապակէին, վայրենի կենդանեաց առաջ կը ձգէին, մարմիններ կը յօշոտէին, գոյքերը յարքունիս կը գրաւէին, աքսոր, բանտարգելութիւն և ամենատեսակ կտտանք և չարչարանք ի գործ կը դնէին առանց հասակի կամ սեռի խնայելու, և այնպիսի սաստկութեամբ, որում միայն մեր ազգի ներկայ թշնամիները կարօղացեր են գերազանցել։ Հեթանոսք կը յուսային այդու քրիստոնէութիւնը ջնջել. բայց այդ հալածանք զայն աւելի տարածելու օգնեց, և ըստ ասութեան սուրբ հայրց թէ «Արիւն մարտիրոսաց՝ սերմն եկեղեցւոյ» այն թափուած արիւնը սերմի պէս, երբ քրիստոնէութեան գարունն եկաւ, սկսաւ բուսնիլ և աճիլ և բազմապատիկ պտուղներ տալ։

8. Այո՛, «Արիւն մարտիրոսաց, սերմն եկեղեցւոյ»։ Հայաստանեայց եկեղեցին այժմ հաւատոյ սերմերն առատօրէն կը ցանէ իւր մարտիրոսաց սուրբ արեամբ։ Անպատճառ այն Աստուածն, որ խոստացեր է զմեզ պաշտպանել և կը վստահացնէ թէ՝ «Մազ մի ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ» չպիտի թողու որ այդ սերմեր ապարդիւն մնան գետնին մէջ։ Մեր ազգի ներկայ թշուառութիւն ուղղակոհ մարգոն և հաւատացեալ քրիստոնէի համար մի մեծ վսեմական կոյս ևս ունի։ Այս ահռելի հալածանաց ներքոյ մեր ազգ Քրիստոսի հաւատին հրաշափառ վկայութիւն կը տայ. նա ցոյց կը տայ որ կրօնքն իւր համար մի սոսկ անուն չէ, այլ նա կղզայ զոր ինչ աշխարհը կը վարդապետէ. նորա համար երկնից արքայութեան շահերը գեր ի վերոյ են քան բոլոր ուրիշ շահերը։

9. Յիրաւի աքանչելի է մեր ազգի անվհեր վստահութիւն ի Քրիստոս, նորա անսասան հաւատք ի Տէր, այն հաստատամտութիւն, որով նա իւր կրօնի սկզբանց վրայ կը մնայ առանց ո՛և է, ուրիշ նկատման, և մինչև իսկ իւր կեանքը կը զոհէ ի սէր այդ սկզբանց։

Այս ամենը աքանչելի չէ՞ ինն և տասնեորդ դարուս մէջ կը տեսանենք մեր շուրջը բոլոր լուսաւորեալ կոչուած ազգեր, որք արդարև սկզբանց և կրօնի վարդապետութիւն ունին, գեղեցիկ և հոյակապ շէնքեր և հաստատութիւններ ունին, շքեղ եկեղեցական հանդէսներ կը կատարեն, բայց երբ իրենցմէ մեռը ասեղով ծակելու չափ անձնուիրութիւն պահանջուի ի սէր իւրեանց խոստովանեալ կրօնի, այն ժամանակ իւրեանց յարաբերութիւնը կրօնի հետ կը լարուի և անձնական ու աշխարհային շահեր միշտ կը նախապատսուին։

Հրաշալի չէ՞, որ մեր ազգն իւր կեանքն և մինչև իսկ իւր գոյութիւնը կը զոհէ ի սէր Յաչեցեալին, մինչդեռ գրեթէ ամբողջ Եւրոպա նիւթապաշտութեան խաւարին մէջ խորասուզուած՝ իւրեանց սկզբունքն է անձնասիրութիւն, և այդ սկզբանց համն ինչ զոհելու յօժար են։

10. Եթէ քրիստոնէական սկզբունք մեր ազգի մէջ խոր արմատ ձգած չլինէր, եթէ մեր սրտեր անպրկուելի հաւատով ս. Աւետարանի հետ կապուած չլինէին, այս սոսկալի հարուածներէն ազատուելու ուրիշ ի՞նչ միջոց կար քան թէ զՔրիստոս ուրանալ և սուտ մարգարէին հպատակիլ, մեկ խօսքով՝ մահմետական դառնալ։ Ոչ ապաքէն ամեն հալածանքէ վերջ կը լինէինք և աշխարհային պատուոյ և փառաց արժանի կը համարուէինք. մեր գոյքերին տէրը կը լինէինք, մեր սիրելիներն չէինք բաժնուեր և վաղահաս մահուանէ կազատուէինք։

11. Բայց այս բոլոր ազէտից և թշուառութեանց մէջ մեր ազգի փառաց պսակ կը կազմէ այն սկզբունք, զոր սուրբն Սիլուէն իւր ոսկեղինիկ ղրկով մեր սրտերի մէջ խորապէս տպաւորէր է. «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է»։

12. Արդ՝ երբ մեր ազգի վերջին քանի տարուայ պատմութիւն լի է արիւնհեղութեան սոսկալի անցքերով, սակայն պիտի չմոռանանք՝ այս սոսկալի արիւնհեղութիւնք իսկ մեր պատմութեան ամենափառաւոր էջերը կը

կազմեն. որովհետև այս պատմութիւն անլուր հերոսութեան և նահատակութեան անցքեր պիտի աւանդէ աշխարհիս ապագայ սերունդներին, անմեղ հայ քրիստոնեայ մանուկների արեան մասին մինչև յաւիտեան պիտի բարձրանայ յերկինս և մի լուսափայլ սիւն պիտի կազմէ ի մէջ Հայաստան աշխարհի և Աստուծոյ աթոռոյն. հայ քրիստոնեայ կուսանաց և տիկնանց արիասիրտ ժուժկալութիւն, Շաքէի և իւր նմանեաց անվհերութիւն՝ երկար տեղ պիտի բռնէ աշխարհիս պատմութեան մէջ: Ի յաւիտենական յիշատակ պիտի արձանագրուի, որ հայոց ազգն իւր անդրդուելի հաւատովն մահը կընդդիմէ ի սէր Քրիստոսի, մինչդեռ քրիստոնեայ կոչուած հզօր ոյժեր իրար նախանձելով և վախենալով, թէ մի գուցէ մինը միւսէն աւելի յառաջ երթայ՝ անշարժ կեցեր կծիծաղին Քրիստոսի վերայ, որ Հայաստանի մէջ այժմ վերսաին կը խաչուի: Փրկիչն աշխարհի իւր անարատ բազուկներ այժմ Հայաստանի մէջ միւսանգամ բարձրացուցած խաչի վերայ վերսաին կը գոչէ. «Վլի՛, Ելի՛, լամ՛ սապաղթանի՛» կը նայի Իւր անունը կրող Եւրոպայի ազգաց վերայ արտմութեամբ. իսկ նոքա ի՞նչ կանեն, ինչ կը պատասխանեն. «Հայհոյին զնա, շարժեն զլուխս իւրեանց և ասեն՝ ապրեցո՛ զքեզ, եթէ որդի ես Աստուծոյ էջ ի խաչէդ»:

13. Որա՛ է, սիրելի՛ ժողովուրդ, մենք մեացողներս կը սրամինք և կը ցաւինք այս մեր ազգի դժբախտութեան վերայ, սիրտերնիս կը մորմոքի մեր այն բազմաթիւ ազգակիցների՛ բարեկամաց և մերձաւորաց համար, որք առանց յանցանքի չարաչար մահուամբ անցեր են այս աշխարհէն: Այս է մեր պզացում և մեր տեսակէտ: Բայց մին էլ հարցնենք, թէ գնացողներն իրենք ներկայ ի՞նչ դրութեան մէջ են և ի՞նչ կը խորհին: Նոքա այժմ իւրեանց մարտիրոսական մահուան փառքով պսակուած՝ կը վայելեն Աստուծոյ երանաւէտ տեսութիւնն, հազարաւոր հոգիք այժմ խառնուած Աստուծոյ հրեշտակաց հետ՝ երկնային սրբասացութիւններ կերգեն, և եթէ մի վիշտ ունին՝ այն է որ այժմ ամենապայծառ կերպիւ կը տեսնեն այն սոսկալի տեսարան, որ քրիստոնեայ կոչուած ազգաց անտարբերութիւն կը ներկայացնէ. կը ցաւին որ մինչդեռ Եւրոպիոյ իշխանք և թագաւորք իւրեանց իշխանութիւն «չնորհօք Աստուծոյ» ստացած են և ունին՝ մի խօսք անգամ չեն ուզեր ասել Աստուծոյ եկեղեցւոյն ի նպաստ, և ամենասոսկալի ոճիրներ ու խըժդըժութիւններ թոյլ կը տան որ կատարուին Աստուծոյ ժողովրդեան վերայ: Այն բազմաթիւ հայ սուրբերն այժմ առաքելոց, մարգարէից և նախկին եկեղեցւոյ ս. հայրապետաց և մարտիրոսաց հետ միասին կը ցաւին, որ Քրիստոսի անունը կրող և առաքելոց յաջորդ համարուող եպիսկոպոսներ և հայրապետներ՝ փոխանակ իրապէս զգալու այն հարուածները, որ իւրեանց հասարակաց կրօնին կուղղուին, իւրաքանչիւրն կը խորհի թէ այս խառնիճաղանճ դրութենէն ի՞նչ անձնական կամ նիւթական օգուտ կարող է քաղել կամ իւր աղանդի համար կամ իւր երկրի և ազգի համար:

14. Այն սուրբերն ի յերկնից զմեզ կը քաջալերեն և կասեն. «Խիթարուեցէ՛ք և մի՛ յուսահատիք, «մի՛ զարհուրիք յայնցանէ որ սպանանեն զմարմին, և յետ այնորիկ աւելի ինչ ոչ կարեն առնել, այլ երկնչիջիք յայնմանէ՝ որ յետ սպանանելոյ ունի իշխանութիւն արկանել ի գեհեն»:

Փա՛ռք քեզ տէր, փա՛ռք քեզ այս բոլոր երանութեանց համար: Այլ այժմ բա՛ւ է եկեղեցւոյդ հալածանք, հա՛ օգնութիւն, բարեխօսութեամբ այն հազարաւոր անմեղ հայերի, որք աշխարհիս թշուառութիւններն յաւիտենական երանութեանց և յաղթական եկեղեցւոյ փառաց հետ փոխանակեցին: Ե՛կ փութով և օգնիր ըստ խոստման Քումմ թէ. «Ահա՛ասիկ Աստուած ձեր, ահա՛ասիկ Տէր, Տէր գայ զօրութեամբ իւրով և վարձք իւր ընդ իւր»: Նա մեք ընդ երկնային պարան փառս տացուք Հօրդ և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս. Ամէն: *

Թորոս քան. Ջուղայեցի.

* Թօսուած է Հօնկօնի ս. Յովհաննու եկեղեցւոյ մէջ:

ԱՐԵԳ ԱՄԻՍ·

„Նորոգուն է արծարծումն հնացելոյն"։

ՀԷՆ ԽՕՈՐ·

Ընդարտեան դաշտում վաղուց չտեսնուած երկար ու խստաշունչ ձմեռը վերջապէս տեղի է տալիս քո առաջ, գարնանարեր ամի՛ս, հնազանդելով բնութեան անսուտ օրէնքներին, որ նախախնամող Աչը սահմանել է աշխարհիս կառավարութեան համար։ Վերջանում է ցրտի և սառնամանիքի թագաւորութիւնը· երկար երկար թմրեցուցիչ զիշերները փախչում են ահա մեզնից· գալիս է կայտառ Արեգ ամիսն և աւետում է մեզ վերանորոգութեան մի շրջան։ Օրն ու զիշերն հաւասարուում են, լոյսի և ջերմութեան իշխանութիւնն հետզհետէ զօրանում է և ընդարձակուում, և գարունն իւր հանդիսաւոր գնացքով բերում է մեզ կենդանիների ծնունդ, բուսականութեան աճումն և մարդիկների վերակենդանութիւն։ Մ՛եր ամենքի նամսեայ գերութեանն յաջորդում է նոր ազատ կեանք ազատ բնութեան սնուցիչ և կազդուրիչ գրկի մէջ։

Այո՛, բարեբաղդող փոփոխութիւնների ազդեցութեան տակ, բնական է, որ մենք Արեգ ամսի մէկին (Մ՛արտի 9-ին) գարնան առն կատարէինք և իրարու նոր տարի շնորհաւորէինք։ Սակայն այդպէս չէ, ապաբաղդաբար, մեր տօմարի հաշիւը։ Ինչպէս որ շատ բաներ մէջ մեր կեանքն ու գնացքը, կարծես, բնութեան հակառակ է կազմուած, այնպէս էլ տարեշրջանի նորոգութեան յիշատակը։ Տօմարագիրը մեզ տուել է այժմ մի շատ անբնական ամանոր։ Յունուարի մէկին տարեմուտ առն ենք կատարում մենք առանց իմանալու, որ հների օտարամոլութեան, կոյր հետևողութեան արդիւնք է այդ, որին ընտելացել ենք, չտեսնելով նորա մէջ ընդհակառակը բան, մանաւանդ թէ ազգային ծէսն ու սովորութիւնը մոռացած և միշտ մոռանալու պատրաստ լինելով։ Չենք կարող սակայն չըխոստովանել, որ Յունուարի մէկին ամանորի յիշատակ կատարելու ոչ մի ազգային կրօնական հիմք չունինք։ Հայոց համար Յունուարի մէկը չէր և չէր կարող լինել ժամանակի նորոգութեան սկիզբն։

Ա·

Շատ հիմունքներ կան ասածելու, որ Հայոց հին ամանորի յիշատակն հանդիպումէր գարնանամուտին այնպէս, ինչպէս և հին Պարսից տարեմուտն էր, որ արդի Պարսիկները, չնայելով ժամանակների և կրօնի խիստ փոփոխութեանը, պահպանել են գրեթէ նոյնութեամբ։ Առհասարակ հին Հայերը և նոցա հարևան ցեղակից ազգերը տարուայ շրջանի մասին այլ կերպ էին մտածում։ Նոքա, տարին երկու կէս անելով, գարնանամուտն ընդունում էին իբրև առաջին ամանոր և աշնանամուտն իբրև երկրորդ, երկրագործ և խաշնարած ժողովրդի համար երկու նշանաւոր վայրկեաններ, որոնք շատ սերտ կապ ունէին բնութեան երկու շրջանների հետ· առաջինն՝ աշխատութեան սկիզբը, երկրորդը նորա վախճանն ու նպատակը։ Այսպէս ուրեմն կարելի է ասել, որ հին Հայոց մէջ Արեգ ամիսն էր գարնանային տարեմուտը, իսկ Սահասարդ ամիսն աշնանային։

Յայտնի է սակայն և այն, որ հին Հայերը բացի բնական տարեմտից ունեցել են և քաղաքականը։ Մի այլ անգամի թողնելով բացատրելու երկուսի տարբերութիւնն և շփոթութիւնները, երբ առիթ լինի խօսելու Հայոց Նահասարդի մասին, այստեղ պէտք ենք համարում յիշել, որ եկեղեցին և ժողովուրդն ընտրել և պահպանել են բնական տարեմուտը։ Նա մեզ համար անհասկանալի է եւ թուում այն, թէ Զ· դարում, երբ նորոգուեցաւ Հայոց շարժական տօմարը, ինչպէս կարող էին Յուլիս ամիսը համարել տարուայ սկիզբն և 552 թուին Յուլիսի 11-ին նշանակել Նահասարդի մէկը։[1] Նոյնպէս անբնական է նոյն իսկ Օգոստոսի 11-ը համարել տարեմուտ, ինչպէս որ Հայոց անշարժ տօմարն է ընդունում, թէև այդ ունի իւր հաւանական բացատրութիւնը։[2]

Թէպետև ժամանակի ընթացքում եղան

1. Патканов. К. Арм. мѣсяцы.
2. Հ. Զ. Ախեան. Տուչիկ Հայրեն.

շփոթութիւններ և փոփոխութիւններ, որոնց պատճառները զանազան են, սակայն գլխաւորութեան* ժողովրդական աւանդութիւնների և եկեղեցական տօմարի մէջ կարելի է գտնել բազմաթիւ յիշատակներ, որոնք ցոյց են տալիս, թէ հին Հայոց ամանորի տօնը ժամանակակից էր գարնանամուտին և տարեշրջանն սկսուում էր և պէտք է սկսուէր Արեգ ամսով։

Այսպէս մտածելու իրաւունք է տալիս մեզ նախ այն, որ եկեղեցին Արեգ ամսի մէջ տահմանել է այնպիսի յիշատակներ, որոնք յիշեցնում են աշխարհիս սկզբնաւորութիւնն և մարդկութեան երկրորդ նորոգութիւնը։ Բնական է, որ մարդիկների համար աշխարհի ստեղծագործութեան շրջանն է իսկական ծագումնքը։ Ելանիք չէ, որ յատիտեններից Արարչի այդ սքանչելի գործի՝ այն է աշխարհի և մարդու արարչութեան՝ ժամանակը հաշուի տակ ընկնել կարողանար, և յայտնի լինէր մեզ։ Այն ժամանակ աշխարհը միայն մի ամանոր կունենար, մի տօն, մի ուրախութեան յիշատակ։ Սակայն մարդուս հասողութեանն անմատչելի է այդ հաշիւը, որ գիտուններըը փորձել են միշտ և փորձում են դուրս բերել իրենց ունեցած շատ աղքատիկ միջոցներով։ Մի բան միայն պարզ է, որ եկեղեցին ընդունում է, թէ աշխարհիս արարչութեան ժամանակը համապատասխան է բնութեան վերակենդանութեան շրջանին։ Արեգ ամսի 9-ից մինչև 15 հին տօմարով անընդհատ նշանակուած է «յիշատակ արարչութեանն Աստուծոյ»։ այդ օրերըն իրար յետևից կարդում էին հաւատացեալց ունկնդրութեան համար թէ ո՞ր օրն Աստուած ի՞նչ ստեղծեց և պարզաբանում էին այն հայեացքները, որ հին մարդիկ ունէին բնութեան վերայ։ [1] Այդ օրերից մէկում Արեգի 12-ին նշանակուած է «յայտմ աւուր գարնանամուտ է և յիշատակ չորրորդ աւուր արարչութեան Աստուծոյ»։ իսկ Արեգի 16-ին նշանակուած է «Զատիկ է և տօն յարութեան Քրիստոսի»։ Այսպիսով աշխարհի ստեղծագործութիւնը, գարնանամուտը, Քրկչի ս. Յարութիւնը կապում են եկեղեցու մէջ մի շրջան, որ յիշեցնում է մեզ թէ ինչպէս է եղել մեր գոյութեան սկիզբը և ինչպէս մեր վերանորոգութիւնը։ Այդ յիշատակն անխափան պահպանուել է մինչև այժմ։ Իւրաքանչիւր տարի աւագ երկուշաբթի օրն (այս տարի Արեգի 30-ին) եկեղեցին յիշում է աշխարհի արարչութիւնը, կարդում է ս. Գրքից ստեղծագործութեան պատմութիւնը, երգում է շարականներ նոյն բովանդակութեամբ և արձարձում է մեր մտքի մէջ վերանորոգութեան գաղափարը։ Նոյնը լինում է աւագ երեքշաբթի օրն, երբ եկեղեցին յիշեցնում է մեզ մարդկութեան երկրորդ նորոգութեան շրջանը Քրհեղեղի պատմութեամբ։ Հին ժամանակներն այդ յիշատակներին նուիրուած էին զանազան տեսակ դանձեր ու տաղեր, որ նոյն օրերում երգուում էին, անշուշտ, եկեղեցում։ Անցել է այժմ այդ ամենի ժամանակը. ոչ ոք մեզ չի կարող այլևս բացատրել այդ ամենի խորհուրդը, որ երբեմն ոգի և սիրտ էր տալիս Հայոց եկեղեցական երգիչներին ու տեհնաւաօսներին։ լռել է ամեն ինչ և, կարծես, քարացել մնացել լոկ աւանդութեան սահմանած ձևի մէջ։ Այլ կերպ էին զգում և մտածում մեր նախնիք։ Նոքա իրենց կրօնական զգացմունքների սրբութեան գրոշմը դրել են բազմահատոր յիշատակարանների մէջ, ապրել ու մեռել են նոյն զգացմունքներով, և անդադար փառաբանել են Աստծուն հինաւուրց երգչի բերանով, որի ձայնը մինչև այժմ էլ հնչում է։ [1]

«Լոյսն ի հօրէ լուսոյ լուսաւիայլ զարդարեաց զԱդամ, ի դրախտին եդեալ անմահ անկոյն երկրագործ. արարածք ամենայն, տո՛ւք փառս Արարչին»։

«Նոր արարածք, պատուեալք ի հրեշտակաց, զերծեալք ի խաւարէ առ լոյսն, բարձր արարէ՛ք զնա յաւիտեան»։

1. Այս ժամանակ լինում էին մինչեւ անգամ լեզուագիտական բացատրութիւններ, որոնք հիմնուած են մինչդայն բացատրողների կամայականութեան վերայ։ Զորօրինակ՝ երկինք, երկիր, տիւ, գիշեր այսպէս են բացատրուած։ „Երկին՝ երկու ինչ՝ օդ եւ հուր“։ „Երկիր՝ երկու իր՝ հող եւ ջուր“։ „Ել կոչեաց Աստուած զլոյսն տիւ, զի ել եւ ացաց զերկոտասան ժամ աւուրցն ի վերայ երկրի. եւ զխաւարն կոչեաց գիշեր, որ է գէշ իր կամ գէշ երր, այս է մութ ու խաւար“։ Տես ձեռ. Յայսմաւուրք, 1692 թ. գրուած (մեր սեփական)։

1. Շարական աւագ երկուշաբաթի եւ աւագ երեքշաբաթի։

Հնթանոսական ամանորի յիշատակը ջընջելու նպատակով արդեօք թէ մարդկային ազգի փրկութեան գործոյնը ասելի պարզելու համար եկեղեցին սահմանել է բնութեան օրերուն արաչութեան յիշատակը, դժուար է որոշել: Սակայն, երբ աչքի առաջ ունենանք հին ժամանակագրական տեղեկութիւնները, որոնցով մեր նախնիք կամեցել են մինչև անգամ ձշդել աշխարհի և մարդու ստեղծման օրերն և գտել են, որ այդ օրերն Արեգ ամսի մէջ են, այն ժամանակ կը տեսնենք, որ նախնիք արդարև գարնանամտին և Արեգ ամսին առել են շրջանի սկզբնաւորութեան խորհուրդ: [1]

Եղել է մի ժամանակ, որ նոյն իսկ Հայոց նոր տարին էլ այդ օրերումն էր լինում: Այսպէս՝ յայտնի է, որ 606 թուին Նաւասարդ ամիսը Զատկի օրերն էր և Նոր կիրակին հանդիպեցաւ «յելս Նաւասարդի»: [2] *989 թուին Քաղոց ամսի 17-ին ս. Աստուածածնի վերափոխման տօն էր,* [3] *որ նշանակում է թէ ամանորի ժամանակն եղել է մօտաւորապէս Մարտ Ապրիլ ամիսներին: Այսպէս է հաստատացել և Դաւիթ Սալաձորեցին, որ երգում է.* [4]

«Գարուն տարի, ամիսքն ձիւղ,
Սեաւ ու սպիտակ պատուղ շարուն.
Ծիկոտասան ամիսք որ կան,
Մարտն է խաչիսխ, հիմն տալուն».

Բ.

Եթէ ժողովրդական ծէսերն ու աւանդութիւնները աչքի առաջ ունենանք, կը տեսնենք, որ գարնանամտի օրերն են և տարեմտի օրերը: Այդ յիշեցնում է Մ՚իջինքը (Մ՚իջուռնք), որ սովոր ենք կարծել թէ մեծի պահոց կէս շրջանը որոշող օրն է: Երբ ուշադրութիւն դարձնենք Մ՚իջինքի սովորութիւններին վերայ, կը համոզուինք, որ այդ բացատրութիւնը գոհացուցիչ չէ: Մի քանի տեղ Հայ ժողովրդի մէջ մեծի պահոց միջինքին այն են անում, ինչ որ ուրիշ գաւառների Հայ ժողովուրդն անում է արդի նոր տարուն, այն է յունուարի 1-ին: Այսպէս օրինակ՝ Ապահանում միջինք ասածը մի մեծ հաց է, որի մէջ մատանի կամ մի այլ բան են պահում և եփում են մեծ պասի չորրորդ շաբաթուայ չորեքշաբթի օրը. ապա հինգշաբթի երեկոյեան ժամից յետոյ ամբողջ ընտանիքով ժողովուում են ու հանդիսաւոր կերպով մաս մաս անում ընտանիքի անդամների մէջ. ում որ պահած բանը դուրս գայ, տարուայ բաղդը նորան է վիճակուած: [1] *Նոյն այդ ծէսը պահել է Շիրակայ ժողովուրդն և կատարում է տարեմտին: Երեսն ընկուզով ու չամիչով զարդարած մի մեծ կլոր հայի մէջ պահում են մի արծաթէ դրամ և եփում են տարեմտի նախընթաց օրը. այդ հացի անունն է Տարի: Մի ժամանակ կար, երբ ամանորի օրն առաւօտեան լուսաբացին շատ վազ Տարին դուրս էին բերում, նախապէս վառելով նորա շուրջը ժամի մոմեր և շարելով քաղցրեղէններ: Երեսները դէպի աղօթարան ուղղած ամէնքն աղօթում էին և ընտանիքի մեծը Տարին դուրսում էր. ապա իրարու շնորհաւորում էին, մի մի պատառ քաղցր բան ճաշակելով: Տարին ներս բերելուց յետոյ պահում էին, որ նշանակած օրը կտրին և իմանան թէ տարուայ բաղդն ում է վիճակուած: Այդ օրը սովորաբար յունուարի 2-ին էր լինում որ բաղդ փորձուի օր է ասուում: Ընտանիքի անդամ ներից իւրաքանչիւր ոք թէ ներկայ և թէ բացակայ անշուշտ իւր բաժինը պիտի ունենայ, և ում որ երևնէր արծաթի դրամը, նա պարտաւոր է այդ իւր բաղդը պահել սրբութեամբ և անկորուստ: Այս սովորութիւնը, որքան դիտենք, պահպանում են և Ղրիմի Հայ գաղթականները, թէև ինչպէս Շիրակում նմանապէս և հեռաւոր գաղթականների մէջ այդ ծէսն էլ հետզհետէ մոռացուում է: Տա-*

---

1. «Մարտի 15 (Արեգ 7) սկիզբն է արարչութեան»: «Մարտի 22 (Արեգ 14) մինչեւ ի մարդոյն»: Ցմս ծեռ. մատենադարանի Մ. Աթոռոյ № 244:

2. Ուխտանէս եպ. Լծ.

3. Ասողիկ, գ. 27:

4. Նոր ժողովածու, Բ. պրակ, 68: Աստուածաշնչի թարգմանութեան մէջ մի տեղ Արեգ ամիսը դրած է Նիսանի փոխարէն, որ հին ժամանակ Բաբիլոնի եւ Ասորեստանի տարեմտի ամիսն էր (Գիրք Նեեմիայ, Ը. 9). միւս տեղերում դրուած է Աղար ամսի փոխարէն, որ նոցա վերջին ամիսն էր համապատասխան մեր Մ՚ենեկանին (նոյն գիրք Բ. 46 եւ ԺԱ. 2): Քանի որ նոքա էլ երկու ամանոր ունէին Նիսան — գարնանամտին եւ Թշրին — աշնանամտին, Արեգը Նիսանի տեղը սխալ չէ:

1. Փշրանքներ ժող. քանահ. Գ. Ս. Յովսէփեանց. 70:

բին պատրաստելուց զատ ընտանիքի իւրաքանչիւր անդամի համար շինում են տեսակ տեսակ հացեր՝ խամաջուկ, քիսայ, սանդր, հիւս և այլն: Նշանաւոր է, քիսէն, որ ընտանիքի աշխատասէր տատամորդիկների համար է պատրաստուում: ընկուզով չամչով լցուած, քսակի ձև ունեցող խմորեղէն է այդ, որ պիտի դուշակէ հարստութիւն և կամքի առատութիւն: Զեւաւոր խմորեղէններից այնպիսիները, որոնք մարդու նմանութիւն ունեին, թերևս մնացորդ են հին հեթանոսական յիշատակների իբրև կուռքերին յատկացած ուտեստական նուէր: Ապարանում այդպիսի խմորեղէններն աւելի յիշեցնում են երկրագործական կեանքի ծէսերն ու սենչանքները:[1]

Այսպէս ուրեմն Միքինքն և Տարին ոչ այլ ինչ են եթէ ոչ ժողովրդի մէջ յայտնի բաղդ որոշող հացեր: Նոքա երկուսն էլ պահել են հին տարեմտի յիշատակը: Քանի որ Հայոց մէջ յունուարին տարեմուտ սօնելը սեղական չէ, այլ մտած է դրսից. կարելի է կարծել, որ տեղ տեղ հին սովորութիւնը պահելով ժամանակն են փոխել, ուրիշ տեղեր էլ թէ ժամանակն և թէ սովորութիւնն անփոփոխ է մնացել:

Թէ գարնանամտին, որ սովորաբար հեռու չէ և Զատկի օրերից, եղել է հին տարեմտի սկիզբը, այդ տեսնում ենք և ուրիշ աւանդութիւններից, որ պահուել են ժողովրդի մէջ: Զորօրինակ Ակնցիք Զատկի պատերի մէջ երգում են.[2]

«Շնորհաւոր նոր տարի,
Նոր տարի ու նոր բարի»:

Ախալքալաքի փիւղացիք, երբ նոր են դուս գալիս երկիրը մշակելու, հոտովելի մէջ երգում են.[3]

«Արևը գնաց, Միքունքը մնաց,
Զօրանաս, հօտաղ, զօրանաս»:

Միևնոյն ժամանակ ժողովուրդը տարին երկուս է բաժանում՝ գարուն և աշուն. միւս երկու եղանակները, կարծես, ծառայական մասեր են: Դեռ հին երգիչն, Սաեփաննոս, բնութեան փոփոխութիւնների երկու շրջանն է համարում երջանկութեան և թշուառութեան օրեր.[4]

«Աշուն էր, եղեւ գարուն,
Յամաքեցաւ ձիւն սարերուն ....
«Աշուն էր, եղեւ գարուն,
Ցայն անուշ երեկ հաւերուն ....
«Աշուն էր, եղեւ գարուն,
Կանաչաւ երես դաշտերուն .....»

երգելով, վերանորոգութեան յիշատակներն է արծարծում և զուարճանում: իսկ երբ ձմրան արհաւիրքն է մտաբերում, նորա խօսքերն այսպէս են փոխուում.

«Գարուն էր, եղաւ աշուն,
Ու թափաւ թուփ ծառերուն.
Ուռաւ ամպն ի չարևելք,
Ձիւն եբեր ի վեր սարերուն....
«Գարուն էր, եղաւ աշուն,
Վերացաւ վիլքն ադամորդուն .....» և այն:

Երգիչն իբր ժողովրդի ոգուն շատ հաւատարիմ է մնացել. մինչև օրս էլ Ակնցիք իրենց առածների և ասացուածների մէջ, կարծես, միայն տարուայ երկու եղանակն են ճանաչում.[5]

«Գարնան արևը ադուս ու հարսիս վրայ.
Աշնան արևը վհսիս ու աղջկիս»:

կամ թէ՝

«Գարնան եգսէն (յաջորդը) աշունն է»:

Ժողովրդի այսպիսի հայեացքի չափաբաժին է, անշուշտ, և աղանձի (խէճաղ) գործածութիւնը: Աղանձը ոչ այլ ինչ է, եթէ ոչ բոհրած ցորեն, հետևապէս չորացուցած կամ բոհրած ընդեղէններ խառնած, որ շատ տեղ ուտում են չամչով, և Միքինքին տանելն իբրև բաժին են ուղարկում իրենց լաւ բան: Սակայն աղանձի գործածութիւնը, թէև ոչ նոյն ձևով, տեղի ունի և աշնանը: Ցայտնի է, որ քաղի ժամանակ, երբ օրանը դաշտումն է, պիւղացիք սովորութիւն ունին ցորենի հասկերից խարոյկ վառել և երբ բոցն իջնում է, մրկած հասկերը շիռում են ափի մէջ և նոր բոհրած հատիկները տաք տաք ուտում են իբրև աղանձ. այդպիսօք այդ էլ մնացորդ է հին հեթանոսական պատա-

1. Փշրանքներ. 70:
2. Հնութիւնք Ակնայ, Ե. Ճանիկեան. 426:
3. Զաւախքի բուրմունք, Ն. Լալայեան. 57:

1. Նոր ժողովածու, Բ. Պրակ. 9:
2. Հն. Ակնայ 205:

բաղնիքին, թէ պէտքայի չարաճճի տղայոց մի խաղ է, որ ընդհանրացել է, չենք կարող ճշդել: Մեզ պատահական և անհիմն չի երևում այդ: Գարնանամուտին հին յօրենն են աղանձ անում աշնանամուտին նորը: Ժամանակների և իրողութեան այս զուգադիպութիւնն անխորհուրդ համարել կարելի չէ: Գարնանամուտ աղանձն, անշուշտ, յիշեցնում երկրագործական աշխատութիւնների սկիզբը: Չէ՞ որ եկեղեցին էլ ընդունել է սերմնօրհնէքի ծէսը, որի մէջ առ Աստուած ուղղած խնդրուածքի մէջ այս կայ «Հայեաց», ասում է, ի սերմանիս մեր, որ կարողք ես առանց սերման շնորհել հասկս և առանց կերակրոյ լնուլ զքաղցեալս· օրհնեա՛ Տէր, զարտարայս մեր, զի առանց ամենայն ընդհատուց անուցանիցեն զպտուղս իւրեանց»: [1] Այստեղ երկու բան կարող ենք մտածել· կամ եկեղեցին ինքը նորոգել է մի հին ժողովրդական ծէս, կամ հաստատել է այդ ծէսը մշակութիւնների սկզբնաւորութեան ժամանակ իւր հօտին յոյս և վստահութիւն ներշնչելու համար· այսօր ապաքաղաքակիրթ այդ անմեղ ծէսն էլ է մոռացուել: Եթէ գարնանամուտի աղանձն երկրագործական տարեմուտի օրհնութեան առարկան է, պիտի մտածենք, որ աշնանամուտի աղանձը նոյն օրհնութեան պատուէրն է, որ իբրև երախայրիք ընծայուում է Տիրոջ սեղանին, թէև շատ անգամ առանց խանձելու, այլ կալերից բուռ բուռ իւրաքանչիւր աղքատի և անանկի բաժանելով: Օրհնեալ սովորութիւն, որ իսկապէս շահմարանն է երկրի հօգի առատութեան և լիութեան:

Գ.

Ըստ աւանդութեան՝ Արեգը Հայկայ դուստրներից մէկն է· իբրև կանանց կոչումն այդ անունն Հայոց մէջ չկայ· ունինք Արեգնազան անունը, որի երկրորդ մասը՝ Նազան եղել է հին ժամանակ, ինչպէս երևում է Նազինիկ (թերևս Նազանիկ) անունից: [2] Եթէ այդ աւանդութեանն հետևելու լինինք, կարելի է կարծել, որ Արեգ մի պիտուհի էր և թերևս դարման աստուածուհի, թէև այդ մասին որոշ ցուցմունքներ չկան· յայտնի է միայն, որ Արեգ անունով կոչուում էր նաև Հայոց ամիսների առաջին օրը: Բանն այս է, որ հին ժամանակ տարին բաժանուում էր 12 ամիսների, իւրաքանչիւրն 30-ական օրով· կար և մի ամիս 5 օրով, որ կոչուում է Աւելեաց: Իւրաքանչիւր օրը մի ոգու կամ աստուածութեան խնամքի տակ էր և կրում էր նորա անունը· այդպէս՝ հներն օրերին առանձին առանձին անուններ էին տալիս, որոնց թիւն է 30· Աւելեաց օրերն էլ իրենց ջոկ անուններն ունէին: Պարսից մէջ առաջինն, ութերորդ, հնգետասաներորդ և քսաներորդերորդ օրերը Որմզդի խնամքի տակ էին և կոչուում էին նորա անունով և մակդիրներով· այդ չորս օրը յիշեցնում էին աշխարհի արարչութեան մասին և չորս եօթնեակների սկզբներն են, հաւասար մեր տէրունական կամ միաշաբաթ օրերին: [1] Եթէ նոյն կարգով ընթերցել լինինք Հայոց օրերը, կը տեսնինք, որ առաջին օրը կոչուում է Արեգ, ութերորդը Մհեր, հնգետասաներորդը Արամազդ, և քսաներորդերորդը Ծմակ: Այս չորրորդ անունը մեզ կասկածելի և մութն է թուում (գժուար թէ ծանօթ ծմակ բառը լինի)· միւս երեքի մասին կարելի է ասել, որ հեթանոսական պրբութիւնների անուններ են դոցա հետ կարելի է միացնել Անահիտ 19 և Վահագն 27 օրերի անունները, նմանապէս և Երեզհան (թերևս Տիր) 11 և Վանատ (թերևս Վանատուր) 14 օրերի անունները, որով հին Հայոց օրերից եօթը կոչուել են աստուածների անունով: Մնացեալ օրերից չորսը մոլորակներին, եօթը լեռներին, երեքը ծանօթ աշխարհագրական տեղերին, մէկն Արամի և ութն անծանօթ անուններ են: [2] Իւր ժամանակին թերևս յաջողուի մեզ պարզել բոլոր այդ անունների նշանակութիւնն և կապը հնութեան յիշատակների հետ, այստեղ այն միայն յիշելու պէտք ունինք, որ այդ անունները մինչև անգամ պրականութեան

1. Մայր Մաշտոց, 98:
2. Մովս. Խորեն. Բ. 65:

Ժողովրդի մէջ կան նաև նազեր, նազու, նազխաթուն անուններ, որոնց մէջ նազ արմատը թերևս նոյնը լինի:

1. Spiegel. F. Eranische Alterth. III. 667.
2. Ալիշանեան Հ. Գ. Հին հաւատք 145. 109:

մէջ իբրև օրերի կշռումներ գործածական եղած չեն և մեր յիշատակարաններում գոյութիւն ունին իբրև հնախօսական ճեացորդ։ Աչքի առաջ ունենալով, որ Արեգ անունն օրերի ցանկի մէջ առաջին տեղն է, պէտք է կարծենք, որ հին ժամանակ Արեգ ամիսն էլ Հայոց ամիսների շարքում առաջինն էր և, դարնանամուտի հետ կապ ունենալով, տարեմուտի ամիսն էր։

Սովորաբար այս կարծիքն է ճեացել Հայոց մէջ թէ Արեգ ամսի անունն արևի անուան հետ է կապուած։ Արեգունն, կամ արեգունին, արեգջեր, արեգդիմ բառերն իսկապէս և նշանակում են արևային, արևոտ, արևերես տեղ։

Ժդ. դարու մեր վարդապետներից մէկը՝ Վանական, այդպէս է փորձում մեկնել Արեգ անունը, որ թէև դիւցազուհի չէ, բայց թեև հիմնուած է հին աւանդութեան վերայ։[1] «Արեգ, ասում է, որպէս թէ յառնեն ըսյաք.» (կամ) «Արի՛, ասէ, հիւսիսի՛ և մի՛ հարաւ, որ է գարնան ամիսն.» (կամ) «արեգանն, մեծ անկն ասի, կամ լուսոյ անկն։» Այս խօսքերից երևում է, որ Արեգ գարնան ամիս է, մի և նոյն ժամանակ այդ բառն իբրև մասն արեգական խօսքի նշանակում է մեծ կամ լուսաւոր. այս վերջին իմաստին թերևս կարելի լինի մօտեցնել արեգ բառն, եթէ աչքի առաջ ունենանք սանսկրիտ արկա=արև խօսքը, որ նշանակում է վառվռուն, արկ արմաւից, որ է վառել։ Չենք կարող ասել, որ Արեգ իբրև արևի հոմանիշ Հայոց հեթանոսական սրբութիւն էր. սակայն գիտենք, որ արևը կամ արեգակը Մ՚իհրի պատկերն էր. ուրեմն Արեգ կամ մի տարբեր աստուածութիւն է, կամ Մ՚իհրի մակդիրներից մէկը։[2]

Դ.

Ժողովրդական բարբառի և աւանդութիւնների մէջ արև, արեգակ շատ է ասւում. իսկ արեգ, որքան գիտենք, պատահում չէ ոչ իբրև արևի հոմանիշ և ոչ իբրև առանձին բառ։ Այն խօսքերը, որոնք արեգակն բառի նման են երևում կազմուած, մասերի բաժանուել կարող են և իւրաքանչիւր մասն էլի գործածական է լեզուի մէջ. ղօրօրինակ փայլակն, փայլ, կայծակն, կայծ, աղբերակն, աղբիւր և այլն։ Արեգակն խօսքի համար այդ ասել դժուարին է, եթէ վերը բերուած բարդութիւնները նկատելու չլինինք (արեգ-ջեր, արեգ-դէմ և.ն.)։ Իսկ եթէ թոյլ տալու լինինք արեգակն բառի նոյնութիւնը արեգի հետ, այն ժամանակ կը տեսնենք, որ Արեգի գաղափարը շատ ընդարձակ նշանակութիւն ունի ժողովրդի լեզուի մէջ։ Ցայտնի է, որ արեգակն արդարև իբրև աստուածային յատկութիւն ունեցող բան հին ժամանակ վսեմ և նուիրական էր բանաստեղծութեան մէջ. արդի ժողովուրդն էլ, իր երգերի և առասպելների մէջ շատ բարձր յատկութիւններ է ընծայում նորան։ Մինչդեռ լուսինը միայն ցրտութեան պատճառ է համարուում. արեգակն է, որ աղատութիւն է տալիս բնութեանը, բանալով նորա սառուցեալ կապանքները.

«Սեղան սատաճէ, ոտքերն արծաթէ,
Լուսնակն ի փակ, ըանկիքն արեգակ»։[1]

Հայոց մայրերն օրօրոցի երգերի մէջ աւելն են ձանձրացում իրենց մանուկների ուշադրութով ընկեր, օթևան և պաշտպան.

«Դիշերն օրօրում խեթ ձէթ պէտ ասդիերայ,
Ցերեկն օրօրում խեթ ծաղկած արեգական...
Վէրի մաքին քէ ծիծ տէր.
Լուսնեակ քէ դարդար ասէր.
Արեգակ քէ դաղրական էլնէր»։[2]

այսպէս է մրմնջում Վանեցի մայրն, իր զաւակին յանձնելով բնութեան խնամքին. իսկ Ակնցին օրհնում է մատաղ սերնդին, արևի պարգևած առաւտութիւնները ցանկալով նորան.[3]

«Ապրիս դուն հօրով մօրով,
Ու լցուի սրտիկդ արեւով»
Սրտիկդ արեւով լցուի,
Մեր դառուին կարմիր խնձորով.

---

1. Տես Հայկազ. բառարան Արեգ բառը։

2. Արեգ անուան բացատրութեանը թերևս նպաստեն և հետեւեալ յատուկ անունները. Արեգ դուռն (Ագաթ. ծէ)։ Արեգունի գաւառ, Արեգնի վանք (Սիսական 56, 525, Սիսուան, 64, 470)

1. Մանանայ, Գ վ. Սրուանձտեան. 294։

2. Վանայ Սազ, Գ. Շէրենց. 82. 85։

3. Հնութիւնք Ակնայ. 408.

Ո՛վ անցնի, վարդէն առնէ,
Ո՛վ դառնայ, կարմիր խնձորէն»:

Դիտենք, որ արեւ Հայոց լեզուի մէջ նշանակում է կեանք. «երկէն արեւ լինիմ» «շատ արեւ» նոմանիշ են երկարակեաց խօսքին. երդման, սիրոյ և գուրգուրանքի դարձուածներ են «արեւս վկայ, արեւիդ մատաղ, արեւդ սիրեա» և այլն. յուսահատութեան և ախորժութեան նշան է ասել «արեւս մարաւ», «իմ արեգակս խաւարեցաւ», Թշուառին և դժբաղդին արեւատեսո անուանել, ինչպէս որ վաղամեռիկ մեկին էլ հին ժամանակ «արեւալէտ վախճանեալ» են ասել: [1]

Ժողովրդական մի երգից երեւում է, որ գարնան ժամանակ ուրախանալու փոխարէն ախորժում է. նորան գարնանային արեւն երեւում է իբրեւ մեզ ու մառախուղ.

«Գանչէ, կռունկ, կանչէ, քանի գարուն է.
Ղարիպներու սիրտը դունդ դունդ արուն է,
Քու լէջած տեղդ չայիր չիման է,
Աշխարհիս արեգակ ինձի դուման է»: [2]

Այս է թերեւս պատճառը, որ ժողովրդի մէջ ամենալաւ բարեմաղթութիւնն է ասել «արեգակով կշտանաս» և գուշակել թէ, «ձեր տունն արեւվկուաւ, ձեր սեղան կարմիր խնձորով»: Երկրի մշակութեան ժամանակ արեգակի օգնութեանը մեծագոյն կարօտ ժողովուրդը, բնական է, որ նորա ծագումն համարում է իբրեւ վաղ շաբաթուայ բացումն.

«Բաղնիս էրկնուց ընցաւ,
Էրկնուց դռներ բացուաւ.
Ձեր սեղան օսկի խնձորով
Ձեր բակ արեւու շաղով լցուաւ»: [3]

Այս ամենից երեւում է, որ եթէ Արեգ նոյն է ինչ որ արեգակն, այն ժամանակ այդ ամիսն է, որ հալեցնում է սառուցները, ջերմութիւն է տալիս երկրին, կենդանութիւն, լուութիւն մարդիկներին, տունն ու բակն աւելի պայծառութեամբ և սեղանը կարմիր օսկի խնձորով լցնում: տարուայ բաղդն ու վիճակը որոշող ուրախարեր ամի՛ս, որ չէր կարող բնութեան գրկում ապրող հին հեթանոս Հայերի կեանքի մէջ նորոգութեան շքեղանի սկիզբն չհաղորդել:

Այդ աւելի լաւ տեսնուում է և տեղ տեղ պահուած ուրիշ սնոտիապաշտութիւններից. այսպէս օրինակ՝ Ալաշկերտցիք մի սէն հաւատացունին, թէ կան չար ոգիներ, որոնք ձմեռն իրենց գոմերումն են բնակում և ձիաստում են իրենց կովերին, եղներին, գոմէշներին և այլ օգտակար ու պիտանի կենդանիներին. այդ չար ոգիների անունն է շուռտ: Ուրիշ գաւառներումն էլ յայտնի է շուռտի գաղափարը. սակայն Ալաշկերտցոց մէջ այդ չար ոգին փետրվար ամսի տէրն է: Մարտի մէջ (Արեգ) նոքա կատարում են շուռտանոցի ծէսը, այն է փետրուարը վռնտում են և մարտը ներս են առնում:

«Շուռտ ի դուրս
Մարտ ի ներս»:

Այս է ծէսի նպատակը: Եթէ յաջողեցան շուռտը տանից հեռացնել և մարտը ներս առնել, բաղդը կը մնայ իրենց մէջ և անով տեղով երջանիկ կը լինին (գօվլաթը տուն կոտպայ և կը մնայ). եթէ չկարողացան, շուռտն իբրեւ չար և վնասակար ոգի կըսպառէ տան ամեն բարին, և աղքատութիւն ու խեղճութիւն կը բերէ: [1] Թէ ո՞րպիսի հեթանոսական հայեացքների և ծէսերի մնացորդ է այդ շուռտահանքը, դժուար է այժմ որոշել. բայց որ հեթանոսական է, և շատ սերտ կապ ունի երկրագործ և խաշնարած ժողովրդի կեանքի ու գաղափարների հետ, և միանգամայն որոշում է ձմրան վախճանի և գարնանամուտի նշանակութիւնը, այդ շատ ակներև է: «Շուռտ ի դուրս, մարտ ի ներս» ոչ այլ ինչ է եթէ ոչ մի բնական ձայն ցնծութեան, որ հեռանում է մաշող, սպառող ձմեռն, և գալիս է զուարթարար գարունն, երբ պիտի «բանն աբեւու շաղով և սեղանն օսկի խնձորով լցուի»: Իբրեւ երկրագործ և խաշնարած ժողովուրդ՝ Ալաշկերտցին այդ բնական ձայնն հանում է Մարտի (Արեգի) ամեն մեկ օրուայ համար:

1. Հին տաւատք. 90:

Ուշադրութեան արժանի են եւ յատուկ անուններս Արեւիք կամ Արեւինք (Արեւուց տուն) գաւառ, Արեւոց կամ Արեւու բլուր, Արեւէս գիւղ, եւ Արեւիկ կամ Արեւ անձնական անուն (Զենոբ. 41. Սիսական 208 եւ 174):

2. Գաւախքի բուրմ. 34:

3. Մանանայ, 299:

1. Արարատ 1895 յունիս:

«Մարտ վից՝ ձուն վըր ձան ցից։
«Մարտայ ուԹին՝ սարեկ վըր բլին։
«Մարտայ ընկին՝ լակլակ վրը ընկին։
«Մարտի քսան՝ լծքեր յարտեր պապանձ»։[1]

Ե։

Գարնան սօնի յիշատակն Արեգ ամսի մէջ խառնուել է ծաղկազարդի սօնի հետ։ Մեզ յայտնի չէ Թէ ե՞րբ և ո՞վ կնքեց այդ սօնի անունը, որ աւելի ուղիղ գործ է ածուում իրրև ծառազարդաց և հասկանալի է ողջոյնի կամ արմաւենեաց սօնի համար։ այդ է, Քրիստոսի Երուսաղէմ գալու յիշատակը։ Սակայն ո՛վ և կնքած լինի ծաղկազարդ անունը, աչքի առաջ է ունեցել, անշուշտ, գարնան բացուիլը։

«Մարտն կուգար ծաղկներով
Յերկնից հաւերն կարդալով»։

երգել է Մուրատ Նիկարն, յիշելով «բարկ արեգակի» ծագելն և «սատիկ ձնելի» հալուելը։[2] Հայոց երկրի համար Արեգ (Մարտ) ամիսն, ի հարկէ, ծաղկաբեր ամիս է, և օտարոտի չէր կարող լինել ծառազարդաց անունը փոխել ծաղկազարդ։ Այդ ժամանակ արդէն դուրս եկած են լինում ձնծաղիկն ու մանուշակը, շատ տեղ նոյն իսկ ծառերն էլ դարդարուած են լինում իրենց ծաղիկներով, բնութեան այս ծաղկազարդելն է, որ ոգևորութեամբ նկարագրում է Դաւիթ Սալաձորեցին։[3]

«Նախ ձնծաղիկն ու ջրիկատաւ բարդն
ու խաժուկն յառաջագոյն։
«Սոքա չորան միաբանին, ու ձայն ածեն
ծաղկներուն։
«Ծաղկունք, զարթիք ի խոր քնոյն, քանի՞
պառկիք ներքև հողոյն։
«Զարթիք, աշխարհս ծաղկեցուցէք,
բիւրք ի բիւրոց անթիւ անհուն...»։

Ծաղկազարդին եկեղեցին ուռի կ՚օրհնուի։ օրհնած ուռը տարուում է տներն և պահուում ամբողջ տարի իրրև տան մէջ բարի բերող և պաշտպանող մի նշան։ Այդ օրն երրայեցւոց մանուկների նման հայոց երեխաներն էլ ցընծութեան ազատական են արձակում։ բայց նոքա, որ ոչ երրայերէն են ճանաչում, ոչ ողջոյնեան սօնի գիտեն, իրենց համար առանձին ձէս ու հանդէս ունին, որ ազգային է և թերևս նոյն իսկ քրիստոնէութիւնից էլ հին։ Ամեն մի երեխայ ունի իրեն ձեռքը մի մի շրոշրոնակ, կարկաչայ փայտից շինած տարօրինակ ձև ու կազմութիւն ունեցող կոչնակներ, որոնք երեխաների ձեռքով շարժուելով, խիստ սուր ու բութ ձայներ են հանում և մի տարօրինակ ներդաշնակութիւն են կազմում այն մանկական երգերի հետ, որոնք հնչում են այն օրն ամէն մի տան առաջ։ Եթէ երրայերէն մանկունք ազատական էին «Ոսաննայ, օրհնեալ եկեայ անուամբ Տեառն» Հայոց մանուկները, կարծես, թռչունների կարկաչն ու ճռուողիւնն յիշեցնելու համար իրենց կարկաչաձներն են նուագում և ամեն տանից ձու ժողովում Զատկի համար։

«Կարկաչայ կարինկաչայ։
Սև մողի սև սև մողի,
Ղուկ առէք, մամ առէք,
Տասուերկու պատարագ առէք։
Իմ կարմիր հաւկիթս դուս բերէք»։

երգում են նոքա։ և երբ իրենց բաժինն առնում հեռանում են մինչև հետևեալ տունը, ճանապարհին նուագում են իրենց շրռաշրռնակը, կարծես, ծագրել ուղելով իրենց դանդաղ ուղեկիցներին։

«Շրռաշրռ շրռաշրռնակ։
Ասծու հալալ պիպեռնակ։
Ընկերս ընկաւ ծովը ծիրանի»։

Հրաժարուում ենք որ և է բացատրութիւն տալու մանկական այս երգերին։ Բաւական է միայն յիշել, որ այդ խաղերը ոչ մի կապ չունին բուն եկեղեցական սօնի՞ հետ և ժողովրդական են։ Տարակոյս չունինք, որ գաքա և գարնան սօնի և տարեմտի հին յիշատակներն են պահում իրենց մէջ։[4]

Զ։

Արեգ ամիսն յիշեցնում է մեզ և մի այլ նշանակութեան մասին։ Աւելի քան հազար

1. Բագրեւանդ Ջրաբ. գաւառ, Ս. Հայկունի, 248 եւն։
2. Նոր ժողովածու, Բ. Պրակ. 5.
3. Նոյն 68.

4. Տարգսեան Ս. Ագուլեցւոց քաքաւան. Բ. 27 յիշում է տեղական ծէսը. նկարագրում է Ագուլեցւոց կարկաչան եւ ծաղծղոնակը (ծղծ ան ակ եւ փ ո ռ ո ւն)։ Նարկաչայի երգի մի այլ յօրինուած տես Փշրանքներ եր. 71։

վեց հարիւր տարի սորանից յառաջ Հայոց հոգևոր փրկութեան երկունքի օրերն էին այս օրերը։ Ս. Գրիգոր Լուսաւորիչ քարոզում էր Տրդատ արքային Քրիստոսի աւետարանն, ինքը կրելով պէսպէս անտանելի տանջանքներ։ Աստուծոյ մարդու անյողդողդ հաւատը և համոզմունքների փեսմութիւնն ադամանդի կարծրութեան չափ անգծելի և անաղարտ մնացին այն ժամանակ տակաւին հեթանոս արքայի բռնութեան առաջ, որն ինքն էլ իւր նախնեաց սրբութիւնները պաշտպանելու ոգևորութեամբ էր գործում։

«Այր մի օտարական և անաշխարհիկ եկիր յարեցար ի մեզ, և գիմիդ իշխես պաշտել զաստուածն զոր ես ոչ պաշտեմ» հարցնում էր Ս. Գրիգորին թագաւորը, շատ բնական համարելով այն, թէ ով ուր ծառայում է, նորա աստուածն էլ պիտի պաշտէ. մի սիսալ համոզմունք, որ յատուկ է աշխարհային մոլորութիւններին, յատուկ է նոցա, որոնք հոգևոր կեանքի վերայ նայում են իրրև աշխարհային բարիքի վերայ։ Սակայն այդպէս չէ ճշմարտութիւնը։ Այն օրից, երբ ճշմարիտ լուսոյ ճառագայթները Golgothայի բարձունքից ծագեցին «ի խաւարի նսեմելոցս» սրտերի մէջ, այն օրից արդէն ամէնքը գիտէին, որ «զԱստուծոյ պատիւն և զպաշտօն ոչ ուրեք վայել է տալ», գիտէին, որ «ծառաները պիտի հնազանդ լինին իրենց մարմնաւոր տէրերին»։ գիտէին և համոզուած էին, որ նոյն իսկ այդպիսի մարմնաւոր ծառայութեան և հնազանդութեան համար նոցա վարձատրողը միմիայն Աստուած է։ «Ես քեզ միամտութեամբ վաստակեցի, ասում է թագաւորին Ս. Գրիգոր, և ինձէն զիմ վաստակս ապահով ոչ արարի, զի այնմ տէր է հատուցանող բարեաց»։

Անշուշտ թագաւորին քաջ ծանօթ էին Ս. Գրիգորի հաւատարմութիւնն և անձնուիրութիւնը մարմնաւոր ծառայութեան մէջ. բայց երկուսի պայքարն այլ ևս այդ մարմնական աշխարհի սահմանների մէջ չէր։ Մէկն ազազակում էր թէ պէտք է պաշտօն մատուցանել «միոյ Անահատայ սիկնոջն, որ է փառք ազգիս մերոյ և կեցուցիչ, որով կեայ և զկենդանութիւն կրկ երկիրս Հայոց»։ միւսն ընդդիմախօսում է համարձակ թէ «փոխանակ Աստուծոյ, յորոյ ի բարիսդ վայելէք, պաշտէք զփայտեղէնսդ և զքարեղէնսդ և զոսկեղէնսդ և զարծաթեղէնսդ, զոր Աստուծոյ կարգեալ է ի սպաս և ի պէտս և ի փառաւորութիւն մարդկան»։* Քրիստոսի պաշտօնեի խօսքերն առաւել ևս զօրաւոր էին հնչում հեթանոսների ականջում, երբ լսում էին նորանից թէ, «մեր կեանքս չէ յուսահատութեամբ, զի պաշտեմք զկենդանին», որ կարող է զկենդանութիւն տալ մեզ, յորժամ և կամի, զի թէպէտև մեռանիմք, կենդանի եմք»։

Ջրեր էր թագաւորը խրոխտաբար անարգում Ս. Գրիգորի պաշտած կրօնը. դրեր էր նա հետզհետէ զօրացնում իւր սպառնալիքները, հեթանոսական հնարագիտութեան բոլոր տանջանարանները պատրաստելով։ Աստուծոյ արիագոր ծագել էր Հայոց համար և նորա խոստովանող կարապետն անօրինակ համբերութեամբ յառաջ վարել իւր լուսաւոր վարդապետութիւնը, հրաւիրելով մեր հեթանոս նախնիքներին գրկաբաց ընդունելու այն ճշմարիտ յոյսն ու ջերմութիւնը։ Վերջին ձիգը թափեց հեթանոսական կարճամտութիւնը բազմաչարչար նահատակին ընկճելու. բայց ո՛վ զարմանք. «Թէպէտև ընկալան զտանջանս իւրաքանչիւր որ ի սրբոցն առաջնոց, ասում է ս. Յովհան Ոսկեբերան Լուսաւորչի ներբողի մէջ, այլ փոքու ինչ և նուազագունք. սոցունցաւ Նսայիաս, այլ ի միում վայրկենի. զլխատեցաւ Յովհաննէս, այլ ի քթթել ական. քարկոծեցաւ Ստեփաննոս, այլ առժամայն իսկ. խաչեցաւ Պետրոս, այլ արագ կատարմամբ. սպանաւ և Պաւղոս, այլ ի նմին ժամու. չարչարեցան մարտիրոսքն պէսպէս հնարիւք, բայց ամենեցեան ոչ միով օրինակաւ, այլ զանազանապէս ըստ պատահման ժամանակին և հնարից բռնաւորացն. իսկ սրանչելիս այս վկայ եւ հայր անաղ քան զմիւսս եւ գիտող սրտից մարդկան վերատեսուչդ հրաշիւք. վասն զի զամենայն տեսակս չարչարանաց, զոր ամենեցեան ընկալան, իբրև յօտարի տրուք մարմնի՝ յանձն իւր ընդ բաջութեամբ»։[1]

* Ագաթանգեղոս, Ե. Զ. եւլն։

1. Տոփերք Հայկակ. Ա.

Այս անընկճելի ս. խոստովանողին վիճակուեցաւ մինչև իսկ փակուիլ նաև Արտաշատու խոր և խաւարչային վիրապի մէջ։ Հայոց ապագայ լուսատուն երկար երկար տարիներ [1] արգելուեցաւ այդ տարօրինակ բանտի մէջ տքնելու և երկնելու Հայոց Հոգևոր վերածնութեան ապագան։ Երկնաւոր հրաւիրակի ձայնին հետևելով, նա ընդունեց, ի վերջոյ, կոչումն հոգևոր մշակի, երկրագործի, սերմանացանի, որի քրտանց ասպարէզն էր Հայոց երկիրն, և աշխատութեան նպատակը՝ մի ամբողջ ազգ ու աշխարհ ազատել հեթանոսական կուրութիւնից։ «Ելլ սերմանեա՛, սերմահա՛ն քաջ, զսերմանիս աւետարանին լուսոյ, ել տնկեա՛, մշակդ քրտնեալ, զորթն կենաց, զողկոյզն ծաղկեալ, զմշակեալն ի հօրէ զարիւն խաղողոյն վկայեալ սուրբ աջովդ» կոչում է երկնային ձայնը ս. Հռիփսիմեանց բերանով խոր վիրապի արգելականին։ [2] Բաղդատր աշխարհ, երջանիկ վիճակ, որ, կարծես, կարողացել է միայն ս. խոստովանողի մեծ համբերութեան օրինակն ղգենուլ և դարեր շարունակ ապրել ու գործել այդ համբերութեան ոգւով։

Երբ մենք այն մեծ խոստովանողի Մաճն ի վիրապն յիշատակը կատարելու բարեբաղդութիւնն ենք վայելում, արդեօք մի վայրկեան մտածեցի՞նք զգացի՞նք, որ 1600 տարի յառաջ «այր մի անաշխարհիկ և օտարական» կրեց Հայոց վերածնութեան և վերակենդանութեան այն ծանր երկունքը, որի շնորհիւ կեանք ու կենդանութիւն վայելեց Հայ ազգը։ Եթէ զգացինք, ապա և պարտք ունինք չմոռնալու նոյն համբերութեան օրինակը և երախտապարտ հոգւով պահպանելու նորա անօրինակ քրտանց արդիւնքը։ Ժամանանք այն պատգամը, որ Յոսէպիոսէ ընդունեց իբրև յայտնութիւն Աստուծոյ. [3] «յղեսջի՛ք դուք ի քաղաքն Արտաշատ ածել անաւր զկապեալն Գրիգորիոս։ Նա ևկեսցէ ասացէ ձեզ զնոր ցասցող ըժշկութեան»։

Ս. Ա.

1. Ագաթանգեղոս ԺԱ. ԽԲ.
2. Մ. Խոր. Ներսող Հռիփսիմեանց.
3. Ագաթ. Խ.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

— Լևոն ԺԳ. պապը կարևոր է համարել մի նոր քննութիւն և սահմանագրութիւն հրատարակելու արգելուած գրքերի (ինդէքս) վերաբերութեամբ։ Այդ սահմանագրութեան յառաջաբանում պապը խօսում է մեր ժամանակուայ «անսանձ գրչամոլութեան և վատ գրքերի մեծաքանակ տարածման մասին»։ Վնասակար գրքերի մասին իրենց գաղափարը կարդացել են արդէն իսկ Ալէքսանդր Զ., Լևոն Ժ., Պօղոս Դ. և այլ պապերը, սակայն ժամանակների փոփոխութեան պատճառով այժմ ևս կարևոր է մի նոր քննութիւն և նոր ուղեցոյց վնասակար գրքերի վերաբերութեամբ, ուստի և ինքը 29 յօգուտածից բաղկացած մի նոր սահմանադրութիւն է տալիս՝ արգելուած գրքերի տեսակները որոշելու համար։

Պապական այս սահմանագրութիւնը տասն գլխի է բաժանուած, որոնք են. ա) արգելումն առաքելոց գրքերի, հերձուածողների և այլ մատենագիրների շարադրութիւնների. բ) արգելուած հրատարակութիւններ և թարգմանութիւններ ս. Գրոց. գ) արգելումն զանազան ազգային լեզուներով թարգմանութիւնների. դ) լկտի բովանդակութեամբ գրքերի արգելումն. ե) արգելումն այն մանուածոր հրատարակութիւնների, որոնց մէջ սրբազան իրեր են ծաղրուում. զ) սրբոց պատկերների և Թողութեան Թղթերի մասին. է) աղօթից և ժամագրքերի մասին. ը) պարբերական հանդէսների և Թերթերի մասին. թ) արգելուած գրքեր ունենալու և կարդալու իրաւունքի մասին. ժ) մատենութիւն վնասակար գրքերի գոյութեան մասին։

Այս գլխների մէջ առանձինն յիշատակուած են արգելուած գրքերի տեսակներն և բովանդակութեան մասին։ Հետաքրքրական է որ արգելուած գրքերի մէջ են բոլոր Աստուածաշնչի ընկերութեանց հրատարակած և ոչ կաթոլիկների ձեռքով թարգմանուած ս. Գրքերը։

Այս որոշումներից յետոյ հինգ գլխների մէջ, որոնք բաժանուած են 19 յօգուտածների, պապը հոգևոր դրաբանութեան կանոններն է սահմանել։

— Այս տարուան մայիս ամսին լինելիք եկեղեցական ժողովի (կոնսիստորիում) համար պատրաստութիւններ են տեսնուում։ արդէն իսկ տեղեկագրեր են ներկայացուած պապին մի քանի քրիստոնեայ վկաների մասին, որոնց պապը պէտք է սրբութեան աստիճանին արժանի հրատարակէ։ Զարմանալի չէ՞ արդեօք, որ մեզաւոր մարդիկ են

քրիստոնեայ վկաներին սրբացնողներն և այն էլ մեր դարում։

Նոյն կոնսիստորիայում ծիրանաւորութիւն պիտի տայ պապը մի քանի Ֆրանսիացի և Իտալացի եպիսկոպոսներին։

— Լևոն ԺԳ. զբաղուած է այժմ մի նոր հովուականով, որ պիտի ուղղէ Հիւսիսային Ամերիկայի եպիսկոպոսներին։ Այս տարի Ամերիկայի եպիսկոպոսները պիտի մի ժողով գումարեն առաքելական նուիրակ Մարտինելլի նախագահութեամբ. պապը կամենում է որոշել այն խնդիրների սահմանները, որոնցով պիտի այդ ժողովն զբաղուի։

— Կանադայի կաթոլիկների մէջ դպրոցական խնդրի վերաբերութեամբ տարաձայնութիւններ են ծագել, ուստի պապը մի նուիրակ պիտի ուղարկէ այդ խնդիրը քննելու համար։

— Հիւսիսային Ամերիկայում կաթոլիկների թիւն հետզհետէ աճում է, մանաւանդ Իռլանդիայից, Իտալիայից, Լեհաստանից և Փոքր—Ասիայից հասած գաղթականների շնորհիւ։ 1896 թուին կատարուած մի վիճակագրութեան հիման վրայ կաթոլիկներն հաշուում են 8,271,309 հոգի, իսկ կաթոլիկ թերթերի ասելով՝ այդ թիւն աւելի ևս մեծ է։

— Այս տարի մարտի 1-ին Լևոն ԺԳ. առանձին շքեղութեամբ է տօնել իր գահակալութեան 19-րորդ տարին։ Ի պատիւ այդ տարեդարձի պապի ծննդավայր Կարպինէտօ քաղաքում կանանց մի հիւանդանոց է բացուել յատկապէս Լևոն պապի միջոցներով։ Հիւանդանոցը կառուցած և կահաւորուած է գիտութեան նորագոյն պահանջներին համաձայն։

— Գերմանական ազգային ժողովում քննութեան է առնուել կառավարութեան առաջարկը նաւատորմիղը զօրացնելու, կաթոլիկ կուսակցութիւնը, որ կոչուում է կենդրոնի կուսակցութիւն, պայման է դրել ընդունելու կառավարութեան առաջարկն, եթէ յետ առնուին 1872 թուին յիսուսեաններին Գերմանիայից արտաքսելու օրէնքները։ Հեռագիրն արդէն հաղորդեց, որ ազգային ժողովը մերժել է գրամ տալու նաւատորմիղի համար, ուրեմն կենդրոնը կըրկին ցոյց է տուել իր մեծ ոյժը։

— Ռուսաց կառավարութեան վատիկանի դեսպան Իզվոլսկու վոխանակ նշանակուել է Զարիկովը, որ ցարդ ռուսաց տէրութեան ներկայացուցիչն էր Բոլղարիայում։ Կաթոլիկ թերթերը շատ են ափսոսում այդ փոխոխութեան վրայ, որովհետև շնորհիւ Իզվոլսկու միայն պապի և ռուս կառավարութեան յարաբերութիւնները բարեկամական գարձան։

— 1900 թուին քրիստոնէութեան յօբելեան տօնելու համար մեծ պատրաստութիւններ են տեսնուում Հռոմմում։

— Ցայտնի է՝ թէ ի՞նչ մեծ գեղարուեստական և հնագիտական հարստութիւն ունի Վատիկանը. այժմեան պապն ևս իր նախորդների պէս սիրահար է գեղարուեստի։ Շնորհիւ պապի առատաձեռնութեան վերանորոգուած է այժմ Բորջեաների անունով կոչուող սրահը, որի բացումն տեղի է ունենալ փետրուարի վերջին։

— Սերբիայի կառավարութիւնն մի յատուկ պատգամաւոր է ուղարկել Հռոմմ պապի հետ Սերբիայի կաթոլիկների մի դաշնադրութիւն (կոնկորդատ) հաստատելու համար։

—Մեծի պահոց օրերին ֆրանսիական եպիսկոպոսները չրջաբերականներ են ուղղել իրենց թեմերի ժողովրդին, որոնց ցոյց են տալիս այն ուղին, որով կարող են նրանք պահպանել իրենց կաթոլիկութիւնը ժամանակի հանգամանքների հետ կռուելով։ Հին քրիստոնեայ եկեղեցու այս գեղեցիկ սովորութիւնն ափսո՜ս որ հետզհետէ վերանում է առհասարակ արևելեան եկեղեցիներում, ու դեռ մեծ կարիք կայ քրիստոնեայ վկաների հաւատը զօրացնելու համար։

— Պանայիա Կապուլի։ ահա այն նոր ուխտատեղու անունն, որ կաթոլիկ եկեղեցին անցեալ տարուան մայիսի 15-ին սրբագործեց։ Շատ հետաքրքրական է այդ ուխտատեղու ծագման պատմութիւնը։ Կաթոլիկ կոյսերից մին, Կատարինա Էմմերիխ, որ յայտնի է իր տեսիլներով և որին կաթոլիկներն անգամ մեծ հաւատ չէին ընծայում, տարիներ առաջ իր տեսիլներից մէկում յայտնել էր, որ սուրբ կոյսն իր կեանքի վերջին 9 տարին Եփեսոսի մօտ է անցրել, ուսկից և երկինք է վերացել։ Աստուածածնի այդ բնակութեան վայրը գտնուել է Եփեսոսից դուրս մի լերան ստորոտում, ուր ապա նորա անուան նուիրուած մի տաճար է կանգնած։ Այս հիւանդոտ կոյսի երևակայութեանց ու զառանցանքների վրայ երկար ժամանակ ոչ ոք ուշադ չէր դարձրել մինչև 1891 թ. երբ Ձմիւռնիոյ կաթոլիկ «հոգորմած քոյրերի» մայրը հետազոտութիւններ սկսել տուաւ սուրբ կոյսի այդ բնակավայրը գտնելու համար։ Այդ ցանկալի վայրը գտնուեցաւ ճիշտ մի այնպիսի տեղում, որպիսին Էմմերիխն էր նկարագրել և չը նայելով կաթոլիկ եկեղեցու բարձրաստիճան առաջնորդների անհաւատութեամբ վերաբերուելուն, այսու ամենայնիւ այդ հին աւերակ մատուռը նորոգուեցաւ և այժմ մեծ ուխտատեղի է։ Պանայեա կոչում են յոյներն սուրբ կուսի ամեն մի տաճարը, իսկ կապուլա թուրքերէն գափու = դուռն է յունարէն վերջաւորութեամբ, այնպէս որ այդ սրբավայրն իսկապէս կոչուում է «սուրբ Աստուածածնի տաճար դռնով»։

Կաթոլիկ եկեղեցին նոր սրբեր և սրբավայրեր ստեղծելով կարծում է արգելք որ մարդիկ աւելի

կը սրբանան, թէ՞ իւր արդիւնքների համար նորա-նոր դներ է բանում։

— Մասոնների գաղտնիքներն ի վեր հանող միսս Վոգանը երեք ամիս լռելուց յետոյ իւր չիշատակարանի տասնևչորսերորդ տետրն է հրատարակել, որից այդ դիւական օրիորդի երևակայութեան հարստութիւնն է երևում։ Սկզբում այնպես էր թուում, որ կաթոլիկ եկեղեցին համոզուեցաւ, թէ այդ օրիորդի պատմութիւնն և ի վեր հանած գաղտնիքներն կեղծիք էին։ Այս խնդրի քննութեան համար որոշուած յանձնախումբն այժմ մի բացատրութիւն է հրատարակել, որի մէջ յայտնում է, թէ իւր քննութիւնների վրայ հիմնուելով չէ կարող ոչ հաստատել և ոչ մերժել այդ օրիորդի կաթոլիկ դառնալ ու նրա մերկացումների ստուգութիւնը։ Պարզ է, որ դեռ ևս կամենում են կեղծիքներով մրցել մասոնականութեան դէմ և կաթոլիկ ժողովրդին սովորական անտիապաշտութեան մէջ պահել։

ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ։

—

— Հելլէն ազգն ու եկեղեցին մեծ տագնապի մէջ է։ այսօր նա իբրև մի մարդ կռուի է դուրս եկել Տաճկի դէմ իւր արիւնակիցներին ու հաւատակիցներին պաշտպանելու Կրէտէ կղզում։

Մենաստաններում ճգնող կուսակրօններն անդամ կամաւոր զինուոր են գրուում անհաւատների դէմ կռուելու համար։ Կրէտէում արդէն իսկ եկեղեցականներն վաղուց հետէ ապստամբների հետ են, իսկ վանքերն ու մենաստանները տեղի են պաշար ժողովելու և ապաստանարանի։

— Երուսաղէմի պատրիարգի աթոռը թափուր է, այժմ կուսակցութիւնները մրցում են միմեանց հետ իրենց թեկնածուների համար։ Յոյն ազգի գրգռուած դրութիւնից գուշակում են, որ այդ աթոռի վրայ ռուսաց հակառակ մի թեկնածու կը բազմի, այս մասին երկարօրէն խորհրդածութիւններ է անում «Նովոյէ Վրեմիայի» Կ. Պօլսի թղթակիցը։

— Ռուսաց եկեղեցական բարձր իշխանութիւնն առանձին ուշք է դարձնում եկեղեցիների սակաւութեան վրայ և ջանքեր է անում տէրութեան ու մասնաւորների օժանդակութեամբ եկեղեցիների թիւը բազմացնելու։

— Ռուսական թեմերի առաջնորդներն առանձին եռանդ են ցոյց տալիս քարոզչութիւնը զօրացնելու։ Բազմաթիւ այլադաւան, հեթանոս և աղանդաւոր ռուս հպատակներին մի գաւանութեան բերելն է այդ քարոզչութեան նպատակը, սակայն ցարդ քիչ յաջողութիւն ունենալով՝ այժմ այդ անյաջողութեան պատճառներն են աշխատում բառնալ։

— Մի ժամանակ ռուս մամուլը ձայն բարձրացրեց հնագաւան ռուսների իրաւունքներն ընդլայնելու մասին. մի քանի թերթեր իրաւամբ նկատեցին, որ այդ ուղղափառ ռուսներն աւելի քիչ իրաւունքներ են վայելում, քան թէ հեթանոս սիբիրացի ցեղերի կրօնականները։ Այժմ այդ խնդիրը կրկին լռութեան է տուած, մանաւանդ որ երկկողմի եկեղեցականներն ևս չը մասնակցեցին բանակռուին և ոչ մի միտումն դէպի հաշտութիւն ցոյց չը տուին։

— Ռուս հնագաւանները (ստարօվէր) ապրում են Նիժնի-Նովգորոդի, Սարատովի և Սամարայի թեմերում. առաջինում նրանց թիւն է 70,000, երկրորդում՝ 52,000, իսկ վերջինում՝ 81,000 հոգի. դրանք բազմաթիւ են և Վեատկայի թեմում՝ (72,000), Շերնիգովում՝ (50,000), Պոլոցկում՝ (82,000), Իրկուտսկում՝ (30,000), Տոբոլսկում՝ (55,000) և Տոմսկում՝ (82,000)։ Հնագաւանների. Ամենից մեծ բազմութիւնն ունի Դոնի թեմը, ուր նրանց թիւն է 106,000։ Մինչդեռ հնագաւաններն իրենց թիւը 8—10 միլիոն են հաշուում, նրանց իսկական թիւն երևի 3 միլիոնից չէ անցնում։

— Բալկանեան թերակղզու վրայ դեռ ևս շարունակուում է եկեղեցական կռիւը։ Բոլղարները մաքեդոնական թեմերն հետզհետէ խլում են տիեզերական պատրիարքի իշխանութիւնից. վերջերս սուլթանը կրկին 3 թեմ է խոստացել բոլղարներին։

— Ռուսաց վանքերի թիւն այժմ հասնում է 742-ի, որոնց մէջ 42,940 վանական կայ։ Այր մարդկանց վանքերի թիւն է 507, որոնց մէջ 7464 միաբան և 6152 վանական եղբայրներ են ապրում։ Կուսաստանների թիւն է 235, ուր 7566 միաբան կոյսերի հետ միասին կան 21,758 ծառայող քոյրեր։ Ամենից շատ վանքեր ունին Մոսկուայի (46 վանք), Նովգորոդի (33 վանք), Վլադիմիրի (30 վանք) նահանգները։ Ամենից սակաւ վանքեր ունի Սիբիրն, ուր իւրաքանչիւր նահանգում հազիւ մի վանք կայ։

Վանքերին կից բարեգործական հաստատութիւնների թիւը շատ սակաւ են. վանքերը պահում են ընդամէնը 134 հիւանդանոց 1593 անկողնով և 84 աղքատանոց 1237 պատսպարեալներով։

Ծառայող եղբայրներն ու կոյսերը գրեթէ անխտիր ողորմութեամբ են ապրում. նրանք ամեն օր պտտում են քաղաքների փողոցներն ու մուրում։

Վերջին ժամանակներս Պետերբուրգից փորձեր են լինում վանականներին դրդելու աւելի մեծ մարդասիրական գործունէութեան։ Քանիցս սինոդը ապդարարել է, որ ձրի դպրոցներ պահեն վանքերն և ժողովրդական մատենադարաններ հիմնեն, սակայն այս ազդարարութիւնները գրեթէ անհետևանք են մնացել։ Այսպիսի խնդիրներ շատ անգամ են յարուցուել Ռուսաստանում և միշտ գործնական

հետևանքից զուրկ մնացել. կարծուում է, որ դրա պատճառը վանականների տգիտութիւնն է, որոնց մեծամասնութիւնը հազիւ գրել կարդալ գիտէ. մինչև իսկ վանահայրեր կան, որ անգրագէտ են։

— «Միսսիոնարսկոյէ Օբոզրէնիէ» թերթն յոյս է յայտնում, որ ռուս ազանդաւորներն վերջապէս ճանաչելով իրենց սխալը պիտի միանան օրթոդոքս եկեղեցուն։ Այդ յոյսն հիմնուած է այն հրաշալի ազդեցութեան վրայ, որ հնադաւանների ու հերձուածողների վրայ գործել է Ձեռնիգովի եպիսկոպոս ս. Թէոդոսի մարմնի անփուտ մնալը 200 տարուան ընթացքում։

Շատ նշանաւոր են ռուսաց սինոդի Օբեր—պրօկուրոր Պոբեդոնոսցովի դաւանութեանց մասին յայտնած կարծիքներն, որ այստեղ յառաջ ենք բերում քաղուածօրէն։ Պոբէդոնոսցովի այդ շարադրութեան վերնագիրն է «Եկեղեցին», ուր նա իւր կարծիքն է յայտնում օրթոդոքս, կաթոլիկ և բողոքական եկեղեցիների մասին։

Շարադրութեան հէնց սկզբում յայտնուած է, որ փոխադարձ զիջումների վրայ հիմնուած եկեղեցիների արհեստական միութիւնն մի անհնարին բան է։ Շատ բաների մէջ կարող են զանազան ցեղերի մարդիկ և զանազան դաւանութեանց պատկանող անձինք իրար եղբայր համարել. իսկ մի կրօնական միաբանակցութիւն կազմելու համար պէտք է մենք եկար ժամանակ միասին ապրենք։

«Այսպէս մի գերմանացի, որ երկար ժամանակ Թուրքստանումն է ապրել, սովրում է ռուսի պէս հաւատալու և ռուս եկեղեցին իրեն ընտանի համարել։ Այդ ժամանակ նա մտնում է մեր շրջանի մէջ, դառնում է մեզանից մէկը, նրա միաբանութիւնը մեզ հետ կատարեալ է և հոգեկան. Բայց, որպէս զի մի բողոքական համայնք, որ մեզնից հեռու է և համբաւով է ճանաչում մեզ, գրքերի վրայ հիմնուելով կամ վարդապետութիւնների ու ծէսերի վերացական համաձայնութեամբ, գայ և միանայ մեզ հետ իրրև ամբողջութեան մի մասն և հոգւով մի լինի մեզ հետ, անհնարին է մինչև իսկ երևակայել։ Մինչև այսօր ոչ մի եկեղեցական միաբանութիւն, որ հիմնուած է եղել որոշ համաձայնութեան վրայ, չէ յաջողուել, վաղ թէ ուշ միշտ երևան է եկել այդ միաբանութեան սխալ հիմունքն, և ամէն տեղ այդ միաբանութիւնը ոչ թէ սկրն է աճեցրել, այլ ընդհակառակն խորշումն և նոյն իսկ ատելութիւնը։

Քահ լիցի մեզ միմեանց հաւատի համար կըշտամբելն. թող ամէն ոք իւր ձևով և իւր բնութեան համապատասխան ձևով հաւատայ։

Ամեն ոք սակայն մի հաւատ ունի, որ նրան ընդել է, որ նրա սիրտը գոհացնում է, նրան սիրելի է և երբ նա մի այլ, իրեն ոչ յարմարից, անհամակրելի հաւատին է անցնում, այն ժամանակ անկարող է նա չզղալ, որ այդ հաւատն իրենին պէս չէ, այլ սատն և անյարմար։ Խելքը կարող է վերացական կերպով մտածել. «այս մարդիկ էլ նոյն Աստուածն են երկրպագում»—սակայն զգացումն այդ դատողութեամբ չի գոհանալ, շատ անգամ զգում է մարդ, որ իրր թէ օտար եկեղեցում նոյն Աստուածն չէ երկրպագում։ Շատերը կը ծիծաղեն այս զգացման վրայ, թերևս իսկ այդ սնոտիապաշտ ու մոլեռանդ զգացումն անուանեն։ Բայց անհիմն է նրանց կարծիքը։ Զգացումը միշտ խաբուսիկ չէ. նրա մէջ ճշմարտութիւնը յաճախ ուղղակի և աւելի պարզ է արտայտուում քան թէ մտածողի մէջ»։

Ալեպիսի յառաջաբանից յետոյ Պոբեդոնոսցովը համեմատում է օրթոդոքս եկեղեցին կաթոլիկ և բողոքական եկեղեցիների հետ և տալիս իւրաքանչիւրի նկարագիրն։

ԱՆԳԼԻԱՆ ԵԿԵՂԵՑԻ։

— Քէնթըրբըրիի արքեպիսկոպոսի պաշտօնի մտնելն առանց միջնադէպի չանցաւ։ Հին սովորութեամբ նորընտիր եպիսկոպոսը գահ բարձրանալուց առաջ եկեղեցական մի ձևական ընտրութեան է ենթարկուում, որին մասնակցում են եպիսկոպոսներն և Քէնթըրբըրիի միաբանութիւնը։ Երբ դոկտոր Տէմպըլ պէտք է այդ ձևական ընտրութեան ենթարկուեր, մի բողոքող գտնուեցաւ։ Տէմպին համաձայն երեք անգամ հարցնում են, թէ արդեօք ներկաներից ոչ ոք ընդդէմ չէ ընտրութեան։ Այս առթիւ օգտուելց մի քահանայ Բրօունջոհն անունով և երիցս բողոքեց դր. Տէմպըլի ընտրութեան դէմ, առարկելով՝ որ նա հետևող է գարուինականութեան, որ հակառակ է անգլիական եկեղեցու դաւանութեան։ Այս բողոքը հարկաւ անհետևանք մնաց և չը խանգարեց անգամ արարողութեան ընթացքն իսկ։

— Լօնդոնի քրիստոնէական տետրերի հրատարակութեան ընկերութիւնը տպագրել է իր 1895 թ. հաշիւն, որից երևում է որ այդ տարում 59 ½ միլիոն տետր և գիրք է հրատարակած, որոնց մէջ 602 նոր հրատարակութիւններ։ Այդ գրքերի համար ծախսուած է 1,500,000 ռուբլի գրամ։ Նոյն ընկերութիւնը բացի ձրի և էժանագին գրքեր ու տետրեր բաժանելուց, օգնում է այլ քարոզչական նպատակներ ունեցող ընկերութիւնների ևս։

— «Ուսանողների ազատ քարոզչական ընկերութիւնը» 1300 անգամ ունի այս տարի, որոնցից 300 արդէն քարոզում են զանազան երկրներում, 1000 հոգի պատրաստուում են նոյն նպատակի համար. ամեն օր ևս նորանոր անգամներ են աւելանում։

— Քէնթըրբըրիի արքեպիսկոպոսն և Եօրքի եպիսկոպոսն պատասխանել են Լէոն ԺԳ. պապի թղթին, որի մէջ չէ ճանաչուում անգլիկան ձեռնադրութիւնը։ Ա՛յս առարկութիւնն հերքուած է մի պատասխանի մէջ, որ լատիններէն ու անգլիերէն տպագրուած և ուղարկուած է բոլոր կաթոլիկ եպիսկոպոսներին։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԼԿԵՂԵՑԻ։

Գերմանիա. — Գերմանական ազգն իր միութեան մեծ յօբելեանը տօնեց մարտի 1-ին, երբ լրացաւ Հանդուգնալ Վիլհելմ Ա. կայսեր ծննդեան հարիւրամեակը։ Այդ տօնախմբութեամբ գերմանացիք աչխարհի առաջ վկայեցին, որ իրենք այժմ մի միացեալ և հզօր ազգ են։ Ա՛յս առթիւ հանդիսաւոր ատենաբանութիւններ կատարուեցան բոլոր եկեղեցիներում։

— Եկեղեցական մի նշանաւոր յօբելեան տօնեց լութերական եկեղեցին փետրուարի 14-ին (Ն. տ.), երբ լրացաւ Մելանխտոնի ծննդեան չորսհարիւրամեակը։ Լութերի բարեկամ և բնկերը, նրա չափազանց եռանդուն սահմանափակող և բողոքական եկեղեցու դիտական հիմնադիր Մելանխտոնն արժէր այն յարգանքին, որ նրան ձօնեց բողոքական աչխարհն։ Բոլոր կրօնական թերթերը լի են այդ նշանաւոր անձի կեանքի ու գործերի յիչատակութեամբ և գովութեամբ։ Յօբելեանին «Քրիստիխէ Վէլտ» շաբաթաթերթը մի յատուկ համար է նուիրել, ուր Գերմանիոյ նշանաւոր աստուածաբաններն իրենց կարծիքներն են յայտնել այդ մեծ մարդու մասին։ Արդէն իսկ ժողովարարութիւն է սկսուել Մելանխտոնի ծննդավայր Բրէտտէն քաղաքում մի յիչատակաց տուն կառուցանելու համար։ Այդ տան մի մասն պիտի եկեղեցի լինի, միւս մասերում պիտի ժողովուեն Մելանխտոնի կեանքին և երկերին վերաբերեալ բոլոր հնագիտական երկերն։

— Աւետարանական եկեղեցուց 1890 - 1894 թ. դուրս են եկել 18·804 անձինք, իսկ միացել են նրա հետ 23 607 անձինք, այնպէս որ այդ եկեղեցին չորս տարուան մէջ շահել է 4803 դաւանակից։ Այդ թուի մէջ հրեութիւնից դարձել են 2088 հոգի, կաթոլիկութիւնից 17·002, զանազան դաւանութիւններից 4517 հոգի։

Հրեութիւն են ընդունել 61 անձինք, կաթոլիկ են դարձել 2794 հոգի, իսկ 15·944 հոգի փոխել են իրենց դաւանութիւնն և զանազան այլ դաւանութիւնների յարել։ Աչքի է ընկնում կաթոլիկներից զարձողների մեծ քանակութիւնը։

— Հայ թշուառներին օգնութիւն հասցնելու ընդհում բողոքական եկեղեցականներն հետզհետէ աւելի եռանդ են ցոյց տալիս։ Գրեթէ բոլոր եկեղեցական թերթերն այժմ համակրանքով են խօսում թշուառութեան մատնուած հայերի մասին։ «Հանդիսիւրէս Ընտանեսրպատը» իր 9 համարում տպագրել է Կեսարիայից Բրուսսա բերուած հայ որբերի պատկերն, իսկ 10 համարում թարգմանարար հաղորդել Եդինբուրգից Աչխէշատի ժողովի գրած նամակի վերջաբանութեան «յայսմ հաւատոց գլուխ ոչ ոք կարէ . . .», ցոյց տալու համար, թէ հայերն հնուման ի՞նչպէս են կռուել քրիստոնէութեան համար։

Բելգիա. — Բողոքական քարոզութիւնը հետզհետէ զօրանում է այս կաթոլիկ երկրում։ Մի քարոզչական ընկերութիւն 60 տարի է գործում է այն տեղ կաթոլիկներին, անաստուածներին և անիշխանականներին աւետարանական դարձնելու։ Մինչև այժմ 34 աւետարանական համայնք է կազմուել։ Ամէն տարի 500 նոր հաւատափոխներ են աւելանում։

ԲԱՓԻՆ ՀԵՌԱՆՈՍԱՅ։

— Հինատասնուամ քրիստոնէութիւնը թէև դանդաղ կերպով, բայց դարձեալ յառաջադիմում է։ Նորագոյն տեղեկութիւններից երևում է, որ 1842 թուականից միայն սկսուել է քրիստոնէութեան տարածումն այդ երկրում։ 1855 թուին ընդամէնը 500 դաւանակից ունէին, ասում է անգլիացի միսիոնար դոկտոր Ջոհն։ 1860-ին նրանց թիւն հասաւ 1000-ի։ 1890 թուին արդէն 38·000 հաւատացեալ կար այնտեղ, իսկ այժմ 70·000-ից աւելի են։ Սրա վրայ պէտք է աւելացնենք նաև այլ բողոքական քարոզիչների հետևողներն ու կաթոլիկներն։

— Հինատասնուամ ահա գործում է 10 տարուց ի վեր «քրիստոնեայ գրականութեան» ընկերութիւնը, որի նպատակն է հինացող քրիստոնէութեան դէմ ունեցած նախապաշարմունքները բառնալ։

— Մադագասկարում կաթոլիկ և բողոքական միսիոնարները խանգարում են միմեանց։ բողոքականները թէև բազմաթիւ են, բայց չեն վայելում կառավարութեան հովանաւորութիւնը։ Բողոքականներին մեծ հարուած եղաւ նաև նախկին թագուհու աքսորումն։

— Ճաւա կղզում հոլանդական քարոզչական ընկերութեան շնորհիւ այժմ 15·000 մահմետական նութիւնից դարձած քրիստոնեայ կայ։

— Անգլիական միսիոնարական ընկերութիւնը ձեռնարկել է քարոզչութիւն Ափրիկէի գաճաճների մէջ, որոնք Միջին Ափրիկէի անտառներում են ապրում։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԻ ԵՐԿԵՐԸ.—Հրատարակեց Ի. Ժամհարեանց, Մոսկուա, տպ. Ք. Բարխուդարեանի. 1897.

Ժողովրդի պարսկական լծի տակ կրած պարհուրելի տանջանքներին ականատես պատանին, որ պատպակուում էր ուսման ծարաւով, բաղդի մի յաջողակ բերմամբ ընկնում է մի այնպիսի Եւրոպական ուսումնավայր, որպիսին էր Դորպատը։ Ի բնէ սուր մտքով ու վառ երևակայութեամբ օժտուած հայաստանցի պատանին այդ օտար քաղաքում իրեն տեսնում է Եւրոպական համալսարանի ուսուցչապետների շրջանում, որոնք նախ քան պատուական գիտնական լինելը՝ պատուական մարդիկ են ներկայանում իրենց բարեսրտութեան և օրինակելի մարդասիրութեան վրայ աքանչացած Խաչատրին։ Սոքա կարծես իսկոյն ձանաչում են իրենց բարեկամութեանն ապաւինած օտար պատանու հոգին, կարծես զգում են թէ ինչ կոչման համար է ստեղծուած նա, և իրենց հոգածութեանը՝ նորա մտաւոր ու բարոյական զարգացման մասին՝ սկզբից իսկ տալիս են այն ուղղութիւնը՝ որ ապագայում «Վէրք Հայաստանի»-ի նման պտուղ պիտի տար։

Մեր ձեռքը չեն հասել այնպիսի տեղեկութիւններ, որ վերաբերում են Աբովեանի Դորպատում անցրած տարիներին. քիչ բան գիտենք նորա մանաւոր կեանքից, աւելի քիչ՝ նորա պարապմունքներից։ Սակայն ուսումնասիրած և հայրենիք վերադարձած Աբովեանին ճանաչող բոլոր աղգայինների և Եւրոպացի ուսումնականների մեզ հաղորդած տեղեկութիւններից այնքանը հաստատ իմանում ենք, որ Ս. Լիմինճեանի տիրացու Խաչատուրը վերադառնում է Դորպատից հոգևորապես վերածընուած։ Համալսարանական գիտութիւնից զատ՝ Աբովեանը իւր հետ բերում է, անշուշտ և Եւրոպական գրականութեան, մանաւորապես գերմանական բանաստեղծութեան հիմնաւոր ծանօթութիւն։ Եթէ վազների ներկայութեամբ Աբովեանի աշակերտները Դեօթէի և Շիլլերի գրուածքներն են կարդում գերմաներէն, ինչ կասած, որ բանաստեղծական հոգու տէր Խաչատուրն ինքը Դորպատում ոգևորուել է համաշխարհային բանաստեղծութեան պատմութեան մէջ փայլող այդ հսկայ հանճարների արտադրութիւններով։ Աբովեանի աշակերտները Թիֆլիսում «ռուսի, նէմեցի, ֆրանցուզի լեզուամբ ինչ բան որ կարդում էին, նրանց անմեղ հոգուն էլ էին էնպէս բաները դիր գալիս»։ չէ որ նախ իրեն՝ ուսուցչին են «էնպէս բաները դիր եկել» իւր ուսանողութեան միջոցին։ Հարկաւ առաջ ինքն Աբովեանն է կարդացել «էն լեզվընեբումը երևելի մարդկանց գործքերը, նրանց արածներն ու ասածները»։ Նա կարդացել է «էն բաները, որ մարդի սիրտ կարող է գրաւիլ, չունքի սրտի բաներ են՝ ով չի սիրիլ»։

Արդ՝ ինչ «սրտի բաներ» էին հրապուրել Աբովեանին Դորպատում ինչպիսի ազդեցութեան տակ կարող էին զարգանալ այնտեղ նորա բնատուր ձիրքերը։ Դարուս առաջին քառորդի վերջում՝ գերմանական գրականութիւնը, որի ազդեցութեանն Աբովեանն անշուշտ աւելի պիտի ենթարկուէր իւր կեանքի պայմանների համեմատ, կատարեալ զարգացման էր հասցրել այն բոլոր տարրերը, որ հանրամարդկային նշանակութիւն ստանալով՝ ուղղութիւն էին տալիս բոլոր Եւրոպական գրականութիւններին։ Մի կողմ թողնելով գեռ Sturm und Drang-ի յառաջ բերած ահագին մտաւոր շարժումը և առանձնապէս բանաստեղծութեան անօրինակ ծաղկիլը, որ անցեալ դարու երկրորդ կիսից սկսուեցաւ, նոյն իսկ այս դարու սկզբներում մի խոշոր քաղաքական երևոյթ մեծ զարկ տուաւ գերմանացոց ազգային ինքնագիտակցութեան զարթնելուն, որ և անմիջապէս իւր հետևանքն ունեցաւ գրականութեան նկատմամբ։ Նապօլէօնի աշխարհակալ ձգտումները, նորա բռնութեան՝ Եւրոպական ազգերի վրայ ծանրացած շղթաները, նորա երազները՝ իւր դլխաւորութեամբ մի ընդհանուր Եւրոպական կայսրութիւն ստեղծելու մասին՝ կարծես մի

անգամից սթափեցրին գերմանացոց զարմանալի ուժով կենդանացաւ այդ ժողովրդի ազգայնութեան զգացումը, ազգային արժանապատուութեան, ազգային պատմական քաղաքակրթութեան գիտակցութիւնը, և այդ հզօր զգացմունքը գնալով աւելի ամեց Նապօլէօնի անկումից յետոյ։ Զարգացաւ գրականութեան այն ուղղութիւնը, որ յայտնի է «ռոմանտիզմ» անուամբ և որի էութիւնն իրօք այդ ազգայնութեան, ազգային ինքնաճանաչութեան գաղափարն է։ առաջնակարգ գիտնականներ և տաղանդաւոր բանաստեղծներ, կարծես ցոյց տալու համար թէ գերմանացին օտարի սարուկ լինելու արժանի ազգ չէ, իրենց աչքը ձգում են ամէն ազգի հիմնական տարրը կազմող հասարակ ժողովրդի վրայ, երգում և ուսումնասիրում են նորա կեանքն ամէն կողմից, գնում են նորա անցեալին, յարութիւն են տալիս մոռացուած միջին դարերին, հանդէս են բերում միջնադարեան ղեկավարների աւերակների տակ թաղուած ասպետներին, աւատական իշխաններին ու իրենց հպատակներին, բանաստեղծական երեւակայութեան զարդերով պճնած կարծես մի կեանք են դնում հրապարակի վրայ և ասում։ «այս ձերն է, ձեր հարազատ անցեալն է, որի պատուղն էք դուք։ սիրեցէ՛ք ձերը, ձեր պատմական անցեալը իւր բոլոր թերութիւններով ու առաւելութիւններով։ սորան ճանաչելով դուք կը սիրէք ձեր ներկան և կը պատրաստէք ձեր աւելի փառաւոր ապագան»։

Օտարութեան մէջ հայրենիքի կարօտը քաշող և նորա տառապանքներին ականատես եղած Աբովեանի սրտովը պիտի լինէր անշուշտ եւրոպական գրականութեան այդ ուղղութիւնը, և մենք կարող ենք երեւակայել այն տպաւորութիւնները, այն ազդեցութիւնը, որի տակ նա պիտի վերադառնար հայրենիք։ Դարպատում անց կացրած տարիները բաց են անում Աբովեանի աչքը, և այն, ինչ որ նա առաջ թերևս զգում էր միայն, այժմ նորա առաջ պատկերանում է իւր բոլոր մերկութեամբ։ նա ըմբռնում է այն գործունէութեան խորհուրդը, որի համար առաջ գուցէ միայն անորոշ երազներ ունէր։ վերջապէս նա ակնյայտնի տեսնում է, թէ ո՛ր չարիքների դէմ ամենից առաջ հարկաւոր է մաքառել և ըստ այնմ որոշում է առաջիկայ գործունէութեան ասպարէզն ու գործելու եղանակը։ Բայց ի՞նչ կարող է անել մի մշակը մենակ ընդարձակ խոպան դաշտում։ հայրենի կեանքը չկարողացաւ տալ նորան իւր ցանկացած ասպարէզը, և իւր կոչումից հրաժարուել չկամեցող երիտասարդն ստանձնում է պետական պաշտօն, որ սակայն կարող էր նորան հնարաւորութիւն տալ գէթ մասամբ մօտենալու իւր նպատակին։ Ուսուցիչ Աբովեանը իւր հոգին է կամենում ներշնչել իւր հայ սաներին. այդտեղ է ահա որ նորա «սիրան ուզում էր պատռի, որ էս էրեխէքանց ձեռքն էլ՝ ինչ հայի գիրք տալիս էր, չէին հասկանում»։ Նա «Հայկայ զաւակը, Էջմիածնայ որդին», որ «մէկ հայ տեսնելիս՝ ուզում էր շունչն էլ հանի, նրան տայ», այդ զարմանալի հայրենասիրական եռանդով վառուած երիտասարդը ճնում է մոլորուած թէ ինչ պիտի անէր, ինչ ելք գտնէր սիրտը կրակի պէս այրող այդ եռանդին—«լեզուն փակ, աչքը բաց, բերանը բըռնած, սիրտը խոր, ձեռը պակաս, լեզուն կարճ»։ «Գանձ չունէի, ասում է նա, որ դործով ցոյց տայի ուզածս, անունս մեծ չէր՝ որ ասածս տեղ հասնի. մեր գրքերն էլ գրաբառ, մեր նոր լեզուն էլ անպատիւ, որ սրտիս հասրաթը խօսքով յայտնէի»։ Աբովեանի սրտումը «կայծակն՝ ու որոտումը մէյդան են բաց անում», բայց նա հնարաւոր ելքը գտնում է, յաղթող է դուրս գալիս հոգեկան մաքառման միջից. տեսնելով որ Եւրոպայի «էրեխէքն էլ Հոմերի, Հորացի, Վիրգիլի, Սոֆոկլէսի գրքերը գլխատակներին ունէին, չունքի բոլոր աշխարհի բաներ են», Աբովեանը վճռում է մի կողմ թողնել գրաբարը, քերականութիւն, ճարտասանութիւն, տրամաբանութիւն, և «անպատիւ» լեզուով մի «աշխարհի» մի «սրտի» բան գրել, վճռում է «աշըղ» դառնալ։ Հոգով արդէն իսկ «աշըղ» Աբովեանը «մենջ լեզուն բաց է անում» և հայ ազգն սանում է «վէրք Հայաստանին»։

Սովորական խօսք է դարձել այսօր ամենքիս համար, թէ այդ «ողբը» մեր նոր գրականութեան մէջ դարաշրջան է կազմում, թէ դրանից սկսուե և հետզհետէ աճում է մեր

արդի բանաստեղծութիւն։ Եթէ ոչ բառացի, գէթ ըստ էութեան միանգամայն ճշմարիտ է այդ հայեացքը «Վէրքի» մասին. եթէ մի կողմից ընդունենք որ մեր կեանքի պատմական ընթացքը չպիտի կանգ առնէր, և մենք եւրոպական լուսաւորութեան տարածում ունենայինք աստիճանաբար, անշուշտ պիտի բռնէինք մեր ճանապարհը և հասնէինք այսօրուան օրը առանց մեծ ցնցումների և որոշ ազգային առանձնայատկութիւնների պատգ և միևնոյն ժամանակ կենդանի պատկեր են եղել։ Այժմ այս դէպքը կարծես ամենից աւելի վէպին է պատկանում և ըստ այնմ էլ արդի քաղաքակրթ ազգերի բարդ կեանքի պայմաններին համեմատ, վէպը նոյնպէս բազմակողմանի, բազմատեսակ բովանդակութեամբ հարուստ մի երևոյթ է եւրոպական գրականութեան մէջ։ Ինչպէս են ապրում մարդիկ, հարուստ թէ աղքատ, մեծ թէ փոքր, ինչպէս են զբաղմունք ինչ են ղգում, ինչպէս պիտի զբաղեն ու ղգան, ինչով են հետաքրքրուում ինչ են սպասում ինչի են ձգտում, վերջապէս այն բոլորը, թէ լաւ թէ վատ, որ ժամանակակից կեանքի բովանդակութիւնն է կազմում, այդ բոլորին, ասում ենք, այսօր աշխատում է պատկերացնել վիպասանը։ Ուրեմն նա նկարագրում է մի հասարակութեան կամ ժողովրդի բարք ու վարքը, նորա առօրեայ կենցաղը, նորա վշտերն ու ուրախութիւնը։ Հոգեբանի սրատեսութեամբ հետազօտում է առանձին անհատների ներքին աշխարհը, ականատես է դարձընում մեզ բնաւորութեանց պրամադրական մղումին, յուզում է ազգերական գրութեանց կապակցութեամբ, լարում մեր հետաքրքրութիւնը անցքերի մի ուշագրաւ հանդոյցով և հետացնում կամ լացացնում այդ հանդոյցը լուծելով։ Կարծում ենք որ այս պահանջների մեծագոյն մասը ի գուր պիտի որոնենք «Վէրք Հայաստանի»-ի մէջ. ժամանակակից կեանքի նկարագրութեան շատ քիչ օրինակներ է տալիս մեզ Աբովեանը, քանաքեաւ նրա ու կամ մի քանի տեսարան, լուր հայրենի գիւղի մի քանի տովորութիւններ, և ուրիշ ոչինչ աւելի տալիս է հայ ժողովրդեան պատմական այդ շրջանում կրած տառապանքների պատկերները, և այն ըստ մեծի մասին ասել թէ ինչն իսկապես վիպի նիւթ չէ կարող լինել։ Ասում ենք առհասարակ թէ գրականութիւնը, մանաւանդ պատմական բանաստեղծութիւնը, մի ազգի կեանքի արտայայտութիւնն է, մի հասարակութեան ճշգրիտ պատկերը։ Այսպէս եղել է միշտ, և բանաստեղծութեան բոլոր ճիւղերը ամէն ժամանակ որոշ կենսական պայմաններին, քաղաքակրթութեան որոշ աստիճանի, ազգային առանձնայատկութիւնների պատգ և միևնոյն ժամանակ կենդանի պատկեր են եղել։ Այժմ այս դէպքը կարծես ամենից աւելի վէպին է պատկանում և ըստ այնմ էլ արդի քաղաքակրթ ազգերի բարդ կեանքի պայմաններին համեմատ, վէպը նոյնպէս բազմակողմանի, բազմատեսակ բովանդակութեամբ հարուստ մի երևոյթ է եւրոպական գրականութեան մէջ։ Ինչպէս են ապրում մարդիկ, հարուստ թէ աղքատ, մեծ թէ փոքր, ինչպէս են զբաղմունք ինչ են ղգում, ինչպէս պիտի զբաղեն ու ղգան, ինչով են հետաքրքրուում ինչ են սպասում ինչի են ձգտում, վերջապէս այն բոլորը, թէ լաւ թէ վատ, որ ժամանակակից կեանքի բովանդակութիւնն է կազմում, այդ բոլորին, ասում ենք, այսօր աշխատում է պատկերացնել վիպասանը։ Ուրեմն նա նկարագրում է մի հասարակութեան կամ ժողովրդի բարք ու վարքը, նորա առօրեայ կենցաղը, նորա վշտերն ու ուրախութիւնը։ Հոգեբանի սրատեսութեամբ հետազօտում է առանձին անհատների ներքին աշխարհը, ականատես է դարձընում մեզ բնաւորութեանց պրամադրական մղումին, յուզում է ազգերական գրութեանց կապակցութեամբ, լարում մեր հետաքրքրութիւնը անցքերի մի ուշագրաւ հանդոյցով և հետացնում կամ լացացնում այդ հանդոյցը լուծելով։ Կարծում ենք որ այս պահանջների մեծագոյն մասը ի գուր պիտի որոնենք «Վէրք Հայաստանի»-ի մէջ. ժամանակակից կեանքի նկարագրութեան շատ քիչ օրինակներ է տալիս մեզ Աբովեանը, քանաքեաւ նրա ու կամ մի քանի տեսարան, լուր հայրենի գիւղի մի քանի տովորութիւններ, և ուրիշ ոչինչ աւելի տալիս է հայ ժողովրդեան պատմական այդ շրջանում կրած տառապանքների պատկերները, և այն ըստ մեծի մասին

ասել թէ ինչն իսկապես վիպի նիւթ չէ կարող լինել։ Ասում ենք առհասարակ թէ գրականութիւնը, մանաւանդ պատմական բանաստեղծութիւնը, մի ազգի կեանքի արտայայտութիւնն է, մի հասարակութեան ճշգրիտ պատկերը։ Այսպէս եղել է միշտ, և բանաստեղծութեան բոլոր ճիւղերը ամէն ժամանակ որոշ կենսական պայմաններին, քաղաքակրթութեան որոշ աստիճանի, ազգային առանձնայատկութիւնների պատգ և միևնոյն ժամանակ կենդանի պատկեր են եղել։ Այժմ այս դէպքը կարծես ամենից աւելի վէպին է պատկանում և ըստ այնմ էլ արդի քաղաքակրթ ազգերի բարդ կեանքի պայմաններին համեմատ, վէպը նոյնպէս բազմակողմանի, բազմատեսակ բովանդակութեամբ հարուստ մի երևոյթ է եւրոպական գրականութեան մէջ։ Ինչպէս են ապրում մարդիկ, հարուստ թէ աղքատ, մեծ թէ փոքր, ինչպէս են զբաղմունք ինչ են ղգում, ինչպէս պիտի զբաղեն ու ղգան, ինչով են հետաքրքրուում ինչ են սպասում ինչի են ձգտում, վերջապէս այն բոլորը, թէ լաւ թէ վատ, որ ժամանակակից կեանքի բովանդակութիւնն է կազմում, այդ բոլորին, ասում ենք, այսօր աշխատում է պատկերացնել վիպասանը։ Ուրեմն նա նկարագրում է մի հասարակութեան կամ ժողովրդի բարք ու վարքը, նորա առօրեայ կենցաղը, նորա վշտերն ու ուրախութիւնը։ Հոգեբանի սրատեսութեամբ հետազօտում է առանձին անհատների ներքին աշխարհը, ականատես է դարձընում մեզ բնաւորութեանց պրամադրական մղումին, յուզում է ազգերական գրութեանց կապակցութեամբ, լարում մեր հետաքրքրութիւնը անցքերի մի ուշագրաւ հանդոյցով և հետացնում կամ լացացնում այդ հանդոյցը լուծելով։ Կարծում ենք որ այս պահանջների մեծագոյն մասը ի գուր պիտի որոնենք «Վէրք Հայաստանի»-ի մէջ. ժամանակակից կեանքի նկարագրութեան շատ քիչ օրինակներ է տալիս մեզ Աբովեանը, քանաքեաւ նրա ու կամ մի քանի տեսարան, լուր հայրենի գիւղի մի քանի տովորութիւններ, և ուրիշ ոչինչ աւելի տալիս է հայ ժողովրդեան պատմական այդ շրջանում կրած տառապանքների պատկերները, և այն ըստ մեծի մասին

քնարերգակի սրտագին զեղումներով, քան վիպասանի նկարագրական լայն վրձինի հանդարտ շարժումներով։ Ամբողջական բնաւորութիւններ, տիպարներ չունք գանուում նոյնպէս նոյն իսկ գլխաւոր հերոս Ազասին պատկերանում է մեր առաջ առաւելապէս իբր բնաւորութեան մի աչքի ընկնող, հեղինակի յատուկ նպատակին ծառայող, կողմովը, քան այն ներքին, յաճախ ոչ խոշոր, հոգեկան շարժումներովը, որ անշուշտ աւելի կարող էին կենդանացնել ընթերցողի առաջ մի գիւղացի երիտասարդի ամբողջական տիպար։ Բուն վիպի պատմութեան թելը յաճախ ընդհատուում է միջանկեալ կողմնակի դէպքերի, երբեմն վիպի հետ ոչինչ կապ չունեցող անցքերի նկարագրութիւններով. կան ամբողջ գլուխներ, որ բացի վիպի հետ որևէ առնչութիւն չունենալուց, բուն տեղեկութեան իսկ առհասարակ չեն վերաբերուում։ Այս բոլորն ի հարկէ չափազանց թուլացնում է գլխաւոր պատմութեան, ադասու վիպի տպաւորութիւնը, և մենք կարող էինք ասել թէ «Վէրք Հայաստանի»-ի մէջ բացմաթիւ են այնպիսի թերութիւններ, որ իրաւունք չեն տալիս նորան «վէպ» անուանելու։

Կանգ առնենք այստեղ և առանց վերյիշեալ յուշմունքները հաստատելու համար կատներ յառաջ բերելու, ասենք որ մենք կարող ենք «Վէրք Հայաստանին» վէպ չանուանել, ընդունուած էսթետիկական պահանջներով չչափել այն և խոստովանել սակայն, որ այդ գլուխգործը մեր գրականութեան մէջ պատիւ կազմելու արժանիք ունի և այսօր էլ, մի քանի տասնեակ տարի գրուած օրից անցնելոց յետոյ, ընդունակ է ոգևորելու և դաստիարակիչ նշանակութիւն ունենալու մեզ համար։

Գրքի ներքին բովանդակութեան նկատմամբ՝ այդ նշանակութիւնը բացատրում է իւր վերնագրի մէջ եղած երկրորդ կէսը, որ մենք ուշադրութեան արժանի անուանեցինք։

«Ողբ», այո՛, մի գառն ողբ է այս, որ բխել է Արովեանի սրտից և որ սրատասուբի մէջ թաթախուած գրիչը անց է կացրել թղթի վրայ։ Այս հանգամանքը «Վէրք Հայաստանի»-ի յատուկ նշանակութեան գլխաւոր առհատաչեան է։ այս ողբն է, որով պայմանաւորուած են Արովեանի վէպի գրականական թերութիւնները, բայց և աւելի նորա արժանիքը։

Այն նուիրական ջերմ զգացմունքը, որ մեծ հայրենասիրի առաջնորդն է եղել իւր ուսանողութեան ժամանակ և յետոյ մղել է նորան գէպի հայրենի աւերակները, շունչ և կենդանութիւն է տուել «Վէրք Հայաստանի»-ի ամէն մի տողին։ Այդ զգացմունքից զուրկ չեն եղել մեր յաջորդ հեղինակները էլ. բայց այն կորովը, այն ամէն ՝ալ հոգեկան շարժում ամէն ՝ալ միտք, ՝ալ շահ կլանող զօրութիւնը, որով բորբոքուած է Արովեանցի զգացմունքը, անօրինակ է մեր գրականութեան մէջ։ «Վէրք Հայաստանի»-ն կարդալիս մարդ զգում է, որ հեղինակը անքուն գիշերներ է լուսացրել, կարծես վախենալով թէ ժամանակ կը պակասի իւր լցուած սիրտը արտայայտելու, իւր անհուն յոյզերը գրի անցնելու, մարդ զգում է, որ «երեսուն թաթաղէն» մի շնչով է գրուած... Զգացմունքի այդ բուռն հոսանքն է, որ անդուլ ուժով հեղինակին առանց մի վայրկեան հանգիստ տալու, յառաջ է մղում և նա առանց յետ նայելու մերթ Արարատեան աշխարհի բնութիւնն է նկարագրում, մերթ Քանաքեռի առուներն ու կացը, մերթ մի սիրոյ երգ է մէջ բերում ոտանաւորով, Երևանի բերդի վերայ վշտալից խորհրդածութիւններ է անում, Պարսից շահերի ու սարդարների պատմութիւններ է հաղորդում «վայերով», «օխերով» ամբողջ երեսներ լցնում «չախախ—վախախ»-ն նկարագրում իւր սիրական Աղասու հետ սար ու ձոր ընկած բայաթիք է ասում... Ու այս բոլորը խառնիխուռն, իրար վրայ կուտակուած՝ այնպէս, ինչպէս հեղինակի երևակայութեան մէջ է պատկերացել յախուռն հոսանքով. այս է պատճառը, որ շատ տեսարանների, միջանկեալ պատմութիւնների դոյութիւնը վէպի մէջ ոչ մի կերպով չէ արդարանում գրուածքի գեղարուեստական կամ նոյն իսկ պատմաբանական պահանջներովը։

Այստեղից ահա յառաջ են գալիս և այն բազմաթիւ քնարական զեղումները, որ անմիջական արտայայտութիւն են հեղինակի

սիրտը յուզող պէտքէս զգացողութեանց և որ գրքի ամենասիրուն և ամենազօրեղ էջերն են լցնում:

Ահա կայ մի բան որ այդ բոլորին ամբողջութեան, միութեան բնաւորութիւն է տալիս, այդ, կրկնում ենք, Աբովեանի անձնամոռացութեան հասնող հայրենասիրական խանդն է, որ և մեր կարծիքով «Վէրք Հայաստանի»-ի գլխաւոր արժանաւորութիւնն է և ահագին կրթական նշանակութիւն է տալիս նորան. մարդ ակամայ խանարհում է հոդու այն վեհութեան, այն տենդայոյզ բոցավառ սիրոյ առաջ, որ բացագանչել են տալիս հեղինակին. «Ո՛վ թուր ունի, առաջ իմ գլխիս խփի, ի՛մ սիրտս խրի, ապա թէ ո՛չ՝ քանի բերնում լեզու կայ, փորումն սիրտ, ես լեզուապատառ ձէն կը տամ. «էդ ո՞ւմ վրայ էք թուր հանել, Հայոց մեծ ազգին չէ՞ք ճանաչում»:

Աբովեանի գործի մի այլ կարևոր կողմը մենք կարող էինք պատմական անուանել մեր գրականութեան համար. այդ՝ աշխարհիկ, ժողովրդին միանգամայն հասկանալի լեզուով առաջին անգամ մի այդպիսի մեծ շարադրութիւն գրելն է: Սակայն ինքն ըստ ինքեան էլ պարզ է, հեղինակը իւր բերանովն էլ է մեզ ասում որ վերջին հանգամանքը ևս պատուղ է իւր անսահման հայրենասիրութեան:

Աբովեանը խորտակեց հայ ստեղծագործող միտքը կաշկանդող շղթաները, ցոյց տուեց թէ ի՞նչ միջոցով կարող է զարգանալ մեր գրականութիւնը և այս նորա գլուխը պսակող փառքն է մեր արդի լեզուի ու բանահիւսութեան պատմութեան մէջ:

Մենք համառօտակի յառաջ բերինք այն տպաւորութիւնը, որ անում է մեզ վրայ Աբովեանի գլուխգործոցը, և համոզուած ենք որ դեռ երկար ժամանակ այդ գիրքը հայ ընթերցողի համար ամենամանքուր ոգևորութեան աղբիւր պիտի լինի, երկար ժամանակ պիտի դաստիարակէ մեր մանուկ սերունդը:

Կը մնայ մեզ մի երկու խօսք ասել Աբովեանի երկերի մեր առաջ դրած նոր հրատարակութեան մասին:

Այս ստուար (աւելի քան 550 in 8° էջ) հատորի մէջ զետեղուած են հետևեալ նիւթերը. Հրատարակչից, խմբագրից, Նաչատուր Աբովեան (կենսագրութիւն), Վէրք Հ., Ովսաննա, Պարապ վախտի խաղալիք, Փէոդորա, Մ՛տածմունք ի տեսիլ Հայրենեաց, Նախաշաւիղ, Ճանապարհորդութիւն պ. պր. Պարրօտի և Նաչատուր դպրի Աբովեան, Քանաքեռի բարբառից քանի մի գիտելիքներ և բառարան:

Հրատարակութիւնը կատարուած է ամենայն լանամքով ու բարեխղճութեամբ. եւ լևում է որ խմբագրողը, պ. Ստ. Տէր Սարգսեանց, վերաբերուել է իւր գործին մեծ սիրով ու առանձին յարգանքով դէպի Աբովեանի թողած գրականական գանձը: Մի բանում միայն մենք չենք համաձայնում խմբագրողի հայեցակէտին, այդ ուղղագրութեան խնդիրն է: Աբովեանի գործը գիտնական գործ չէ, որ լեզուագէտի ճշտութեամբ հարկաւոր լինէր ամենայն հարազատութեամբ պահպանել նորա ուղղագրութիւնը, որ թերևս կարելի լինէր բացատրել հեղինակի տեսութիւններով. օրինակ, ի՞նչ խորհուրդ կարող է ունենալ մի տեղ «մարդ», մի այլ տեղ «մարթ», մի տեղ «կարդալ», մի այլ տեղ «կարթալ» գրելը, քանի որ այդ ոչ որ և է հնչիւնաբանական օրէնքով է բացատրուում և ոչ ժողովրդի արտասանութեամբն է արդարանում ինչպէս կարծում է պ. Տէր Սարգսեանը (խմբ. դ.). ի՞նչ մեկնութիւն կարող է վերցնել «աշխար» ուղղագրութիւնը փոխ. «աշխարհ»: Զպէտք է մոռանալ որ զուտ գրականական լեզուով գրող ու խօսող Հայաստանցի (էլ չենք ասում արարատցի) հայն էլ արտասանում է «մարթ» «կարթալ», «աշխար» (հ-ն ոչ մի կերպ լսուել չէ կարող), և սակայն ոչ ոք չէ մտածում գրել այդպէս: Նմանապէս անհասկանալի է մեզ համար այնպիսի աշկարայ սխալներն անփոփոխ պահելն, ինչպէս՝ «հօա», փոխ. «հոա», «տա», փոխ. «տայ» (3 դէմքը) և այլն: Ի՞նչ կասկած որ այդ բոլորը հեղինակի գրչի սխալներ են և ուրիշ ոչինչ. նոյն իսկ Աբովեանի նմանագրութեան (fac—simile) մէջ որ յառաջ է բերուած այս հրատարակութեան վերջում «յորձանք» բառն, օրինակ, գրած է «հ»-ով. միթէ պարզ չէ որ տպագրի մէջ (եր. 454) պէտք չէր պահպանել նոյն սխալը. տպա ին-

չու նոյն երեսում տպած է՝ «ձնշչէն» խորատակչէն», մինչդեռ ձեռագրումն է՝ «ձնշչէն» խորատակչէն»։

Վերջապէս ի զուր են կարծում թէ Աբովեանի լեզուն ամենայն ճշտութեամբ համապատասխանում է Քանաքեռի բարբառին. ցաւում ենք որ յօդուածիս սահմանը թոյլ չէ տալիս մեզ յառաջ բերել «Վէրք Հայաստանի»-ից բազմաթիւ բառեր, դարձուածներ և քերականական ձևեր, որոնք չեն պատահում Քանաքեռի բարբառում։

Այս փոքրիկ նկատողութիւնն այնուամենայնիւ չէ կարող արգիլք լինել մեզ համար կրկնելու, որ Աբովեանի երկերի այս նոր տպագրութիւնը մի պատուական հրատարակութիւն է, որ պարիւ է բերում թէ հրատարակչին, թէ խմբագրողին և թէ տպարանին։

Գրաւէր.

Ս. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵՒ ՏՐԴԱՏ
ԵՒ
ՆՈՅԱ ՆՈՐ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ.

Ի՞նչ էր Հայաստանեայց Լուսաւորչի— սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի անքաւելի մեղքը, որին մեր սեգն Տրդատ իբրև մահապարտ ճանաչելով, ուստի և նրան չարաչար պատժելու համար բարեշէն Հայաստանի մէջ ոչ մի յարմարաւոր տեղ չգտնելով, ձգել տուեց Արտաշատի անգնդախոր Վիրապի մէջ։ Մեր ազգային պատմութիւնների աւանդածի համեմատ, ս. Լուսաւորչի այս մեծ յանցանքը, որ նոյն իսկ ինքն Տրդատ տեսաւ իբր աչքով և զարհուրեց, ահա թէ ինչ էր։ Սուրբն Լուսաւորիչ իմանալով իբր գայթկից, որ Տրդատի հօր՝ անմեղ Խոսրովին սպանողը եղել է իբր Անակ հայրը, Լուսաւորչի բարեգործ սրտի վերայ մեծ վիրք պատճառելով իբր հօր կատարած այս մեծ անգթութիւնը, նա կամովին ձգում է իբր անձը Տրդատի արքունիքի յարկի տակ, մէն միայն հաւատարմութեամբ և միամիտ սրտով «Զհայրենեացն հատուցանել պարտիս» (Խոր. Բ. գլուք Զ.)։

Եւ արդարև երբ նա արքունիք մտած օրից իբր կամաւոր և ամբիծ ծառայութիւններով աշխատում է ջնջել իբր հօր այս ամօթալի յանցանքը և վաստակել Տրդատի սէրն, այս ժամանակ իբր և Տրդատի մէջ տեղի է ունենում մի քաոսնելի դէպք, որն աւելի ծանր և ճնշիչ ներգործութիւն թողնելով նրա երկիւղած սրտի վերայ քան իբր հօր կատարած եղեռնագործութիւնը, նա սոսկում սարսափում է։ Ի՞նչ էր այս դէպքը։ Իբր բոլոր աշխարհով կռապաշտութեան մէջ ընկղմած Տրդատը, հրամայում է մի օր Լուսաւորչին «Պահակ և թաւ ոսոս ծառոց» նուէր տանել Անահտական պատկերին՝ սպառնալով, «Ցաճախեմ քեզ նեղութիւնս բանտ և կապանք և մահ.. եթէ ոչ առնուցուս յանձն դիցն պաշտօն մատուցանել» (Ագաթ. 1882, Տփ. 39—40)։

Կարելի՞ բան էր քրիստոնէական կաթով սնուած և «ընտանի եղեալ դրոց Աստուծոյ» (Անդ 33) մեր հաւատաւոր Լուսաւորչին կատարել Տրդատի արձակած այս խրոխտ հրամանը. ուստի երբ նա ամենայն զօրութեամբ մի կողմից ձգնում է ցոյց տալ Տրդատին իբր պաշտած աստուածների ոչնչութիւնը, իսկ միւս կողմից ողբական խօսքերով հրաւիրում նրան իբր պաշտած ու պատուած Յսաչի և Աւետարանի տակ, թաւ ոսոսով և պահակով չպատուելով միանգամայն Անահտական պատկերը, այս ժամանակ Տրդատը ոչ այնչափ Լուսաւորչի իբր արքայական հրամանը ոտնակոխ անելու, որչափ Հայոց աշխարհի «Փառք և կեցուցիչ մեծ Անահտին» երես առ երես արհամարհելու համար, բորբոքուում է մեծ սրտմտութեամբ, ուստի և ի վրէժ այս բանին, չբաւականանալով նրա վերայ փորձած ամենատեսակ դառնակսկիծ չարչարանքներով, իբրև իբր հայրենի աստուածներն անարգող մահապարտ, հրամայում է ձգել նրան Արտաշատի Վիրապի մէջ։ Ահաւասիկ այս էր Լուսաւորչի մեղքը։ Բայց երկա՞ր միաց նա այս դժնդակ արգելարանում։ այո՛, տասն և հինգ երկարաձիգ տարիներ։ Եւ նա իբր անձը արտրելով այսպէս, ապա Աստուածոյ անսահման ողորմութեամբ և անօրէնութեամբ նոյն իսկ իրեն վերայ ապետալի

առաւտպանքներ և փորձութիւններ անձրևող Տրդատի ձեռքով ապատուելով այս գժնդակ վայրից, յետ այնորիկ ի տրխտուր Տրդատի իրեն ընձեռած մեծ զթութեան և բարերարութեան՝ իւր Վիրապն ընկած և ապատուած օրինակով ձգում հանում է, նրան և իւր բովանդակ աշխարհին մարդասանձ կառապաշտութիւնից. և այսպէս Տրդատին իւր ազգուածակով և նրա արքունական բանակից «աւելի քան դշոխքհարիւր բիւր» մարդիկ Եփրատի ականակիտ ջրով մկրտելուց յետոյ, ապա ինքն սուրբն Լուսաւորիչ և Տրդատ ձեռք ձեռքի տուած քանդում կործանում և վերացնում են ամեն տեղից մեհեանք, բագինք և նոցա պիղծ պաշտամունք և պաշտօնեայք, արձանացնելով, կանգնելով ամեն տեղ փրկչական ամենազօր Խաչը, ոչ պակաս փոյթ տանելով նաև մեր գեղահաւատ աշխարհի զաւակների մտաւոր կրթութեան, որի պարապմունքը շատ անգամ հանդիսանում էր ինքն ուսումնասէրն Տրդատ. «Տայր հրաման թագաւորն Տրդատ յաշխարհսդ և ի գաւառաց բազմութիւն մանկտւոյ ածել յարուեստս գպրութեան . . որ և անդէն յաման թօթափել . . աւետարանաժառանգ լինէին» (Անդ 484):

Ահա ասիկ երկու անզուգական բարերարները այսպիսի չնաշխարհիկ գործերն էին պատճառ, որ մեր ազգի շատ հանճարաշատ զաւակների ականջին երբ հնչել են նոցա առնունները, ձեռքա լցուել են այլ ևս սգեւորութեամբ, և ապա մէկն իւր տպով, մէկն իւր գանձով, մէկն իւր շարականով աշխատել է անմոռանալի պահել նոցա բարերար անունը և վեհագործութեան յիշատակը մեր Ազգի և Եկեղեցւոյ մէջ:

Սուրբ Գրիգորի և Տրդատի ածելի առնուանն նուիրուած այսպիսի անմահ յիշատակներ պարունակող երգերի թուում, ահաւասիկ «Արարատի» միջոցաւ ի լոյս ենք հանում մի քանի գեղեցիկ շարականներ, առնելով Մ՝այր Աթոռոյս 1588-ից և 1603-ի ձեռագիրք և անթուական Շարականներից, որոնցից մէկը (1588) [1] գրել է մի ոմն Սարգիս երէց, իսկ միւսը (1603) մի ոմն Առաքել ուսաի և մենք առանց այդ թուահամարները կրկնելու, գրութեան ընթացքում կը կոչենք Սարգսի և Առաքելի Շարական: Իսկ թէ ով է, Լուսաւորչից և քաջադործ Տրդատի այս պատուական շարականների հոչակաւոր հեղինակը, ահաւասիկ մեր քաղած տեղեկութիւնները:

Սարգիս երէցը իւր փարթամ Շարականի մէջ գասաւորել է հին շարականները կըրճատ գրութեամբ, իսկ նորերը բաց ձեռով, այսինքն, բառերը ամբողջ ամբողջ գրած. և նա այդ է, համարում և բաց գրում Սկսեալս Շնորհալոյ և նրա յաջորդների բոլոր գրուածները, այդ համարելով միևնոյն անգամ Շնորհալոյ գրած Մեծի պահոց կիւրակէից բոլոր Օրհնութիւնները իրենց լծորդ շարականներով՝ ասելով, «Ով պատվեալդ յաստուածոյ թէ զաղջից կիւրակեաց զնորեն գիտես, գՁեռան ներսէսի երդեան. նա ասա զամէն մէկ կարգաւ իւր տեղն» էջ. 230 [բ]:

Սարգիս երէցը իւր այս ընտիր շարականի հետ գրել և կազմել է, նաև մի Տօնացոյց, և հին ու նոր շարականների հեղինակների մի ՅուցակՀ [1] ուսաի ասում է, նա Լուսաւորչի երկու տօների ժամանակ երգուելիք շարականների մասին իւր Տօնացուցում «Ի Շ. սրբոյն գրիգորի են ի վիրապին. հյն. զնորն ասա. Եւ թէ, ոչ. Որ առաքեցեր.[2] ի Սահմի առան»: Շ՚ի. Տաւն սրբոյն գրիգորի. հյն. Որ առաքեցեր զս. Եւ թէ, գիտես զնորն. ի Տրէի. Ժ.» էջ. 224 [ա]:

Արդ՝ բանալով իւր գրած հեղինակների ցուցակը, Սարգիսը հանում է մեր աչքի դիմաց այդ նոր շարականների պատահական հեղինակին, «Ձեւ զսուրբ գրիգորին զնորեն Տէր ներսէս կաթուղիկոսն Պաւեցին ասաց» էջ. 222 [ա]:

---

1. Շարականիս մանրամասն նկարագրութիւնը տես մեր յօդ. 1894. Մարտ „Արարատ":

1. Այս ցուցակի մէջ իրրև վերջին շարական գրող երեւում է Գրիգոր կաթուղիկոս Ապաւարգեցին, որը նստեց կաթուղիկոս 1293 թուին, եւ մնաւ 1306-ին (Զամ. Պատ. Հատ. Գ. 289, 509): Հայրապետիս գրած բազմաթիւ շարականներից տես „Սիոնում" 242) գտնուում են Սարգսի Շարականի մէջ միայն երկու հատ — „Հիման առաքեալն" եւ „Ձերիս անձինս բաժանեալ":

2. Լուսաւորչի բմ. Հրց-ը, որը իրրեւ հնագոյն շարական, դրուած է Սարգսի Շարականի մէջ կրճատ գրութեամբ:

Սրտաբորբ պրոնելով Սարգսի Եարականի մէջ Ներսէսի զրած սրբոյն Գրիգորի «գնոլբերն», որոնցով ասնում էին նրա «Ձէն ի վիրապէն», որ պատահում է ամառ ժամանակ և սովորաբար Յունիսի մէջ, գտնում ենք բայ գրութեամբ —

«Վարպ. սրբոյն Գրիգորի Լուսաւորչին. Աւրհնութիւն»։

«գն։ *Սոսկալի առիւել ասասուածոյին.* [1]
«յդ. *Ի հաւրէ, զարդարեալ հայրական.*
«գն։ Հ. *Որ ի հաւրէ առաքեալ արեգական.* [2]
« ո. *Որ կոչեցեր զհեռացեալքս ի հարցա.*
« պ. *Այսաւր զիմանալի լուսոյն ծագաւ գն.*
«գյ։ Ղ։ *Այսաւր տաւնէ եկեղեցի ուրախ.*
«ակ։ Եբ. *Անճառելի շնորհաւք ասւար զաւակ.*
«յդ. *Ով երջանիկ սուրբ Գրիգոր քաջ է.* [3]

Նոյ Ներսէսի զրած սրբոյն Գրիգորի «գնոլբերն», որոնցով կատարում էին նրա վեծաղլուխակ «Ծաւնը», կամ նրա «Մ՚ուտն ի վիրապն», որը ընկնում է Մ՚եծի պահոց Չ-րդ Եարաթի օրը, սոքա էլ ամբողջովին գտնում ենք Առաքելի Եարականի մէջ՝ այսպէս,

«Եարաթի առ Գրիգորի Լուսաւորչին»։

« գն։ *Որ յանճառելի փառաց միածին Ծա.*
« + *Ցնծա այսաւր եկեղեցի հեթանոսաց.*
« Հ. *Որ ի հաւրէ, առաքեալ արեգական ար.* [4]
« ո. *Որ կոչեցեր զհեռացեալքս ի հարսանեաս.*
« պ. *Այսաւր զիմանալի լուսոյն ծագ[աւն].*
«գյ։ Ղ։ *Այսաւր տաւնէ եկեղեցի ուրախ.*

Արդ՝ մի կողմ դնելով այս կարգից Լուսաւորչիս Հարցը Ո-ան, Տ-ը և Մ՚կ-ը, որոնք ինչպէս տեսանք ըստ վկայութեան Սարգսի և Հ. Ալիշանեանի ձեռքն հասած մի օրինակի՝ որ «ընծայի Ներսէսի Շնորհալւոյ», բայց թէ մնացած երկու կտոր մեզ անծանօթ օրինութիւնը, որոնք չկան Սարգսի Եարականի մէջ, գրել է պրեօք Շնորհալին։ Այս հարցը, կամ լաւ էս ասել տարակուսանքը, մենք լուծում ենք հետեւեալ երկք ապացոյցներով. ա. Սրբոյն Գրիգորի ասնի առթիւ գրած՝ Սարգսի Տնտացուցի և Առաքելի Եարականի յարմնըման յիշատակութիւնով՝ ինչպէս տեսանք վերը։ բ. Սարգսի ցուցակով ուր երբ թուում է նա Ներսէսի գրածներըն, Ներսէսի իւր ձեռքը չհասած շարականների մասին վկատին սրտով ասում է, «Եւ այլ բազումն զոր ոչ գտի»։ արդ՝ այդ «բազում» շարականներից թերևս մին է և յիշեալ անծանօթ օրհնութիւնը. և գ. Առաքելի Եարականի հնութիւնով որը տարբերուում է, Սարգսի Եարականից հետևեալ կերպով. Յակոբ Կլայեցու «Երգեցիք սրգիք սիոնի» յայտնի շարականը, որ սովորաբար գրում է ձեռագիրը և տպագիր Եարականների սկզբում և Վարդան վարդապետի «Ամենատուրը երրորդութեան» յայտնի շարականը, չկան Առաքելի Եարականի մէջ, մինչդեռ սոքա Սարգսի Եարականի մէջ գրուած են իրենց տեղերում և աւելացել են Առաքելի Եարականի մէջ (Երգեցիքը սկզբից, Ամենատուրը վերջից) մի ումն Մ՚ովսէսի ձեռքով Հայոց 1107 կամ վրկչական 1658 թուին հետևեալ ծանօթ շարականների հետ նրա վերջից—Այսօր գրաւարձացեալ, Լերինք ամենայն, Արևելք գերարփին. Յաւուրս վերին, Ի յանսահման ծովէն, Խորհուրդ խորին, Յայս յարկ, Միւրոյի հայրապետի—Մ՚անկունքը նոր սիովնի, և սրբոյն Մ՚ինասայ—Չյիշատակ վկայից։

Այսպէս ուրեմն Առաքելը ժամանակով աւելի մօտ լինելով Շնորհալուն քան Սարգիսը, Սարգսի յիշատակած «Սրբոյն Գրիգորի գնոլբերն» թերևս գիտէր և Առաքելը որ գրել է սուրբն Ներսէս Շնորհալին, և այս պատճառաւ գրեց Շնորհալու գրած վերոյիշեալ Հարցէր Ոզ-ը, Տ-ն, Մ՚կ-ն ձակատին՝ իրրև օրհնութիւն։

Գալով քաջազործ Տրդատի շարականներին, Սարգիսը ասում է իւր Տնտացուցում—«Ի-

---

1. Եարականիս սկզբնատառերը յօդում են — Սուրբ Գրիգոր։

2. Այս հարցը իւր լծորդ Ո-ի, Տ-ի, Մ՚կ-ի հետ երբեմն վաւերական շարականները երգուում են այժմ, եւ տպագիր Եարականների մէջ դրուած են Պետ. Ծոմ. վարդապետի գրած „Այսօր գրաւարձացեալ"ը անծինքի տակ։

Բազմարդիւն Հ. Գ. Ալիշանեան հետեւելով յետին դարերի մէջ շարականների հեղինակների ծուռցակ պատրաստող գիրչներին, այս մի խումբ շարականները ընծայում է Մ՚ով. Խորենացուն, սակայն ոմն մեծ զանազանութիւն գտնելով շարականներս եւ Խորենացու գրածների մէջ՝ ասում է, „Աստանօր նդեալ հարցն եւ այլ լծորդք իւր՝ զկնարին դարուց ոմն առաւել յինքնանս քերեն, քան զվարդենացուին։ Սրինակ ինչ ընծայէ Ներսեսի Շնորհալւոյ"։ Բաց. Շնորհ. 199 – 200։

3. Նրանի՝ մաշու.

4. Տես 2 ծանօթութիւնը։

Տրդատա թագաւորի. Եւ աշխէն տիկնոջն. Եւ Յոսրովի դեստ. հցն. զնորն ասա. և թէ չգիտես. աւրհնեմք զքեզ Քրիստոս Թգ.»[1] *Թղ. 224ա։*

Այս նոր շարականներն ևս Տրդատի մեզ ծանօթ «Որ գերագոյն քան զբնութիւնս» յատուկ Մկ-ն հետ բաց գրութեամբ գրուած են Սարգսի Շարականի մէջ՝ այսպէս—

«Կանոն Տրդատայ սուրբ Թագաւորին»

«Բ՝. հ. *Որ անխմանալի ասուածութեամբդ.*
« ո. *Որ ողորմութեամբ քո տէր ողորմեցար.*
« պ. *Թագաւոր հզաւր բաշխաւղ.*
« Ղ. *Որ գերագոյն քան զբնութիւնս.*
\+ *Հրաշափառ ծագումն ի հաւրէ.*[2]

Ո՞վ է արդեօք և այս ընտիր շարականների հեղինակը։ Սարգիսը ասում է իւր ցուցակում «Եւ մանկտի բազում շարականներ. . . . Տէր Ներսէս կաթուղիկոսն Կլաեցին ասաց»։ Այս ոճով է խօսում հին ու նոր շարականները զատող և մի անյայտ գրիչ «Եւ այլ շատ աւագ մանկտի և շարականք . . Տէր Ներսէս Կլայեցին հայոց կաթուղիկոսն է երգել»։

Բանալով Հ. Գ. Աւետիքեանի «Հացատարութիւն Շարականաց» գիրքը, թէպէտ Հ. Աւետիքեան ըստ վկայութեան Կիրակոս Գանձակեցու ընդունում է որ Տրդատի «Որ գերագոյն» Մ՝կ-ը և Թագաւորաց «Որ վերկնաւոր» օրհնութիւնը գրել է Ներսէս Շնորհալին, «ի պատմութեան Կիրակոսի՝ ասի արարեալ ի Շնորհալւոյն», բայց նա չգիտեմ ինչ աղբիւրների հիման վերայ ընծայում է Մովսէս Յոսրենացուն՝ աւելացնելով ևս, «այլ ձեռագիրք ընծայէ Յովհանու Մանդակունւոյ» (Բաց. Շրկց. 115)։

Արդ՝ թէ Մովսէսը կամ Մանդակունին Թագաւորաց կարգից եթէ գրել են մի բան, սոքա են—

ա՝. հ. *Օրհնեմք զքեզ Քրիստոս Թագաւոր.*
բ՝. ո. *Աստուած վերկիր մեր լուր մեզ.*
պ. *Ով երանելի և բարեպաշտ.*
գ՝. Դ. *Ով երանելիդ ամենեցուն,*

որոնք իբրև հնագոյն շարական, դրուած են Սարգսի Շարականի մէջ կրճատ ձևով. իսկ Ներսէսի գրածն են արդարև Թագաւորաց «Որ վերկնաւոր», որը դրուած է Սարգսի Շարականի մէջ բաց գրութեամբ Յոսրենացու կամ Մանդակունու գրած Հարցի, Ո-ի, Տ-ի, Մկ-ի և Տրդատի նոր Հարցի, Ո-ի, Տ-ի, և Մկ-ի ճակատին՝ իբրև օրհնութիւն, և «Որ գերագոյն» մանկունքը, որը դրուած է Տրդատի շարականների մէջ, ինչպէս տեսանք. բայց թէ Տրդատի այս նոր Հարցը, նոր Ողորմեան, և նոր Տէր յերկնից Շնորհալի Հայրապետի գրչի վաստակներն են, այս մասին չունինք մի ապացոյց, բայց միայն ասել, որ մի մարդ չէր կարող գրել մի ծանի Մանկունքը. առանց կանխապէս գրելու նրա Օրհնութիւնը, Հարցը, Ողորմեան և Տէր յերկնից։

Հանելով մեր այս յօդուածում յաջորդաբար մէջ բերած սուրբ Շնորհալու մեզ ծանօթ շարականները, ահաւասիկ տալիս ենք մեր ընթերցողներին միայն անծանօթները։

Սահակ Վ. Ամատունի

17 Մարտի 1897. Ս. Էջմիածին.

№ 1588—Յ։ ՍԱՐԳԻՍ ԵՐԷՑԻ ՇԱՐԱԿԱՆՆ. ԹՂ. 159ա։

«Վարզ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին. Աւրհնութիւն»

«Բ՝.

Սոսկալի տեսիլ աստուածային հրաշիցն իմանալի լուսոյն ի վեր քան զվիտս բարձրագոյն խորհուրդ քեզ յայտնեալ. որ զքեզ ընտրեաց յատաքելական յաթոռ, ով տէր սուրբ Գրիգոր։

Որ վերին տեսչութեամբն աստուածային շնորհաւք յորովայնէ սահեցեալ, և սատարօք շնորհս առաքելական հաստատան աշխարհի լուսազարդ բանիւ զբանըն կենաց արնկեալ ի մէջ յեկեղեցւոյ։

Ախթիւ ամենասուրբ հոգւոյն ճշմարիտ հաւր և որդւո վառակից. աղբիւրաբար հոսեալ վրատակ մշտընչենաւրեայ վարդապետութեամբ. որով զուարճացեալ բերկրին միշտ ուրախութեամբ եկեղեցիք սրբոցն։

Բաբունեացն վեհից եւ բոլորից սրբոց եղեր առաջնորդ անտանելի քո չարչարանաւք. եւ յաւէտ արիաբար ժուժկալութեամբ ժա-

---

1. *Թէոդոսի Թագաւորի առ. հարցը, որը իբրեւ հնագոյն շարական, դրուած է Սարգսի Շարականի մէջ կրճատ գրութեամբ։*

2. *Թերևս ճաշու։*

ռանդորդս արարեր զորդիս բազումս լուսո աստուածութեանն հաւր ընծայեցեր։

Բարուեալ ծագեալ յաստուածային տընկոյն անմահութեան շառաւիղ մեզ շնորհեցար, որ զհոգևորն արբուցանես զուրախարար բաժակն բանաւոր հաւտի քո աշակերտեալոցս նոր ժողովրդեանս։

Դերագոյն պայծառ և բաղձալի ցուցանիւր շնորհք քո խնամոութեամբդ։ եւս առաւել սէրն Քրիստոսի ի քեզ կատարեցաւ։ որ քոյին պարկեշտ վարուք ի մարմնի փայլեալ երևեցար որպէս անմարմին զուարթուն։

Բոպէից ազանց մաքրութիւն եւ սեռակ բարի բանաւոր սեռից։ հոգանիւթ դոլով հեռեւող անձառ հրաշագործութեամբ արփիակերպ հրանիւթ բնութեանն երկնաւոր անմարմին զաւրացն։

Ի բարձրագոյն կամարըն վերին մրափեցն առաքինութեամբ քո ի յերկրէ հասեալ ժամանեցեր։ եւ երկնաին ճանապարհացն զրաատր գեղեցկապէս գնացիւք։ զելս ի մոի եդեր ելանել ի մարմնո ի կենցաղոյս հովուէս։

Գերազարդեալ արփիահրաշ վաելչապէս հանապատաւ շնորհք քո յաւժարութեանտ։ որ զվերջինս առաւել փայլեցուցեր զհանդէս քաջութեամբ խաչակիր կրօնիւք, միշտ մեռելութեամբ աշխարհի խաչեալ։

Որշեալ յերկրէ և ի ստորին կենցաղոյս յապականութենէ։ գործակից գոլով սրբոց մարգարէիցն եղիաի և յովաննու ի գլուխ լերանց յայրս և ի ծերպս վիմաց աղաւթեալ հանդեար։

Բաբունի ընդրեալ ճշմարիտ հովիւ բարի եւ քահանայապետ աստուածային կոչմանէն։ անկանիմ առաջի քո սուրբ նըշխարացդ հայցմամբ բազկատարած պաղատանաւք։ յիշեսջիր զմեզ առաջի քրիստոսի՝ որ տէր սուրբ գրիգոր։

Յէ։

Ի հաւրէ զարդարեալ հայրական շնորհաւք պըսակեալ հայր ազգաց բազմաց սուրբրդ գրիգոր։ հաւրն երկնաւորի ճշմարիտ պատկեր։

Ի յորդւոյ առաքեալ որդիական սիրով հարազատ [1] որդի լուսո եւ տուընջեան սուրբրդ գրիգոր։ որդւոյն աստուծո կերպարան փառաց։

Ի հոգւոյն ընդրեցեալ հոգևոր որդոց [2] լինել հոգով հովանի, հաստատանեաց հայր հոգևոր սուրբրդ գրիգոր։ ամենասուրբ հոգւոյն անօթ ընտրութեան։

Բազմաչարչար նահատակ յետ քրիստոսի յոյս և ապաւէն աստուածագործ [3] ճնաւղ սուրբրդ գրիգոր։ մեղուցեալ որդւոցս միշտ բարեխաւսեա։ [4]

ակ. հբ.

Անձառելի շնորհաւք տուար զաւակ թագէոսի սուրբ առաքելոյն։ ժառանգեցեր զհիւսիս և զարեւելս [5] բնակչաւք զաւառաց մինչև ի մուտս կազրից աշխարհի, երանելի տէր սուրբ գրիգոր։ հայր և հովիւ ազգաց և ազանց։ անդադար բարեխաւսեա վասն անձանց մերոց։

Աշխատեալ մշակդ յերկրի, ապա եդեալ ի խոր վիրապի։ վաստակեալ ժամանակաւք ամաց և ամաց։ վերաբերեալ սիրով ընդ քեզ զընկերվեալս ի խոս անդընդոց, երանելի տէր սուրբ գր[իգոր], ճարտար բժիշկ ախտաժետաց և ցաւագնոտաց։ անդադար։

Ի շխանակից սուրբ պետրոսի և բանալի երկնի և երկրի, սիւն ամպո ի ջմամբ միածնին ոսկի ուռամբ զահեր ըզզուխըն բեկեալոյ, երանելի տէր սուրբ գրիգ[որ]։ անշարժ հիմն և պարիսպ սուրբ եկեղեցո։ անդադար։

Յէ։

[6]Ով երջանիկ սուրբ գրիգոր քաջ և յաղթող հայրապետ։ զաւանաւղ փրկչին և առաջնորդ հաւտի ճշմարիտ արմատ աւրինաւորն տեառն, որ ժուժկալեցեր առաքինութեամբ համբերեալ բանդից և գերլարանաց։ յաղթեցեր կարեաց հոգանիւթ բնութեանս։ լոյս զահագուցեր հաստատուն ազգի։ հայցեա

1. Հ. — հայրազատ։
2. Հրատարակում — «ա ր ա ն ց»։
3. Հ. — աստուածագործ։
4. Հարցը, Ո. Տ. Մկ. տես յօդուածիս մէջ դրած նոյն Սարգսի 8 ա ն կ ի մէջ։
5. Հ. — զարեւեալս։
6. Երեւի ճաշու։

զմոզութիւն ի վերնատուղէն մեզ մեզուցեալցս։

Որ լսեալ շինուցեր զմահարեր բերանս թիւնաւոր աւձիցն ի խոր վիրապին. և անձառելի հրաշագործութեամբ երրակի հնգիւք զմազ պարծանաց ի գովեստ փառաց անեղին զատաւ. հայցեա զմոզութիւն։

Որ առանձնեա ազատեալք բարձրանշան և սուրբ հաւատով ի պարթևական մեզապարտ յաղէն ծարիալ շառաւեալ մեզ ասէր սր. գրիգոր. հոգևոր և սուրբ ամպծութեամբ բրղևեալ զյաւգ բժշկութեան գիւտպաշտ ապգին առ ի յարբուցումն ատտուածգիտութեանն. հայցեա զմոզութիւն։

№ 1605 — Լ. Ս. ԱՌԱՔԵԼԻ ՇԱՐԱԿԱՆ. Թ. 105։

«Շարամ աւր Գրիգորի Լուսաւորչին»։

Ք՝.

[1]Որ յանձառից փառաց միածնին[2] ծաղեցար լոյզ արփիական, Աշմարիա գաւակ ի սիոնէ. որ յարևելից փայլեալ յազանց[3] պարթևական, և յայանապէս հընչել[4] զանբաւկիզբն հայր՝ արարիչ բոլորից։

Որ արփիափայլ ծագմամբ երևեալ մարմնով ի սուրբ վիրապին անհիւթ ապատնին. քանզի անհաս թանձրացեալ զանմարմինն ի մարմնի, և էապէս փառաւորեալ զբանն կենդանի [5]էակից ընդ հաւր և հոգւոյն։

Որ լուսազարդեալ ցուցար [6]ի յերկրի իսկապէս վկայ պանձալի. ուսաի եկեալ ի մէջ մահարեր շընչոց կենդանեաց. և ընդհանուր [7]ծաւալեալ զհոգին Աշմարիա փառակից [8]ընդ հաւր և որդւոյ։

[9]Որ զարարչականն ընկալեալ պատուէր քարոզել զաւրէնն միածնին, երրորդութիւն կատարեալ ի մի աւրէնութիւն փառաւք. և աստանաւր զանահան ի յելից ախրապէս ծանուցեալ ելից։

* Յինծա այսաւր եկեղեցի հեթանոսաց նորոգել զնոսս իսրաել կոչմամբ [10]զրիգորի. զարդարեալ զեակս ի բնութիւն մարմին հոգեղէն, և պարագրեալ զանպարագրելին [11]զբանն մարմին եղեալ։

Յինծան[12] այսաւր մանկունք վիրին նոր սիոնիի, [13]դուռն արևելեան կողմանց հիւսիսոյ, քանզի տեսուչ եկեալ բանաւոր հաւտին. և փարատել զմէգ խաւարին, զլոյսն կենաց հեղեալ ի ձեզ։

Յինծա այսաւր անմարմնոյ բազմութիւն, միախմբելով ի բնութիւն հոգեկն. զի անձառբանն աստուածէ երևեալ մարմնով [14]ի յերկրի, և պարակցեալ ընդ մեծապայծառ ճրգնութիւնըդ իսկապէս էացեալ ի քեզ։

Ահաւոր քումդ հրաշիւք միացար ի մարմնի յանձառելի ծնունդ հայրենի. համահաւասարեալ ըս ի տաճար սրբութեան պատահիմ քանզի և մեզ փառաւք եղանել ընդ [15]քեզ ով հայր փրկագործ և տէր։

*... [16]Ծագմանդէմ յարչաւանաւք նահատակեալ յերկրի, վշաւք և գելարանաւք, իջանելով ի վիրապին՝ վերարկեալ զգոյս Հայաստանեայց ի լոյսն անստուեր, երանելի տէր Ս. գրիգոր, Հայր և Հովիւ ապրաց։ [17]

№ 1588 — Ժէ. ԱԱՐՑԻՍ ԵՐԿԱՅ ՇԱՐԱԿԱՆ. Թ. 32ա.

«Վանին. Տրդատայ սուրբ թագաւորին.» *

Յ՝. Հ.

Որ անխմանալի աստուածութեամբդ քո հայր երկնաւոր և թագաւոր, ի ձեռն սուրբ լուսաւորչին զարքային հաւտ սպրդատիս նոքաստանգծեալ զարդարեցեր թագաւոր. աւրհնեալ աէր աստրուած հարցն մերոց։

---

1. Բազմաշխատն Հ. Ալիշան այս նոր Օրինութիւնը մուծել է իւր «Այրարատի մէջ (երես 440). Հ. Ալիշանի եւ Առաքելի օրինակների մէջ կան բաւականին տարբերութիւններ, որոնք եւ նշանակում ենք, բաղդատելով միմեանց հետ։

2. Առաքելի Օր. — «Որ յանձառելի փառաց Միածին»։

3. Հ. Ալիշանի Օր. ազանց,

4. . . . . — հնչեալ.

5. . . . հիք — «էակից»։

6. . . . հիք — «ի»։

7. . . . — փառաւորեալ.

8. . . . հիք — «ընդ»։

9. . . . հիք — ամբողջ տունը.

10. Հ. Ալիշ. Օր. — սբզոյն գրիգորի.

11. . . . բանն

12. Առաքելի Օր. ցինծա.

13. . . . . — դուռն արեւելեան կողմանց հիւսիսի.

14. . . . . — յերկրի.

15. Առաքելի Օր. ընդ ձեզ.

16. Այս մի տուն շարականը, որ չկայ Առաքելի օրինակի մէջ, ինչպէս գրութեան ընթացքից երեւում է, նոր շարականի սկզբնաւորութիւն է. սակայն ափսոս որ լիու չէ։

17. Հարցը, Ո. Տ. Մկ. — տես յօդուածիս մէջ դրած նոյն Առաքելի Ցանկի մէջ։

* Օր. ակ. «Որ զերկնաւոր թագաւորութեանդ»։

Որ պատուաճատաստ գաւազանատ քո հարեր առ ի խրատ գարքարին, որդիտ միածին. և վերջոյին հատատեցեր զամեռս թագաւորին մերո տրդատա. աւրհնեալ անբ ատուածդ։

Որ բղփատակցին քո հարը և որդո կատարեցեր գկամն հոգիտ Աչմարիտ. գրթութեամբ և ողորմութեամբ յուսատրեցեր բղմագաւորն հատատանելոց, արդանդ մարդու սուրբ աւազանատն. աւրհնել. անբ. ատած.

Ը. Ըզանբ աւրհնեցիք բարձր արարիք ըզ[նա յաւիտեան]։

Չամենամեծագործն բղհայրն երկնաւոր թագաւորք երկրի ցրնծութեամբ բզանբ աւրհնեցիք բարձր արարիք զնա յաւիտեան։

Զփառատիրց որդին բղճնեալն ի կուսէ գովելով որդիք մարդկան բզանբ աւրհնեցէք. բարձր արարիք զնա յաւիտեան։

Թ. Որ ողորմութեամբ քո տէր ողորմեցար թագաւորին մերո տրդատա. և եառ ի մարգասիրատիս շնորհս և ողորմութիւն. ողորմեա մեզ քրիստոս անմահ թագաւոր։

Որ ատուածդանին փառաւոր պրատիկցիր գարքարն ի ձեռն Աչմարիտ քահանատապետին. և եառ ի գիրատունս արդարութեան ի ձեռն սորայ. ողորմեա մեզ քրիստոս անմահ թագաւոր։

Որ գերազոյն շնորհատ բարձրացուցեր գեղջիւր սուրբ եկեղեցո. ու բանաւորութեամբ և սիրով լուանեցեր զաղգս մարդկան բնդ որդիս լուսո. ողորմեա մեզ քրիստոս անմահ թագաւոր։

Ժ. Թագաւոր հզաւոր բաշխող բարութեանցդ գեկեղեցի քո անշարժ պահեա աղաչանատ թագաւորին քոյ և յաղթող մեծին արդատա. վասն որո և մեք աւրհնեմք զանմահ թագաւորդ։

Որ զուարճացուցեր վառատ գմեծն աշխարհն արիւնն և զաւրիորդըն խոստովիզուհատ զարմացուցեր անբնաւոր հոգով զդրիդորիոս պահել կենդանի. վասն որո և մեք աւրհնեմք զանմահ թագաւորդ։

Որ ի ձեռն Աչմարիտ սուրբ լուսատարչին հատատանեցեր գմեծագաւորն մեր. որ բազմաչար չարչարանատ ի խատարէ կռապաշտութեան զարձոյց գմնորիալքս. վասն որոյ և մեք երգեմք բղփառս ի բարձունս։ [1]

* [2] Չքաշափառ ծագումն ի հարեն, որ պարագրեցար յերկնից յորդանդ կուսական. նատար յամեռս գաւթի աւծեալ թագաւոր. շնորհեա տրդատա զամեռս ոխրական։

Հոգի հզաւր բնութեամբ ի հարէն, որ ատատնակերպ իջեր ի յորդանան, ատատր յերկնից լոյս ծագեցար փայլմամբ թագաւրքատածին որոդոյն խոստովու։

Որ ի ատատեալ սիրո արդութեան գաւրացան գաւակքն [3] հաղարատծին. խոստատ բարիութեամբ սրով քո սատակեա գուբացոգոն. կանխել վերատին գնշան փրկչական։

Ա Զ Գ Ա Յ Ի Ն·

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ· ՄԱՅՐ Ա Թ Ո Ռ·

Մ ԱՅՍ պահոցիս մէջ վկհատատ Հայրապետի կարգադրութեամբ քարոզ է խօսուած կիւրակի, երեկոնեըը Մայր Տաճարում և շարթի երեկոնեըը կամ կիւրակի առաւօտը վաղաբշաղատի ակեղեցում։ Առաջին կիւրակէին Նորին Սրբութիւնը խօսեց Մայր Տաճարում, բնատան և նիւթ բնտրելով Նոյի Մարգարէի ծրը գլուխը, որի մէջ Աստուած մարգարէի բերանով ցոյց է տալիս իւր ժողովրդին, թէ ինչպէս պէտք է պահք պահել որ ընդունելի լինի Իրեն. այն է՝ բրգել հաց քաղցածին, հագցնել մերկին, պատսպարել օտար անատն ազգատին, քակել անիրաւութեան բոլոր կնճիռներն, հրաժարուել մարմնական ցանկութիւններից, որոնք մարդուն հեռացնում են Աստուածպաշտութեան ճանապարհից. այդ ժամանակ միայն մեր պահած պահքը ընդունելի կլինի։ Այն պարզ ճաշին ու զգայուն լեզուաց [4] որ Հայոց Հայրիկին միայն յատուկ են, Աստուծոյ խօսքը բացատրելով Վ.Ի.Ց. Հայրապետն ազգս յորդորներ կարդաց անանկ և թշուառ գաղթականներին օգնելու համար։

Բ. կիւրակէին խօսեց Գեր. Տ. Գրիգոր Արքեպիսկոպոսը բնատան առնելով Ս. Գիրս Առաքեալի խօսքը. «որ գհոգի Քրիստոսի ոչ ունի, սա չէ նորա»։ Ընդարձակելով իւր խօսքը Նորին Բարձր Սրբազնութիւնը յորդորից ժողովրդեան չքնդիլ աշխատանքի ճշմարիտ վարդապետութիւնից Քրիստոսի հոգին իւր մէջ արձարծելով։

1. Մանկունքը — տող գերագոյն։
2. Նրեսի — ճաշու։
3. Զ. զաւակն։

Դ· Կիւրակէին դարձեալ խօսեց Նորին Վեհափառութիւնը· Հին օրինաց պատուէրներով, մեծատան և աղքատ Ղազարոսի, ինչպէս նաև Յայտնութեան մէջ յիշուած անողորմ Պետրոսի օրինակներով ու ժողովրդական ասացուածներով պատկերացրեց ողորմածութեան, իրրև ամենամեծ առաքինութեան, վեհմտութիւնը, յիշեցրեց վերջին դատաստանի վճիռը, որով ահեղ Դատաւորը ողորմածներին է միայն հրաւիրում· «Նկա՛ք, օրհնեա՛լք Հօր իմոյ, ժառանգեցէ՛ք պատրաստեալ ձեզ արքայութիւնն ի սկզբանէ աշխարհի· ղի քաղցեայ, և եատ՛ք ինձ ուտել· · ·»: — Ունկնդիրները հեռացան տաճարից այն տպաւորութեամբ, որ անզուգական Քարոզիչը՝ Թէպէտ ծերութեան ալեաց և վշտալի հոգոց ծանրութեան ներքոյ ճնշուած, դեռ կենդանի է պահել տասնեակ տարիներէ ի վեր իւր ժողովրդի սրտի և հոգու հետ խօսող նոյն ճարտար լեզուի բոլոր զօրութիւնը:

Դ· կիւրակէն խօսեց Դեր· Մակար սրբազանը սրտի և հոգւոյ մաքրութեան մասին, Նրուսաղէմի տաճարի օրինակով բացատրելով, թէ ինչպէս Աստուած միայն սուրբ տեղ բնակել կարող է· և ուրեմն մեր սիրտն այն ժամանակ Նորա համար բնակարան կըլինի, երբ մաքրուած է ամեն տեսակ ամբարիշտ մաքերից և աղտեղի զգացումներից:

Վեհափառ Հայրապետի հրամանաւ վաղարշապատի դիւղի եկեղեցում քարոզում են վարդապետները· այդէն խօսեցին Տ· Տ· Կարապետ, Նղիա և Սահակ:

Վեհափառ Հայրապետը ս· Էջմիածնի դաստառի գիւղական ժողովրդեան հոգևոր կարօտը լցուցանելու համար, բարեհաճեց Կոնդակաւ նշանակել Տ· Կորիւն վարդապետին քարոզելու Մեծի պահոցս ընթացքում: Բարեշն· Հայր Կորիւնը եռանդով կատարում է այդ պեղեցիկ գործը:

Ամսոյս 7-ին Ս· Սինոդում տաւին հպատակութեան երդում Մայր Աթոռի երեք միաբան· (նախկին տաճկահպատակ) Տ· Գէորգ Ոզշատունի, Թովմաճաղդասարեան և Կորիւն Սահակեան վարդապետները· երդմնուեցնողն էր Տ· Ղուկիկ վարդապետը:

Մայր Աթոռի վանական կառավարութեան անդամներից Դեր· Տ· Ենանիա եպիսկոպոսն անձնական ակարութեան պատճառաւ հրաժարական մատոյց, որ և ընդունուեց Վեհ· Հայրապետի կողմից:

Վեհափառ Հայրապետի հրամանաւ ամսոյս 23-ին Գեր· Մակար եպիսկոպոսը Վաղարշապատի եկեղեցում աբեղայութեան աստիճան տուեց Մայր Աթոռիս միաբան Շնորհ· Բագրատ սարկաւագ Մատթէոսեանին, վերակոչելով Մատթէոս· Նորա հետ ձեռնադրուեցան նաև երեք քահանայ, որոնցից մէկը Գէորգեան ճեմարանի դպրոցական մասի ընթացաւարտ է:

Ամսոյս 22-ին ճաշից յետոյ Վեհ· Հայրապետը բարեհաճեցաւ Երևան գնալ մի քանի կարևոր առաջնորդական և դպրոցական գործեր կարգադրելու համար:

Հետևեալ օրը կիւրակէ երեկոյեան Ս· Սարգիս եկեղեցւոյ մէջ Նորին Օծութիւնը հոծ բազմութեան ներկայութեամբ խիստ ազդու մի քարոզ խօսեց, բացատրելով առնիրաւ դատաւորին, փարիսեցու և մաքսաւորի առակներով աղօթքի ոյժը և նշանակութիւնը:

Երկուշաբթի երեկոյեան Նորին Սրբութիւնը ողջմամբ վերադարձաւ Մ· Աթոռս:

Ամսոյս 23-ին ճեմարանի վարչութիւնը ս· Պատարագից յետոյ հոգեհանգստեան կարգ կատարել տուեց ի յիշատակ ճեմարանի նախկին տեսչի և ուսուցչի, Հանգուցեալ Սիկոդայոս Յոսէփովհանի: Բարեշ· Տ· Կարապետ վարդապետը մի պատշաճաւոր դամբանական խօսեց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ·

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՑԱԿԱՆ

1· Հօնդօնի ս· Յովհաննու եկեղեցւոյ մէջ խօսուած Թորոս քահ· Զուղայեցու Քարոզը· · · · 97
2· Արեգ ամիս · · Կ· Կ· · · 102
3· ՆՇՆՀՆՅԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ · · · · · · · 111

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

4· Մատենախօսութիւն · · · Գրասէր · · 116
5· Ս· Լուսաւորիչ եւ Տրդատ եւ նոցա նոր շարականները· · · · Ս· Վ· Ամատունի · 121

ԱԶԳԱՑԻՆ

12· ՆՇՆՀՅԱՑ ՀԱՑԱՍՏԱՆՆԱՑՑ · · · · · · 84
ՄԱՑՐ ԱՑՈՌ · · · · · · · ·

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ·

ԵԱԻԵԼՈՒԱԾ· Ենանիա Մոկացի, Գ· Տ· Մկրտչեան·

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ·

ՅԱԻԵԼՈՒԱԾ ԱՐԱՐԱՏԻ 1897 Թ. ՄԱՐՏ.

Ա.

[Ա եր. 200a, Բ եր. 121b]

ՏԵԱՌՆ ԱՆԱՆԻԱՅԻ*

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՅԱՂԱԹԻՍ ԱՊՈՏԱՄԲՈՒԹԵԱՆ ՏԱՆՆ ԱՂՈՒԱՆԻՅ

ՈՐ ԸՆԴ ԺԱՄԱՆԱԿԱՒ ԺԱՄԱՆԱԿԱՒ

ԼԵԱԼ ԻՅԵ ՀԵՌՆԱՊՐՈՒԹԻՒՆՆ

ԱՐՏԱՔՈՑ ՍՈՒՐՔ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԱՔՈՌՈՑՆ

ԵՒ ԱՆԱՆԻԱ հնոլհիւն Աստուծոյ նուաստ պատրիարգ, ոչ բաւ գոյացութեան ինչ անուանս եգելոյ իմում գաւոդագիրեր և կամաձեղ [Բ]....[1] , այլ ըստ ներելոյ Տեառն ամենակալի: Եւ բաւ սովորականին[2] անարգամեծար գոլով նորին յառաջատես խնամոյ՝ բաւերաւ կամաց ամենասուրբ Երրորդութեանն, որ նախ քան զաղթեաւիչն յապաւարտակի՝ գիտէ զերկիամուենս, և յառաջ քան զընծայիչն՝ առաքելաշնորհ և մարգարէահոգիս գործէ զոմանս. և որք են հզօր յամենայնի և կարող՝ ի քարանց յարուցանել որդիս հաւատոյ հիւբահրաւէրն Աբրահամու.[3] մանաւանդ ի ձահ պատկանեալ աստանօր զառածս [Ա 200b] ձեղատեսիլ Տարսոնացւոյն[4] ոգեալ[5] պատգամաձապէս զբաներդակին առ բանապաճոյճ բանապարծիկ բարձընաիւր Կորընթացեալն, եթէ Զյիմարս[6] և զանտոհմն աշխարհիս ընտրեաց աստուածն, որպէս զի զիմ կալծեալ էն խափանեսցէ:[7]

Նոյն ողորմութիւն և կամք[8] յառաջատես հնամոզին աստուծոյ և այժմ կամեցեալ՝ զնուաստութիւնս իմ կոչեաց ի մանն վիճակի սրբոցն, լինել աթոռակից սրբոյ և երիցս երանեալ արփիաւորչին մերոյ և Տնօղին հոգևոր՝ նահատակին Գրիգորի, ուստի անմասնապէս զիմն ձանձուհմ կրիսական հիւքութիւն՝ զերագրիլ այժմ պատուի, այլ մանաւանդ [յիմմէ][1] ախոտոտանջե[ա]լ չարայօժար, անարդարարդ և կորստաղմայլ[2] կամացս, ի խուրատուզեալ առաւել քան առ մակահրնակեան Տնտղօքն արարչապատակեր բազկացելոյն լաստափայտիւն[4] գատեալ: Նա և ոչ իսկ հմուտ գոլով մեր ի ձարտարապետութիւն գործոյ աձելութեան, [Բ122a] որք միշտ բանից պարապակալք և բանաւորապէս* կրթեալք, ուսեալք գքերթողականն և գրնարանականն: Եւ բնաբանականաւն գրնախօսելն, և գըստ քերթողութեանն գառ ի միտն քերթ աճել, գատենականն և գգատողականն, գերաժշտականն և գաստղարաշխականն,[5] գհեռւականն և գերկրաչափականն,** որում ոչինչ փուքագոյնս պարապեալ մեր, խոկալով յայսպիսի[6] խորագոյն և գժուարաքննին իրի տեսութիւն, այլ հովուականն և ձգնողական միանաւորութեամբ անեալք յամաս անապատաց և ի ծերպս վիմաքնակս կրօնաքնակ բնակութեամբ: Այլ որպէս վերագոյնն ասացաք՝ ի ներելոյն աստուծոյ հանգիպաւ պիտառացումն այսմ սպասահարկութեան մերում նուաստութեանս, ի շրջանիս Հայոց ՃՂ. բազադրութեանն՝ յաւուրս արի և քաջատոհմիկ հզօրացն երկոցունց[7] Հնքնակալացն[8] Հայոց Թագաւորացն քրիստոսասպասկեալ տեառնն գագկայ Արծրունոյ Հայոց Թագաւորի [Ա] և տեառնն Աբասայ Բագրատունոյ խաղաղասիրի և հեզահամբոյր հզօրի և Մեծի Հայոց[9] արքայի: Հաւանութեամբ սոցա և սոցին Թագադան գաւմիդն և համօրէն եպիսկոպոսաց և վանականաց և այլ ձգնաւորս մենաւորաց, առաջնորդից Հայրմանց և միաձայն բողոքանաց, զոր իբր ի համադոյէն Հոգւոյ բանիցդ*** գոյ ասել[10] զմիաբանութեան[11] բանիցս բերք, զոր թէ կամաւ և թէ ակամայ— ոչ գիտեմ աստուածդիտակ—այլ միայն այս [Բ]

---

1. ԱՒ „յեմէ“=յԲրուսաղեմէ ?
2. ԱՒ կորստազմ այլ 3. Ա կմգւ Բ կմգաս
4. ԱՒ ըստափայտին 5. Ա զաստեղբաշխինն
6. Ա այսպի 7. ԱՒ բոցունց 8. ԱՒ ինքնակալացն
9. ԱՒ մծծի հայոց 10. ԱՒ բանի՝ ցգոյ
11. ԱՒ զմիաբանութիւն
* ԱՒ ի բանաւորապաս.
** Հմմտ. Կորեհացի Ա. բ.
*** Հմմտ. ներբերեալ ասացուածքս. փրկու ի գիւտական հոգւոյն բանից գոյ ասել, եւ «գիւտաբանութիւնս». Մինք աւելի տրամադիր ենք ուղղել «բաշխից».

---

1. ԱՒ „կամ ամէն ...“ մի երկու բառ պակաս.
2. Ա սվրկն Բ սովորկն
3. Ա Մատթ. գ, 9.
4. Բ տարսոնացոյն 5. Ա չունի „ոգեալ“ 6. Բ զիմարս
7. Ա կորնթ. Ա.ա. Ա, 27.
8. Ա ողորմածութիւն եւ կամս
* «Անանիա Մոկացւոյ» մասին տես Արարատի նախընթաց համարը, Գ. Տ. Մկրտչեան.

մեզ է ակահ, զի վճռ կատարեցայ գերապըրեալ քան զկարծն իմ և զմտացն հետևմունս։[1]

Եւ ի հաւատալ ցեառնն ինձ պհօտ իւր, գնեալ քաջարեր[2] արեամբն, յապուշ եղեալ զարհուրեցայ և երկիւղ մեծ պաշարեաց զիս, զի նկատեալ զիրի իրի նշկահումն, որ եղեալ էր յեկեղեցիս ասուածոյ, գոի զոմանս եպիսկոպոսաց ապստամբեալս, և զոմանս յիշխանաց գաւառապետաց[3] և զայլ խառնիճաղանճ ամբոխս քրիստոնէից ի խառն ամուսնութիւն քաղկեդոնականաց։ Քանզի ոչ գոյր յայրկ գուգաւորաց, ուր ոչ էր[4] միւսն Հայ և միւսն Վրացի, ըստ նմին և զառակք տանն յերկմիջս փեղկեալ և ի բազմակուսակ չարեաց բազմութեան ցամաքեալ սէր բազմաց,[5] նաև՝ թշնամիք առն ընտանիք իւր։ Թողից ասել և զմեկնողն աւետարանաց զանբաւ արիւնհեղութիւնս և զայլ գժնդակագործութիւնս, որք անխղճապահս[6] կացեալ զականջս ի մտանէ բարբարոսն։

Եւ ի վերայ այսր ամենայնի առաջին և անդրանիկ աջապրեալ ի սրբոյ[7] Հուսաւորչէն՝ աշակերտ սուրբ պատրիարգին Գրիգորի՝ Աղուանից մեծապատիւ[8] որոշեալ ի միաբանութենէ սրբոյն Գրիգորէ ամօք իբրև ՃԺ, այլ և ոմանք յեպիսկոպոսաց համաձայնք նմա եղեալք։ Եւ զլուսն եպիսկոպոսաց ասէն Հայոց, որ զմեծապատուութեանն[9] ընկալեալ էր պատիւ և նստիլ յաշխարհին Սիւնեաց, որում անուն Յակոբ[10] ճանաչիւր, ի զարմէ տեառն Յովհաննէսի Հայոց կաթողիկոսի, նա բնաւ իսկ մնացեալ էր զաւանդ[11] [Ա122b] ասատուածատուր ձեռնադրութենէն և ընկրկեալ ի գրկաց հայրենատուր շնորհէն։ Եւ [Ա 201a] յապաղս փառամոլ անոսի փառամերժութենէն՝ ժպիրկ և յանդուգն և ապերախտ դառեալ՝ առնոյր ինքն տուչն շնորհին՝ պայազատ սէր Յովհաննէս, և գուռնակ[1] առակին եղջերաթոյծ անասնոյն յանկացողի՝ մտեալ ընդ լծով ծառայութեան իւրոյ ծառայակցին և մոռացեալ զսուրբ Հուսաւորչի աթոռս, ուստի բազումք լինուն շընորհօք. մինչև միւսոն դնել կամեցեալ յեղբօրէն, գունակ Նսաւայ[2] զանդրանկութիւնն անդրադարձեալ փոխարէնութեամբ պատուոյ։ Եւ երանի թէ զինքեան միայն սիրել կորուսաս, այլ և զբազումս ի սուրբ եպիսկոպոսաց չարասպիր նամահաւք զրպեաց[3] ի սուրբ Հուսաւորչի աթոռոյս. մանաւանդ թէ այսու [ոչ] չարասցեալ, այլ և Եղեալ յերկինս զրերան[4] և գունակ հայրանախատան քամայ[5] արհամարհանս զսուրբ Հուսաւորչի աթոռակալին գրէր յԱղուանից թադաւոր։ Եւ ձաղածական[6] բանս հայհոյութեան ասոյր վիճել քաղկեդոնականացն վերոյ աթոռակալացն։

Եւ ընդէր ինձ երկայնել զբանս, զի չար չափերականի չարով չափիլ՝ չափ ունի արամութիւն, այլ իմս բանից արդարատատութեանց զբուսաք հպմիմատք գերապըրի համայնց[7] աշխատասիրաբար բանից. վասն զի իբրև զքանչիւր ոք առանձինն քուրմ և տուն և պաշտօնատար կամաց ինքեան լինել կր հաճեալ[8] [Բ] աներկիղ ծառայ ի տեառնէ։ Եւ հաւատար ազատին ասկնոջ համարեալ, և կին արդարև իբր հօտ[9] որոց ոչ իցէ հովիւ, և աչացուք կորուսեալ զհնոտս շուշդաց։ Իսկ մեր ապա աստանօր[10] նկատեալ զնախագոյակ իրի կայից կենցադականացըս կենցադոյ՝ ապշեալ, յիմարեալ, տարակուսեալ, լքեալ, վհատեալ, ապա ի յերկինս և եթ յառնալ[11] նուաստութեանս իմոյ սրտի նշմարանըս՝ առ այն, որ զհնարս առ անհնարինն մարդկան հնարաւորի՝ ասելով, թէ Դու ակր որպէս կամեցար և արարեր, որպէս կամեսիս և կա-

1. Բ հետեւմանս
2. ԱՒ քաչարեր
3. Ա գաւց Բ գաւազ
4. Ա է
5. Ա Մատթ. ԻԳ. 42, ՃԺ. 56.
6. Ա որ ք խլուպս, Բ որ քն խլուպս
7. Ա ի սք
8. Բ նետրապօլիտն
9. ԱՒ զնետրապօլտութիւնն
10 ԱՒ յկը
11. Բ զաւանդ զաւանդ

1. ԱՒ գունկն
2. Ա Ծննդ. ԻԿ. 33։
3. Բ գրղեաց
4. Ա Պաղմ. ՀԲ. 9.
5. Բ քամաց
6. Ա ծաղածական
7. Ա համայն
8. Ա լինէը հաճել Բ լինել էը հաճել
9. ԱՒ եւ էին արդար. եւ իբր հօտ
10. ԱՒ ապա ապաստանօր
11. Ա յառել

տարեսցի, զի ի քեզ Թողեալ է զաղքատն։ Իսկ ապա ինքնաւոր և ահաւոր զօրութիւն սուրբ Հոգւոյն գաննուագ լոյսն իւր Ծագեաց նախ ի սիրտս[1] քրիստոսապսակեալ [Ա]Թագաւորացն, որք ի ժամանակին փայլէին, և կամօք հաւանութեամբ և դեղեցկաստգիր[2] խորհրդովք ևՃին և բարեացապարտն Գագիկ Հայոց Թագաւորի նախ գրէաք հրովարտակ պատձէն ի յաշխարհն Աղուանից, որ ի ժամանակին գՀայրապետութեանն ունէր զպատիւ, այլ ոչ արժանապէս, զի ոչ ըստ հրամանի սուրբ գրոց էր բնկալեալ ի սուրբ Լուսաւորչէն գտուչութեանն պատիւ, որում անուն Սահակ ձանաչիւր։ Եւ գրեալ առ նա յոյժ ոգոքական և գեղեցիկ խորհրդով և եղբայրական պատուով բազմացուցեալ խոստմունս վասն կրկին միաբանութեան՝ ուստի արտամերժեցան։ Քանզի գոյին փիլիսոփայք և հմուտք ճարտասանութեան և հոգեկիր վարժապետք [Բ 123a] ի ժամանակին, որք յոյժ ագահք էին* ներհիւսութեանց արհեստա[խոսմ]ն[3] տաւղից, յորոց գլխաւորացն էր արդարև[4] սուրբ և խաչակրօն այրն աստուածոյ Բասիլիոս, և արագախօս և կորովամիտ Ներսիսիկն[5] Համազասպեան, և միւս վարդապետն Գէորգ Կաղանթեցի կոչեցեալ,[6] և Թոմասով դիմնական, և Գէորգ անպարտելին՝ Տարօնացի կոչեցեալ, և այլ բազումք, որք հաւանեալ առաքելոյն բազում գութս, գորով և խնամս և սէր խանդականս։[7]

Իսկ նորա ըստ սադրելոյն[8] Բակուրայ և ըստ շաղեալ ապանդոյ քաղկեդոնականացն, որ էր տիրեալ աշխարհին՝ իբր բարեկամ գինքն համարեալ Թագաւորին դարձելոյ յաղանդն Քաղկեդոնի,—քանզի ունէր զաթոռ Թագաւորութեան յայնժամ Իշխանակ[9] որդի տեառն Արտներսհի, Թոռն երանելոյն Համամայ[10] բարեպաշտ Թագաւորին Աղուանից, և էր դարձեալ յաղանդն Քաղկեդոնի և մոռացեալ զհարցն գաւանութիւն։ Իսկ նա յամառեալ պնդեալ, կաշկանդեալ. և ոչ հաւանէին գալ ի միութիւն ժողովոյն, այլ միայն իւրաքանչիւր ձեռնագրով գրէին, Թէ չաւանեալ եմ ես Սահակ Աղուանից կաթողիկոս և սա՝ Բակուր Սիւնեաց եպիսկոպոս՝ գով և դուք քրիստոսապսակեալ Թագաւորքդ և սուրբ եպիսկոպոսունքդ ձեռնադրէք յաթոռ սուրբ Լուսաւորչին՝ ծառայել։ Եւ զգայն հրաժարեալ՝ պատձառէին բարանայ[1] բարուրս ստայօղ զօրակապութեամբ։

Եւ ի ինալ ամին [Բ] այնորիկ և ի մտանել յաջորդ ամին բազկացութիւն՝ կանխեալ մեզայ մերոց ի հատուցումն [Ա 201b] մեր՝ եբարձ զպատկն օձոյ մերում, զփառան եկեղեցւոյ և զպարծանս քրիստոնէից, զարի և զհզօր, զծովահանձար իմաստութիւք զտէր Գագիկ Հայոց Թագաւոր։ Եւ ըստ հարկավճար մեղեացս յաւելաւ առ հարս իւր, և յաջորդեալ կալաւ զաթոռ Թագաւորութեանն որդի նորին անդրանիկ տէր Գրիգոր Դարենիկ կոչեցեալ։ Սա ամենևին հարցն նմանեալ՝ խոհեմ հանճարով, արի զօրութեամբ, նախանձախնդիր աստուածային պատուիրանին՝ յորդորէր զմեզ մի՛ վրհատել և մի՛ Թողուլ ի ձեռաց զհօտն հեռքեալ, զոչխարն կորուսեալ, զԱղուանից հայրապետն։

Գունակ ամին և տէր Աբաս Հայոց Թագաւոր գնոյն յորդորէր գեղեցիկ հնազանդութեամբ և ամենայորդոր փութով. մանաւանդ Թէ աշակերտ գոլով մեր Քրիստոսի, որ անձամբ ևկն ի խնդիր կորուսելոյն, ոչ մեծաբեղով գինուսն և գիննուհանն,[2] որ յարաւան լերինն յատահով էին՝ քան գմին կորուսեալն։

Եւ ժողովեալ զեպիսկոպոսունս աշխարհին և զգլխաւորս վանականաց՝ և խաչբնդուս[3] նահատակութեամբ հեռևեցաք յաշխարհն Սիւնեաց, ի գիւղ[4] կորուսելոյն. գլմ եղեալ՝ Թէ տէր կամեսցի՝ և զԱղուանս անասնել և միաբանել[5] գորոշեալ անդամն։

Եւ հասեալ յաշխարհն Սիւնեաց և գտեալ

---

1. Ռ ի սիրտ
2. Ա գեղեցկագիր
3. ԱՌ արհեստամոմք
4. ԱՌ արդար եւ
5. ԱՌ եղբայրիկն
6. Ա կոչեցեալ կաղանթեցի
7. ԱՌ խանտականս
8. Ա սադրելոյ
9. ԱՌ իշխանակ
10. Ա համա մայ Ռ համ.

* = ակահք

1. Ռ այսպէս.
2. Ա գինն
3. Ռ խաչնընդուս
4. Ա ի կիւտ
5. ԱՌ միաբանե՛՛լ

զՔակովբն բաժամիս՝ մխիթարէաք։ Իսկ նա առ Հարկն[1] մերոյ տեսու թեան [Բ 123b] և բռնու-թեան երկիւղի իշխանացն, որ ի ժամանակին, որք էին տէր Սմբատ Սիւնեաց իշխանաց իշխան և տէր Ջուանշեր Բաղաց իշխան, և այլ սուրբ և քաջակրօն հարք Հայկազնեայք, քո-ղաբորբեալ էր[2] գկաթեալ հուրն, որ ի սրտին գործարանի տոչորէր, և կեղակարծ և ստա-յօղ[3] բանիւ և սիմոնական գաւանութեամբ խոստովանէր զմեղայ[4] և զհնազանդութիւն յայնմհետէ[5] և յապա։

Եւ ի լինել այսոցիկ այսպէս՝ խորհեցաք զառաջի եդեալ ճանապարհն՝ որ յԱղուանս՝ աւարաել։ Եւ նոյն ժամայն[6] դուժիկան հասեալ տագնապաւ, թէ փոխեցաւ Թագուհին Հայոց, ամենսին տէր [Ա] Աբասայ Թագաւորին Հա-րոց, որդւոյ Սմբատայ։ Եւ վասն խաղաղութեան սիրելի աշխարհիս Հայոց դարձաք յայնմ յա-ռաջարկութեանց ի Շիրակ գաւառ, մեր կար-ծեալ զխաբողն Յակովբ և դտեալ զանգիւան,[7] և զուղղութիւն Սահակայ կաթողիկոսին Ա-դուանից Թողեալ յայլում ժամու երկասի-բել։[8] Եւ մխիթարեալ[9] զԹագաւորն հաստա-տեաք, և զգաւակս նորա, ի սիրոյ միաբանու-թիւն։

Իսկ զի՞նչ ապա զհրաժեշտիս այսորիկ ասացից և զՔակովբայն կառարածն, որ ոչ դադարեաց միշտ ի[10] խռովարար ամպրոպաց,[11] որ միշտ վրդովեալ, համակ աղմկեալ, յաւետ խաւմհարուստ,[12] ժամագիւտ և ժամավա-ճառ, ապերախտ և ապիրատն, պարսաւ ասէ-րըն և պարսաւագիան։ [Բ]

Դարձեալ նախանձ, դարձեալ բարկութիւն և քսութիւն, դարձեալ որոշումն յաստուա-ծային միաբանութենէն։ և ապա յայնմ՝ իսկ պատերազմ զարթոյց սուրբ եկեղեցւոյ, վասն զի հերետիկոն Թղթով[1] շեղեաց զբազում ի սուրբ եպիսկոպոսաց և բնաւին[2] ուսոյց ապստամբել յաստուածոյ։ Իսկ ապա՝ յայսմ լինելութեանց և արկածից[3] չարին՝ համա-րեցաք կենադրաւ լինել մեզ ի կենաց նոցին կարծեաց։ և յաղօթս այնուհետև ապաւի-նէաք, և զսուրբ ուխտս աղաչէաք օգնել մեզ աղօթիւք, զի արասցէ աստուած ըստ փոր-ձութեանն և զելն։ Եւ յանձնեալ տեառն աստուծոյ զեղեալսս՝ խորհեցաք զդեալս ոչ կորուսանել, և զկորուսեալն խորադիտութեամբ որսալ։ Եւ նախ կամեցաք մնքրել զընծիւ-ղեալ[4] ազանդ քաղկեդոնի, որ յաշխարհիս Հայոց իբր քաղցկեղ ճարակէր և զբոլոր աշ-խարհս էր կալեալ, որպէս վերադոյնն ասացաք։ և բողոքեալ առ Թագաւորն Հայոց [Աբաս]* կամ դարձուցանել Թագաւորաստաստ հրամա-նաւ ի կամս աստուածոյ և հաւանիլ բանից մերոց, և կամ բառնալ զմեզ ի կենացս։

Իսկ զի՞նչ ապա բարեացապարտն այն և արժանի բարւոյ յիշատակի՝ հեզահամբոյր և քաղցրաբարբառն, հզօրն, ըստ արժանի ի-մաստութեանն, ըստ առատացեալ ձեռնա-ցան հանճարապեղց[3] իմաստիցն՝ զբան բար-ւոքական, ըստ արժանի սիրապատանին պատուոյ, պատասխանեալ [Ա 202a] առ մեզ։— Զըղձիցս,[6] ասէ, տարփուսմն սրտիկք լինձ բանս, ո՛վ սուրբ, արդարև[7] առանց ամբիծոյ մշակ, զիս նախ յանպիմանէ, լինձ յառաջ [Բ 124a] սատեան, զիս նախ զհովիւս ապարատեա, որ խա-ռըն զդպլդ և զդառինսդ[8] սրածեմ։

Եւ նոյն ժամայն զհրամանն թագաւորա-սատ պայմանին դնէր, զի մի՛ ոք իշխեսցէ ամուսնանալ ընդ երկաբնականն, և աւազակացն զղխհատմանն[9] տայր վճիռ և եկեղեցւոյ** զգի-

---

1. առ հարկ
2. Ա „քողաբորբքեալք Բ քողաբորբ . . եալ,“ Ողղեցինք ըստ Ստ. Օրբել.—„եթէ քողաբորբեալ ունի եւ զՔաղկեդո-նին„ հրատ. Շահնազար. Բ. հատ. եր. 20.
3. Բ եւս տա յօղ
4. Բ զմեղաց
5. Ա յայնմանէ Բ յայնմ՚է
6. Ա չունի „ժամայն“
7. ԱՒ գաւառ մեր կարծել զհաւատոյն յիւր եւ գտել զանգիւան
8. ԱՒ երկասիրե՚լ
9. ԱՒ մխիթարել
10. Ա չունի „ի“
11. Բ ամրպոտաց
12. ԱՒ խաղմահարուստ

1. Բ թղտով 2. Բ քնաւից
3. ԱՒ արկածե՚ց
4. Բ զնծուղե՚լ
5. Ա հանճր՚ղ ցիմաստիցն Բ հնճր՚ղ ցը իմաստիցն
6. ԱՒ զղծիցս
7. Ա ո՛վ սուրբ արդար, եւ Բ ո՛վ սուրբդ արդար, եւ
8. Ո զգաոինս
* ԱՒ ունին „Սմբատ“, կարծեմ, սխալ ընթերցուածը։
9. Ա գլխհատման
** Ա եկեղեցւոյ

նուէրեան տայր զհրամանն։[1] Զոր և իւր նախասահեսեալ* և կանգնեալ տուն աստուածոյ աքանչելատեսիլ, կայիւք և ծախիւք մեծազանձ աշխատութեամբ ի թագաւորանիստ շահաստանին կարուց։ Եւ ողորմութեամբն աստուծոյ և կամաք հզօրին առ ժամայն բարձան ամենայն անառակ կարգադրութիւն[ք]ն, որ էին յաշխարհին երանելոյ թագաւորին Աբասայ,[2] շնորհօք նորին և աղօթիւք սրբոց։

Եւ զինի այսց զեղեցիկ կարգադրութեանց և շինութեան հաստատ և միաբանութեան սուրբ եկեղեցւոյ՝ վաղճանէր ապա կարծեալ հայրապետն Աղուանից՝ Սահակն կոչեցեալ, և թողոյր փոխանակ ինքեան զհարազատ իւր՝ զԳագիկ՝ նովին թերակատար ձեռնադրութեամբն, զոր ինքն ունէր առանց սրբոյ Լուսաւորչին և մերոյ աթոռակալացն։ այր հաստատ և զեղեցկագէմ և չափաւոր հասակաւ։

Իսկ մեք՝ վասն զի ոչ էր ըստ հրամանի աստուածոյ և ոչ ունէր ձեռնադրութիւն ի մէնջ՝ ոչ ընկալաք զնա և ոչ հրաման տուաք ուրուք յիշխանաց ընդունել զնա։

Իսկ զնահանեացն բարեմտութիւն և զհարցըն դաւանութիւն, որ կայր յԱղուանից պատմութեանն, գիտելով իշխանացն Աղուանից, որ լինէալ էր առ նախնեօք ընդ այլ սրբոյ Լուսաւորչին աթո[ռ]ոռակալաց, ոչ ընկալան զնա։ Բայց մի ոմն յիշխանացն Աղուանից՝ Սենեքերիմ անուն՝ նա միայն հաւանեալ կալ արտաքոյ ճշմարտութեանն, որ զինի սուղ ինչ ժամանակի եղև պատճառ լուսաւորութեան աշխարհին Աղուանից և քարոզ ճշմարտութեանն,[3] զոր յայլում ժամու զպատճառն ասացուք։ Այլ իմ զնովիմբ ածեալ բանս՝ ի կարգ [Ա] բանիս դարձայց, որոց բանս է ի ճահ և ժամանակիս հետազօտումն։

Իսկ իշխանք [չ]հաւանեալ Գագիկայ՝ իրաւապէս ընկալան զհրամանս մեր և ընտրեցին զայլ ոմն, զոր կարծէին կալ յաշտիճանի հայրապետութեանն տանն Աղուանից, ծունան կոչեցեալ, և առաքեցին ըստ օրինին ի ձեռնադրութիւն ի սուրբ աթոռս՝ գալ ի Սուրբ-Գրիգոր։ Իսկ մեր, որպէս վայել էր, հայրական գթով և եղբայրական բազդատութեամբ գերապատիւ քան զարժանն պատուեցաք։ Այլ և թագաւորն Աղուանից՝ տէր Գրիգոր, որդի տեառն Գագկայ Արծրունեաց, և թագաւորն Հայոց Տէր Աբաս, որպէս տեառն Սմբատայ բազրատունոյ, բաղմաճախ ապասիւք և ճանրաբեռն աղերսիւ՝ ըստ նմին իւրեանց մեծութեանն՝ յոյժ սիրեցին։ Եւ ձեռնադրեալ մեր՝ յուզարկեցաք, տուեալ և հրովարտակ հրամանաց և պատասխանի առատաւար, զոր երեսն տուեալ զինգիրս իշխանացն։

Իսկ անօրէնն, չարաբարոյն Յակովբ՝ քանզի զոմանս ոամիկս և զհարս խաչակրօնս և զպիտս գաւառին՝ կարդալ զնա անարժան կոչմանն [Բ 124b] և չընդունելի վերակացութիւն, և շփոթեալ զերկոսին կողմանն՝ խաղճահարուսան Յակովբ՝ ինքն անհոգանայր, զի նահանգիսա չարասէր կամացն զհառովութիւն[1] եկեղեցւոյ համարէր, և ի մերժելն զպատիւն յեկեղեցականաց՝ զովանայր ի պատքմանն զիւաղատա սրտին։

Իսկ ատանօր ապա՝ ժամանեաց մեզ ժամանակ տարակուսանաց, կրկին տրամութիւն, վերստին հոգք, անպակաս ցաւք սրտի, զօրհանապազ խուժանք խռովարեր նամակաց, հոգք ամենայն եկեղեցեաց։ Քանզի ո՞ր[2] աչս տեսեալ զհովիւս առ հովիւս մարտուցեալ և գառինս գիշագէշ[3] կեղեքեալ՝ և ոչ ազխարշեցի։ Ո՞վ տեսանէր յայնժամ՝ զհովիւս լցեալ երախայ մեռելօք, և ոչ ողբայր զյաւիտենից նոցա կորուստ։ Ո՞վ տեսանէր ի վերայ սրբոյ սեղանոյն սարդի ձգեալ քող, և ոչ արտասուէր։ քանզի զու[Ա 202b]գաւորութիւնք ի պոռնկութիւնք համարեալ էր, վերստին ծնունդըն՝ ի մեռելութիւն յաւիտենից։ կեանք՝ մահ լեալ և մահ՝ կորուստ առ յապագայն կեանս։ Եւ յայսմ նեղութեան՝ եկելոյ հասելոյ[4] ի վերայ աշխարհին Աղուանից և տանն Սիսականի՝ խռովեցաք, պղտորեցաք, աւաղ մահուն տուաք, զօրհանապազ լաւ համարեալ մեռանել և ընդ Քրիստոսի լինել, քան թէ կեալ

1. Ա հրաման
2. Բ աբաս
3. Ա ճշմարտութեան
* Ա նխ տս՛՛ւ Բ նախ տս՛՛ւ

1. Ա. խռովութիւն
2. ԱԲ որ
3. Ա գեշագեշ
4. Բ հասելո

ի ներկայս և լսել զայնքան ազէտ տարակուսանացս առ ոտս ընծայել մեքենայից։

Եւ ապա՝ կրկ ի խորոց սրտէ զայրագնել յիշեցաք զբանն տեառն առ աշակերտսն ասանդելով, [ք]թէ Հովիւ[1] քաջ զանձն դնէ ի վերայ ոչխարաց, իսկ վարձկանն թողեալ զնա՝ ի բացուստ առնուցու նշմարել։ Եւ ժողովեալ[2] զրազմաւթիւն սուրբ եպիսկոպոսաց և սուրբ հարանց և գիտնաւոր[3] վարդապետաց, որ էին յաշխարհիս մերում, դէմ եդեալ նոքօք զնացաք յաշխարհն Աղուանից և հասեալ ի գաւառն Խաչենոյ՝ ընդ առաջ եղև մեզ մեծ և փառաւոր, աստուածապահ և բարեպաշտ տէր Գրիգոր իշխան, հանդերձ սուրբ եպիսկոպոսօք և ճգնաւոր վանականօք և այլ անթիւ եկեղեցական կարգակցօք։ Եւ սիրով ընկալեալ գոհանայր «պատառնէ», որ առաքեաց ի լանջիւր կորուսելոցս զսուրբ Հոգսաւորչի աթոռակալդ, լուսաւորել զրազմամեայ[4] խաւարըն և բառնալ զխոտորումիւն եկեղեցւոյ և մրաքանել ի նոյն կարգ և ի կրօնս և ի հաւատս սրբոյ Հոգսաւորչին։ զի որպէս էին հարք մեր, լինուք և մեք մինչև ցյաւիտեան»։

Եւ նոյն ժամայն հրովարտակս գրեր յաժենայն գլխաւորս աշխարհին՝ առնուլ հրաման առնել ժողով հանդերձ մեօք ի տան իւր ի Խաչեան գաւառի։ Եւ ընկալեալ զհրամանս[5] իւրանման բնաւիցն, և ընկալեալ[6] նմանապէս հանդերձ այն՝ աւետաւոր հրատարակել [լ]ուր առ բոլոր սուրբ ուխտս, որ էին յաշխարհին Աղուանից, և ի հրամանէ աստուածոյ առ ժամայն ժողովեալ բազում հարք և սուրբ եպիսկոպոսունք, և այլ[7] պիտանական քահանայք, ըստ այնմ [թ]է Ուր լուծումն մարմնոյ՝ անդ և արծուիք հաւաքին։[8] Ընդ որս էր՝

1. Գաղիկ կարծեալ կաթողիկոսն,[9]
2. Եւ Գեորգ՝ [որ] ի նմանէ ձեռնադրեալն էր Գարգմանայ [Ա] եպիսկոպոս,
3. Հայր Դաւիթ, փառաւոր վանական,
4. Հայր [Բ 125a] Պետրոս՝ Դովսեղդի վանական,
5. Հայր Մանաճիրՙ Ցուսկիւս[1] վանից վանական,
6. Հայր Գրիգորիս՝ Նորավանից վանական,
7. Հայր Սիմէոնն՝[2] Խանգոնական վանից վանական,
8. Եւ Սամուէլ երէց՝[3] Սէնեքերիմայ[4] գրան քահանայ,
9. Եւ Սուփան՝ Ծողջադուրայ սուրբ Անանիայ քահանայ,
   Եւ Գրիգոր իշխանի կոչմանէն։[5]
10. Տէր Ցովհաննէս, Աթախա[յ] եպիսկոպոս,[6]
11. Եւ տէր Ցովհաննէս՝ Մաքենոցաց եպիսկոպոս,
12. Հայր Միսայէլ՝ Շիկաքարի վանական,
13. Հայր Սարգիս՝ Գանձասարու վանական,
14. Հայր Մանուշակ՝ Խաչինայ[7] վանական,
15. Հայր Պօղոս՝ Խանդին վանից վանական,
16. Հայր Գէորգ Ոսկեվանից[8] վանական,
17. Հայր Արտաւազդ՝ Այծաքարայ վանական,
18. Եւ Սահակ քահանայ դիտանական, որ կոչի Դարբնոցդի,
19. Եւ Վարդան քահանայ.
20—22. Տիրանուն և Պետրոս և Պօղոս՝ զբան քահանայք։
23.* Հայր Սահմանոս, որ կոչէր Քերական։

Եւ այլ բազում գլխաւորք, զորոց աւելորդ համարեցաք յիշատակել զանուանսն, զի մի՝ յագեցումն բանիցն զպատասխանին արասցէ, լսօղացն, զբանասաղծութեան զհանդիսս։

Եւ բաժամատար ոգորեալ ընդ մեզ զառաւս բազում այլ և այլ մասամբ, զի էին ոմանք ի թիւինաճութենէն հաւանեալ դագիայ,

---

1. Ա Ցուսկիւ
2. Ա Սիմէոն
3. Ա երէց
4. Բ սենեքերիմա
5. Ա իշխան ի կողմանէ Բ իշխան ի կողմանէն
6. Ա չունի „տէր Ցովհաննէս՝ Աթախա եպիսկոպոս"
7. Բ. Խաչինա
8. Ա Ոսկեվանից

* Այս անուանակոչն գանկի արաբական թուանշանները մեր նշանակածն է։

---

1. Ա Ցոհան. ժ. 11
2. ԱԲ նշմարել եւ ժողովել
3. Ա գիտնական
4. Բ զբզմամէա
5. Բ զնրամանց
6. Բ չունի „եւ ընկալեալ"
7. Ա այլք
8. Ա Պսակ. ԺԷ. 37.
9. Ա կաթողիկոս

իսկ ոմանք զմեզն և զմեզ յօժարկին իրաւահարկ սիրով պատուադրել: Իսկ այլք ոչ զԳաղիկ և ոչ զՑունան, այլ այլոյ ակն եդեալ նշահեղին զերկոսեանն:

Իսկ իշխանն Գրիգոր ապաչէր զի զԳաղիկ երկրորդ անգամ ձեռնադրեալ[1] [Բ] Թողուք[2] նմա, օրինակ մեզ տալով և օՀ անհաւանութեան զարարեալ սեառն Գէորգայ Հայոց կաթողիկոսի առ Ցունան Աղուանից կաթողիկոս, ի ձեռն երանելոյ Թագաւորին[3] Համամայ[4] բարեխօսութեան: Եւ իրրև ոչ գտանէաք՝ հրնաոս ելից վճարման իրացն կատարիլ՝ և տեսեալ զանմիաբանութիւն ժողովոյն՝ առա յաղօթս ապաւինեաք, քանզի [Ա 203a] զՑունան յոլով ի ժողովոյն անարժան կարծեցին և զԳաղիկ վարուք արժանաւոր:

Իսկ զի՞նչ ապա տարակուսիս այսորիկ ելս. զարատաւորն Թողուլ չէ մարթի, և զի՝ և հաւանիլին իսկ ոչ ՀԻ յորժամ այն ինչ, որ յատուածոյ իցէ՝ անդ չիցէ ինչ, որ իցէն[5] ինչ՝ ոչինչ չիցէ: Եւ զերկրորդ[6] ձեռնադրութիւն տալով ուղղափառին՝ ի սուրբ կանոնաց երկոքեան լուծման առնուաք հրաման: Եւ ընդունել ոչ իշխեաք՝ յաղագս հրահրսան և անթաւ սասակիկ նզովիցն, որ կարգեալ էր ի տանն Աղուանից յաղագս զառ ի նոցին եպիսկոպոսացն ձեռնադրե[ա]լ կաթողիկոսն ընդունել զոր յայլում ժամու և զլատաճառան ասացուք:

Այլ մեր զնովիմբ ածեալ զբանս՝ առ որ բանս է, զմիաս իրիս յարմարեացուք:

Ապա հարկեաք զՑունանն՝ առ ի մէնջ ձեռնադրեալ և անարժան երևեալ՝ լուծանել, և զԳաղիկն՝ որ առանց ատուածոյ էր կարգեալ և սուրբ կանոնաց՝ զնա և զայլս որք համեստադոյնք էին ի ժողովոյն ընտրեցաք, և առանձնացեալ զնեաք [Բ 125b] առաջի զկանոնական հրամանն, արկանեաք զամօթ մարդկան, յիշեցուցանէաք[7] և զահ հանդերձեալ առենին:

Իսկ նա իրր զղօնացեալ և զարթուցեալ ի քնոյ ասէր՝ մեզա՛, և խոստովանէր լռել յայնմհետէ ի կարգէ կարծեալ կաթողիկոսութեանն: Եւ թէպէտ և սիրան բեկանէր և ի զղջումն հառանէր, այլ սակայն առ սնոտի փառամոլութեանն[4] պատիւ [Ի] սպրեալոյ չարասէր և կրօտասղմայլ զերհենաժառանգն Ցակովբայ՝[2] զոխորտս չարութեանն և զմահաշունչ զեղն ի սրտին գործարանի քողարարբէր:[5] Եւ սողաբայիկ բանիւք աղաչէր զմեզ՝ հանդերձ իշխանօքն՝ գառնալ մեզ յաչխարհն մեր առ անգամ մի, մինչ զի խոչգեալ քննեսցեն զիւրաքանչիւր որ ի ներանձնաւորիցն, որ կարիցէ բառնալ զկարգն առատուածոյ՝ զանօրութիւն ժողովոյն՝ և առաքեսցեն ըստ օրինին, և ձեռնադրել ի Սուրբն-Գրիգոր, յիշեալնութիւնն տեառն Աբասայ Հայոց Թագաւորի, [Ա] որպէս և էր ի սկզբանէ լեալ և կարգեալ[4] ի պատմութեանն Աղուանից:*

Իսկ մեք հաւանեաք առ ի նոցանէ ասելոյն, յանձն առնուաք գառնալ և խնդրեաք ի նոցանէ զպատմութիւնն Աղուանից՝ ուսանել զսկիզբն լուսաւորութեան նոցա, թէ զի՞նչ պատճառաւ: Քանզի ոմանք այսր անդր արծարծէին ունել գլուսաւորութիւն տանն Աղուանից նախագոյ լեալ քան զՀայոցս,[5] որ ի սուրբ Հուսաւորչէն, Ը և ի Ծ ամին[6] Տրդատայ Հայոց Թագաւորի: Եւ ոչ եառն մեզ տեսանել, քանզի [Բ] ցուցանէր զառն Աղուանից՝ սրբազնագոպոս և զառնս Հայոց՝ պատրիարգ, և զառ ինքեանս զիաեղով զման խոնարհութեան՝ զրաւեալ գաղէին զպատմութիւնն[7] Աղուանից:

*Իսկ որ ըմբռնէ զիմաստասունս ի խորագիտութեան՝** ինքնին յայց եղեալ՝ սրատ մեզ իրաւունս, քանզի եկին բերին յեղակարծս գրքունս[8] ինչ Ցովհաննու Ոսկեբերանի կար-*

---

1. Ա ձեռնադրել Բ ձեռնդրել
2. Ա Թողուք
3. Ա Թագաւորի
4. Ա Համամա
5. Բ իցեն
6. ԱԲ զբ՚ղ
7. Ա յիշեցուցնէ որ

1. Բ փառամօլեն
2. Ա յկը
3. Բ քողաբորբեր
* ԱԲ „սոզաբայիկ“ կամ „սողարայիկ“
4. Ա ի կարգեալ
5. Ա Հայոց
6. = յեօթն եւ ի տասն ամին.
7. Ա զպատմութիւն
** Ա կորնթ. Գ. 10. Ցօբ ի. 13.
8. Բ գրիւնս

դալով վան[1] պիշերոյն ժամու, և—իբրև ի հոգւոյն շնորհաց գոյ ասել զեղեալան, թէ մերոյ աշխատութեանն պատճառս հանդստեան առլով Տեառն—գրեալ ի նա զպատճառս լուսաւորութեանն, զոր սիրեաք, որում և ցանդորդն էաք տեսութեան։

Եւ կարդացեալ զպատճէնն[2] վերահասու եղեաք[3] շարամտութեանն, զոր սիրեաք, որ ունէր զայս ձև օրինակի, թէ Ցետ առաքելոյն Բարդուղիմէոսի և Թադէոսի զկնի ՄԿԶ. ամի, ի և ի ժ ամին Տրդատայ Հայոց թագաւորի և Ուռնայրի Աղուանից[4] թագաւորի, ընծայի յաթոռ նոցին առաքելոցն՝ Սուրբեան Պաղհաւ Արշակունին, յաղթէ աէր սուրբ Գրիգորի Լուսաւորչին Հայոց, ի կառավարութեան դեռ գոլով Տրդատայ և Ուռնայրի՝ Հայոց և Աղուանից թագաւորաց։ Եւ այսահալած[5] արտասուօք ի խորս թիւնաւորացն յամելով* եռահնգեայ[6] ամովք՝ աստանօր արտափայլեաց զԱքանաղեանս[7] ազնի կառավարութեանց գիւցազնաւար ձեռնձերոյ, — անմահացեալ ի տանջանս և մահացուցեալ զիշխան աշխարհիս՝ զատանայ և զկամարարս [A 203b] նորին,—զարի և զմեծ հսկայն[B 126a] զդիւցազորհն Տրդատ Հայոց թագաւոր, անմաքրից դաղափարեալ կինճիակերպ խողին վարսիւք։ Որով և կրկին ընկալեալ եղև հնորհ ի հնորհաբաշխն Քրիստոսէ ի ձեռն երազոյն Յոսէփեղեայ, ոչ այլազգ գտանել բուժել յախտից դիւահարութեանց, թէ ոչ աղաւաղելոյն ի խորս թիւնաւորացն սրբոյն Գրիգորի ձեռամբ։ Ցաղագս որոյ[8] և զանչիշատակն ի թագաւորին խնամոցն պահեալ՝ փրկութիւն աղօթիւք նորին գործեաց թագաւորին։ Որոյ եղեալ աղօթիւք վան նորին և բժշկեալ մկրտեր յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։[9] Զոր և անդանօր նորին երանելոյն Տրդատայ թագաւորին դերապատուեալ զնա խորաշքեղ զարդիւք համդուռնակ Ահարոնի քահանայապետի, վաւկոսակիր երկակի վեց ակամբ[1] շարաւութեամբ, բերել զօրինակ ապագային զքահանայապետին Քրիստոսի, շնորհեալ պատիւ իւրոյ Հուսաւորչին։

Վան այսորիկ[2] լուեալ զօրեղ և պատուական, սրի և քաջ զրքան Աղուանից Ուռնայր՝ հեաեալը ի տեսիլ սքանչելեացն եղելոյ, զոր լուաւ, և եկեալ եաես զքահանայապետն ասատածոյ և զիրս սքանչելեացն ևղեալ և զմատաւորն հաւատացեալ։ Զահի հարեալ փառաւորեր զաստուածն Տրդատայ, զարարիչն երկնի և երկրի, և հաւատայր յաժենասուրբ Երրորդութիւնն, և մկրտեր ի ձեռաց սրբոյ Լուսաւորչին Գրիգորի Հայոց պատրիարգի երիցս երանելոյ, և խնդրեր նորին սուրբ ձեռաց ձեռնադրութեամբ հայրապետ լինքեան աշխարհին։

Որում հաւանեալ ձեռնադրեաց պատրիարգն Հայոց սուրբն [B] Գրիգորիոս[3] զայր մի երանելի յեպիսկոպոսութիւն ի հուամ[4] քաղաքն, որ եկեալ էր ընդ Տրդատայ արքայի։ Զոր առեալ դառնայր յաշխարհ իւր մեծաւ խընդութեամբ, իբրև դաեալ աւար[5] բազում հոգևոր գանձուց։ Եւ նոյն ժամայն նախանձաւնդիր եղեալ սրբոյն Տրդատայ Հայոց թագաւորի՝ սուրբ այրն Ուռնայր Աղուանից[6] թագաւոր բառնայր զնաւաւր կառավարութեանց [յ]իւրոյ աշխարհին և [Ա]շխել եկեղեցիս և հաստատէր քահանայս և դպրոցս աստուածաշունչ ուսմանց։ Եւ պատուէր կրկին կրկին[7] պատուով զարքեպիսկոպոսն իւր, զձեռնադրեալն ի սրբոյն Գրիգորէ՝ Հայոց պատրիարգէ։ Ցաղագս որոյ[8] և յայս լուսաւորութեան եկաց սեւեաց աշխարհս Հայոց և Աղուանից միակամ եղբայրութեամբ, որպէս և կարգեաց սուրբն Գրիգոր—լեալ ձեռնադրութիւն տանն Աղուանից ի Հայոց հայրապետէն, որ

---

1. Թերեւս „կարդալոյ վան“
2. B զպատճէնն
3. A եղաք
4. B Ուռնայր ի աղուանից
5. AB այս հալած
6. B եռահնգեայ * AB յամենալով
7. AB զայսքան ազեանս
8. B որո
9. B չունի „սրբոյ“

1. B երկակի ·զ· ակամբ
2. B վայս սկ
3. AB գրգրս
4. A Հոամ
5. A աւուր
6. A աղունից
7. A մն „կրկին“
8. B որո

նաեւր յաթոռ սրբոյն Գրիգորի [1] Լուսաւորչին —զամ չորեք ·ճ· և ·խ· ի ժամանակս ·ին· կաթողիկոսի, մինչև ցաեր Աբրահամ Հայոց կաթողիկոս։

Աւաղ ապա աստանօր յիշատակիս քանզի ի սորին ժամանակս ի բաց կայրն վիրք ի միաբանութենէ Հայոց և կուսացան, շլացան կրօղնիք [2] ի պատուիրանէն, և թիկունս [3] դարձուցեալ ապաբանեցին հօրն հաւատոյ։ Եւ ընտրեցան որպէս ապերախտք և անհնազանդք, և հաճեցան լինել կցորդ քաղկեդոնի, փոխեալ զահման հարցն, թողեալ զաւանութիւն մանկութեան և մոռացեալ զուխտն աստուածեղէն։ [4]

Եւ ի ·ՃԹ· ամին Աբրահամու կաթողիկոսի զաեր Ցոհան ի Գոգպովաէ Մօրիկ կայսր Հոռոմայեցւոց [5] կացուցանէ կաթողիկոս Հայոց [Բ 126b] ի բաժնին Ցունական կողմանն, ի ժամանակս Աբրահամու։

Իսկ Կիւրիոն [6] վիրաց արքեպիսկոպոսն յաղագս զոյն պատճառի՝ աղագաւ [7] փառամոլութեան բաժանեալ ի Հայոց՝ խոստովանէր զաղանդն Քաղկեդոնի։ Որ բազում անգամ գրեաց առ նա աեր Աբրահամ Հայոց կաթողիկոն՝ դառնալ նմա ի մոլար ճանապարհէն, և ոչ կամեցաւ, զի յոյժ նեղեալ էր աղանդոյն [8] Քաղկեդոնի։

Եւ յերկիւղել Հայրապետութեանն Հայոց վաղճանէր մեծապատիւն [9] Աղուանից, ձեռնադրեալն յԱբրահամայ Հայոց կաթողիկոսէ։

Իսկ ապա նոյն Աղուանից նշխարեալ զանմիաբանութիւնն Հայոց՝ նախանձեալ ընդ Կիւրիոն [10] և ինքեանք ձեռնադրեցին ինքեանց կաթողիկոս, և շաղեցան սուտ լինչ ժամանակս՝ զամ ·ԻԸ·, մինչև ի վաղճանիլն [11] տեառն Աբրահամու և տեառն Ցովհաննայ, երկուս [12] միայն լեալ ի տանն Աղուանից [Ա 204a]անձամբ կաթողիկոս։

Եւ յետ մահուանն [1] Հայոց Հայրապետացն՝ յաջորդէ զաեր սրբոյն Գրիգորի աեր Կոմիտաս յԱրտաշատանէ· [2] և սա միապետեաց զրաժանեալ Հայրապետութիւն տանս Հայոց։ Սա շինեաց զվկայարան սրբոյն Հռիփսիմէի։ [3] Սա էր առաքինեալն վարուց յաւէտ հեաւղ [4] և յոյժ ակահ աստուածային զրոց։ Եւ ապաչէր զաստուած զօրհանապազ ի տուէ և ի գիշերի միաբանել զանգամն որոշեալ [ի] տուրբ Հայրենի գրոցն սրբոյ Լուսաւորչին, որ էառ իսկ զպատուղ աղօթիցն։

Քանզի ի սորին երկրորդ ամի աթոռակալութեանն վաղճանէր ապստամբ Հայրապետն Աղուանից, և՝ գոյ ասել՝ թէ հոգւոյն շնորհ իբր ի թանձրամած թմբիւց [5] ցքոյ զարթուցեալ զմիտս իշխո[Բ]անացն՝ ծանեան զինքեանց զիրկութիւնն և դարձեալ հաւանեալ խնդրեցին ինքեանց կաթողիկոս ի ձեռնադրութենէ սրբոյ Լուսաւորչին աթոռակալէ՝ ի սրբոյն Կոմիտասայ։

Իսկ նա իբրև հայր բազմագութ ոչ պահէր ոխս և ոչ ցանգ բարկանայր, այլ վաղվաղակի ձեռնադրեր և միապետեր և յորդորեր վարդապետական բանիւք և հաստատեր ի միաբանութիւն։ Եւ եկաց տեւեաց [6] այսպէս ուղղափառ և սուրբ կարգադրութեամբ զամս ·ՁՒ· և զժամանակս ·Չ· աթոռակալացս սրբոյ Լուսաւորչին՝ մինչև ցաեր Ներսէս Հայոց կաթողիկոս, որ էր ·ԼԴ·-երորդ ի սրբոյն [7] Գրիգորէ։

Ապա աստանօր սկզբնաչարն սատանայ, որ ի ձեռն կնոջն զաղանապատիր և սուտ կապաս խաբկանօք զիրանալիրն [8] կազմած ընդվզեալ փազաքշալուր աստուածայոյսն կարծեօք՝ զնախապոյն բազդատական տարամերժեալ պատիւ՝ զ-նա տիրեսցէ՝ն [9] քեզ՝ վճռա-

---

1. Ա չունի „գրիգորի“
2. ԱՌ այսպէս. Ջ՝ արգիօք յատուկ անուն՝ կրօղնիք։
3. Ա ի Թիկունս
4. Ա Առակ. Բ, 17.
5. Ա Հռոմայեցոց
6. Ա Կիւրոն
7. ԱՌ „ազգէ“ կամ „աղգ“
8. ԱՌ յաղանդոյն
9. ԱՌ Նետրապօլիտան
10. Ա Կիւրոն
11. Ա ի վաղճանիլ
12. ԱՌ քաս

---

1. Ռ մահու՛ն Ա մեռն
2. Ա յարագածոտնէ
3. հրիփսիմէի
4. հետեւող
5. Ա Թմբից
6. Ա տեւեալ
7. Ա լզ ի սրբոյն Ռ լդ. որպէս սրբոյն
8. ԱՌ այսպէս.
9. ԱՌ պատիւ զնա տիրեսցին

ւորեաց, վառեալարակի առեալ զասուէն երկբաւոր, Եղովնա՛ւ ի քոյդ սպասեաս, անհեշտաբար զնա ըմբոշխնեսցես. մինչև ի կատար խոցոտմանէք վիրաւորիչք ընձիւղեսցին քեզ. փոխանակ եաննդա[Ա]սեան երփնեւոսցիկ ընդծագեալ ապատուեթեանց[1] սրբայականացն կայենիցն[2] վաւիկութեանց՝ յերկս տաժանմանց կրիցես[3] զառւգանեդ զգեստս պանասնաճապարանն հարկեսցես պարենաւորիլ, հանդերձանս դիւթաթառամս և վաղահամառս, մինչև ի ծոցաւորիլն քո անդէն: Նա սահեցեալդ ի սահեցողն ընկղզիս զ[ը]ժ րընմանն ագէաս՝ նոյն թիւնաբերեան իժից խղճալթք: [Բ 127a]

Նա աստանօր՝ ի վաղճանել հայրապետին Աղուանից՝ շնչեաց ի տիկին մի Աղուանից աշխարհին և իբրև ի դիւական հոգւոյն բաւեաց, զոյ ասել, սիրեաց զմի [յ]եպիսկոպոսաց աշխարհին Աղուանից և անձնիշխան[4] կամաք՝ գունակ նախամօրն՝ սիրեաց ելանել ի դրախտն և յաստուածամատեղծ կայենից: Նոյնպէս և կինս այս քակեաց զվարամ սրբոյ Լուսաւորչին, որ էր առեալ ամն ՝ՆՁԴ. միով միաբամութեամբ՝ ըստ կարգեցելոյ սրբոյն Գրիգորի տալ ի նորին աթոռոյ զձեռնադրութիւն տանն Աղուանից: Նա առեալ զայն պայն, զոր վերադոյնդ ասացաք, զթակուր, տայր հրաման եպիսկոպոսաց զնա ձեռնադրել կաթողիկոս առանց սրբոյն Գրիգորի աթոռակալին ձեռնադրութեան:*

Ապա յետ այսր եղելոյ՝ չահեցաւ այլն այն թակուր, որ եղև չկաթողիկոս, ներկեալ յապտանն Նեստորի,[5] քաղկեդոնին, և առ սահկաւ սակաւ սպրդեալ եմոյծ յեկեղեցիս զաօմանն Լևոնի, և հերձ զսուրբ հաւատս: Նա բազում բթեցան ի սուրբ ուխտէն[6] ի տումարն Լևոնի: Նա իբրև զիտացին որք ուղղափառք էին և անխառն մնացեալք ի քաղկեդոնականացն՝ զաղաղակ բարձին առ սուրբ Լուսաւորչի աթոռակալն՝ առ տէր Եղիա Հայոց կաթողիկոսն:

Իսկ ապա սուրբն այն և անօթն աստուածոյ շարժեալ ի հոգւոյն սրբոյ՝ պիտաբար ժողովեալ զուղղափառ եպիսկոպոսունս և զհարս Հայոց աշխարհիս՝ գնայր ի շահաստանն Պարսից: Նա անդ ժողով արարեալ՝ զիշխանն Աղուանից աշխարհին և [Ա204b] զեպիսկոպոսունս և զսուրբ կրօնաւորս, որք ոչ էին երկրպագեալ [Բ] պիղծ պատկերին քաղկեդոնի՝ կամօք և հաւանութեամբ նոցին և իմաստից բռնութեամբն կալեալ զբռակուր, և զթիկն նորին ձեռնադրօղ կապեալ յիշոյ և ձագաճանակ առնէր անդրադարձ հետևանօք ընդ շահաստանն Պարսից: Նա ինքն ձեռնադրեցեալ նոցա հայրապետ և առնոյր զկոչումն՝ մի՛ ևս շեղիլ[1] ի սրբոյն Գրիգորէ և մի՛ զոք ընդունել կաթողիկոս, որ յեպիսկոպոսաց էին ձեռնադրած, բայց միայն որ ի սուրբ Լուսաւորչէն աթոռակալքն ձեռնադրէր: Նա ինքն դառնայր յաշխարհս իւր:

Նա եկաց ասեաց այսպէս միով հաւանութեամբ զամն ՝ՃԼԲ. զժամանակս ՝ԺԴ. հայրապետի՝ մինչև ցակր գիտղդ Հայոց կաթողիկոս:

Իսկ ապա՝ զօրացեալ բռնութեանն իսմայէլացւոց՝ զերեցին զսուրբ կաթողիկոսն Հայոց:

Իսկ ապա՝ զրան եպիսկոպոս գոլով նորին Ցունան անուն՝[2] փախեաւ ապստամբողական կարգաւ, անկաւ յաշխարհն Աղուանից: Ոչ զդոյր հայրապետ Հայոց, որ յուսահատեալին ըստ սովորութեան՝ առնուլ ձեռնադրութիւն: Ուրև մեծահաւատութիւն իւրեանց համարեալ՝ գչիք[3] զդրան եպիսկոպոս հայրապետին Հայոց՝ ժողովեալ զեպիսկոպոսունս աշխարհին Աղուանից՝ կարգեցին զնա ինքեանց կաթողիկոս: Նա իբրև շնորհեաց զերեզարձ քրիստոս հայրապետին Հայոց տեառն Գէորգեայ[4] ի ձեռն դանձադնութեան տեառն Համամայ Աղուանից ազգային՝ իսկ հայրապետն Աղուանից Ցունան կոչեցեալն ընդառաջ եղև տեառն

1. Ա ը ծաղկաւապտուեց, Բ ը ծաղկաւպուեց
2. Ա կայենից
3. Ա կերիցես Բ կրիցես
4. ԱԲ անձն իշխան
5. Ա Նստորի
6. Ա ուխտեն

* Ձմինոյն վերեւում՝ ասածը՝ ‹ ի համադոյէն Հոգւոյ քանից, զոյ ասել›

1. ԱԲ ‹չաղիլ›, մենք կարդում ենք ‹չեղիլ›
2. Ա նորի յունան անուն Բ նորին յունանուն
3. Ա եւ նշիք Բ նշիք
4. Ա գէորգեա

Գէորգայ սիրելիս[1] սրտիւ ջերմեռանդեան յիշել տեառն Համամայ առ դերեզմանս Թէոդոսի[2] օձման, [Բ 127b] զոր տեսեալ Հայոց հայրապետին տեառն Գէորգայ զեղեալսն զարմացաւ։ Եւ նոյնժամայն հրաման տայր կողոպտել պիտակեալ կրօնիցն։

Իսկ առաւօտ յուշ արարեալ տեառն Համամայ զերեմեան՝ [Ա] համարեալ ապերախտ՝ և զպատճառն չնորհակալեացն օձման՝ անչնորհութեանն գայրանայր։ Եւ գալիս առաջի եւ գեալ հայրապետին Հայոց ազաչէր զՅուաննէս, որ առանց նորին կամացն էր, նորին հրամանաւ վերստին ձեռնադրել[3] և խոտով (?)։[4]

Իսկ նա առ հարկի՝ իբրև մեծ լմն ուրախս համարեալ՝ կրկին զՅուաննէն ձեռնադրեր և առեալ նոցա գայր յաշխարհ իւր։ Եւ էր գործն արտաքոյ սուրբ գրոց, այլ սահկայն կարիս վախկոտութեանն զայս առնել հաւանեցոյց։ Եւ ինքն դառնայր գայր հասանելի յաշխարհս իւր։

Եւ յետ վաղճանելոյ հայրապետին Հայոց տեառն Գէորգայ՝ սովորութիւն կալաւ և պիւրապարձ գեղեալսն. իբրև վաղճանէր Յուաննէն՝ ձեռնադրէին նոյն սովորութեամբ զհարազատ նորին զոմն Սիմէոն, և ի նմանէ Դաւիթ, և ի նմանէ Սահակ, և ի նմանէ Գաղիկն, առ որ[5] այժմ բանս է. տեսեալ ապստամբութեամբ զան ՌԹ. և զժամանակս հայրապետացն Տղից,[6] մինչև ի մեր նուաստութիւնս։

Եւ զայսոսիկ ճշդիւ[7] և հաւատարի քննութեամբ տեղեկացեալ ուրախ լինիմք, և յանձն արարեալ Հոգւոյն ձերից զառ յապա լեալն՝ զառնոյաք յաշխարհն Սիսական ի խնդիր ամբարիշտ և ապիկաէրն Յակովբայ, [Բ] թերևս Հնար լիցի զտանել զանդիւանն, զնաւարտարսն, զաղվիայորդորն, զնաւակիսահարուածսն։ Իսկ նա զերկաժոտ և զնաւարտարորդն Տուր թագուցեալ ի սրտին գործարանի՝ իբրև լսէր զմուտն մեր յաշխարհս Սիսական, նոյն ժամայն զփախուստ[8] ողջունէր, և հասեալ անկանէր յանուանեալ իշխանն Ջուանշիր, ամրանալով յամուրս նորին կապան կոչեցեալ, անհպելի ամենեցուն մերձենալոյ։ Ջաւուրս բազումս այսպէս որջանայր և մեր տարակուսեալք, լքեալ և անոյս եղեալ ի կենաց թշուառացելոյն Յակովբայ՝ թէպէտ և բազում անգամ աղաչեաք զիշխանն Ջուանշիր տալ ի բաց զաւանդն ատելոյ, սակայն ոչ կամեցաւ։ Յաղագս որոյ առ հարկի դիմադարձութեանց նորա հարկեաք զկնդկղն [Ա 205a] սուրն արձակել ի վերայ նորա և նզովիւք կապեալ զնա գառնացաք* մեծաւ սգով և անմխիթարութեամբ, ի ափ ընկենլով զհոգս մեր, զի նա հոգասցէ վասն մեր։ Եւ զնացեալ անտի[1] հաստիճեալ տագնապով յաւուրս ձմերայնոյ, յոյժ տառապանօք և սաստիկ նեղութեամբ՝ եկեալ հասաք երիվարօք, այլ արշաւանօք, յաշխարհս մեր Շիրակ կոչեցեալ, ի հանդիպումն բարերջանիկ և վեհի մեծի ոստքային Աբասայ Հայոց թագաւորին և Աշոտի իշխանաց իշխանի նորին որդւոյ։[2]

Եւ պատմեալ սոցա զանցս աղէտից ուղղն ձանապարհի և զգևրև մնալ ի փրկութենէ կորուսելոյն Յակովբայ՝ զարմացան յոյժ և քաջալերէին[3] զմեզ մի՛ ևս վհատիլ [Բ 128a] ի նոցին փրկութենէն, այլ խորաքննին գիտութեամբ որսալ։

Եւ սկսեալ յոյսմէնեաւ և յապա բազում ջանիւք և անբաւ թոյլատուութեամբ[4] հնարեալք և զօրհանարակ զարտօսրաթոյր վտակս և զաղերսալի հառաչանս ի ժամ պատարագին առաջի գենլոյն Քրիստոսի հեղուլ։

Եւ լինէր այս ի թուականութեանն Հայոց ՌՂԸ. տառապանաց մերոց։ Եւ ապա զանհնարին[5] բաժակ ժահու արբոյց մեզ Քրիստոս, քանզի հասեալ յամն երեքտասաներորդ[6] մերոյ նուաստ աթոռակալութեանս՝ երթայ ապա Քրիստոս զպատին օձոյ մերոյ, զարի և զչօրեղն, զհայաղօրն և զհեղն Աբաս Հայոց թագաւոր, թոռն Աշոտոյ Բագրատունւոյ

1. ԱԲ սիրով իր
2. Ա գերէ փրկեն Բ գերէ փրկեն
3. ԱԲ ձեռնադրեալ
4. ԱԲ պատչէս ազնուս.
5. ԱԲ որ առ այժմ բանս է
6. Բ Տնկից
7. Ա մշուխ 8. Ա զփախուս

1. Բ. անդի * կարող է լինել եւ „դառնայաք"։
2. Բ որդոյ
3. Բ քաջալերէին
4. Բ թէպտագնացութեամբ
5. Բ զանհնարին"ք
6. Ա գոնդրդ Բ գժանկ"ղ

ւոյ [1] Հայոց թագաւորի: Եւ յաջորդէ զաթոռ թագաւորութեանն նորին որդի տէր Աշոտ, Հայոց իշխանաց իշխան, հանճարեղ և խմաստուն, այր դեղեցկատեսիլ, կրօնաւորասէր և ուղղադատ, ահարկու աւազակաց և չարագործաց, և սիրիչ սրբոց, և թագ պարծանաց սրբոյ Լուսաւորչի ասէոդոս: Մանաւանդ՝ զոյ ասել՝ թէ ի վեհ շառաւիղէ զարմանալի պտուղ, և հօր սքանչելոյ որդի գարմանալի**. պարարեալ մաօք յաստուածային տաւղիցն, համօրէն մարմնովն ամենևին վայելուչ և կրկին [Ա] խաղաղասէր: Վասն զի շարժեաց, սանձեաց, նահանջեաց զարտաքին թշնամիս յիւրաքանչիւր կարգի: Եւ ի խաղաղութեան ատուածոյ* սկսաք աշխատասէր կամօք եղանել ի խնդիր կորուսեալ ոչխարին, ուսեալք յընտանի բնութենէ, թէ վաստակ մատց ունի զարմատ բանի, և աշխատութիւնն [2] է պիւսիցն խնդիր: Ցինայ՝ աւանիկ [Բ] թէ՝ և զմեսաւ աճեալ զահարկանելի ձայնն [գ]երբնականն, [3] թէ ծառայ վատ, քեզ պարտ էր արկանել զսատերն իմ ի տրապիզիտս*** և ես եկեալ տոկոսեօք պահանջէի զիմն: [4] Երկուցեալ և ի գիշերասէր գայլոյն օձոտղէ, թէ մի՞ արգելօք ծուլացեալ մոռացեալ լիցիմ զերախտիս հրաշագործողին, որ անձամբ եկն ի խնդիր կորուսեալ ոչխարին, և ապա անկանիցիմ ի ձեռս տանջանաւոր հրեշտակի, և անկցիմ յկեանել ի բանարն, [5] և կամ ընդ ժէջ կորիլ [6] և բաժին ընդ հեղգասիրաց և ճշդապատ ծառային լիցի: Մանաւանդ զի որք երկասիրաբար և յոքնաջանիւք ախորժեն արդիւնաւորել, այսպիսիքն քաւականապէս տաժանողացն հանդոյն, որք փարթամանալ կամելով խուզեն զմանձրահող և զխճալի [7] ափափայս, որ ունին զոսկեհատացն զդժուարարդիւս խնդիրս, որով ոսկեգործացն վարժին [8] մանկունք: Այսր դունի գաղափարաւ և մերս տրպութիւնս [1] ոչ կամեցաւ յանոճ [2] ամուսին անբաւութեան զառաջի արկեալսն սիրոյ գործ հոգևոր յանինչ կատարունակութեան զապացութիւնս [3] լքանել թողուլ զօրէն չարատապիր [4] ներհակաց, այլ յաւետաւոր աշխատեաք ի տուէ և ի գիշերի, հայցէաք յաստուածոյ: Եւ սկսաւ լինել ի թուականութենն, որ էր շրջանս Հայոց ՌՃԱ· յերկարեալ աշխատութեան մերում մինչև յամն ՌՀ· լինել [5] թուականին:

Ատանօր ապա վերափոխի յաշխարհէս մեծըն այն և արի արքայն, որդի տեառն Գագկայ [Ա 205b] Արծրունեաց, [6] Գրիգոր Դերենիկ [7] կոչեցեալ, [Բ 128b] և յաջորդէ զաթոռ թագաւորութենն տէր Համազասպ եղբայր նորին:*

Եւ ի սմին յայսմ [8] ամի զրաւ արար տէր երկոցունց ներհակացն, զի բարձաւ կրձիմն, որ կայր ի տանն Աղուանից [9] և ի տան Սիսական, և մեռաւ Գագիկն՝ կարծեալ կաթողիկոսն և ապարասանն Ցակովբ, ժամանեալ ի հատուցումն արդարատատին Ցիսուսի յաշխարհաժողովն խմբարանն: Եւ այսպէս ապա ամենայն եղծումն և ապականութիւն քայքայեցաւ, և առաքինութիւն և շինութիւն և խաղաղութիւն զաեղի փոխաբերեաց: Եւ տչորաշունչ հողմն հարաւային [10] ի բարեխառն և ի անուշանող [11] օդ հիւսիսային շրջեցաւ: Եւ զբարս քաղցունս տէր անկեաց ի սիրտս իշխանացն: Եւ դիտեալ մեր զժամանակ ընդունելի՝ ի ժամանակս ձմեռնային և ի ժամ դառնաշունչ՝ դարձեալ ծերական ակարութեամբ ժամանեաք յաշխարհն Սիսական, հապ ի ձեռ տագնապաւ շինել զաեղի կորուսելոյ աղմիսիրին Ցակովբայ, զարհուրեալ թէ մի՞ արգելօք դարան ինչ գործիցի ի սուրբ հաւատս սրբոյ Լուսաւորչին ի ձեռն չարատապիր և

---

1. Ա բագրատունոյ * Ա „այ Ա սգ"=սոցա
2. Ա աշխատուի
3. ԱՒ տիանայ, աւանիկ թէ եւ զմեսաւ ածեալ զահարկանելի ձայնն, մրգ քանկն·
4. Ա Մատթ· ԻԵ· 26·
5. Ա ի քանդն
6. Ա „կտրել" Ա Ղուկ· ԺԲ, 46·
7. Ա զխղճալի * Տես խորեն· Բ· ՃԻ
8. Ա վարժանն *** Ոսկ· Մատթ· տես Հյկ· Բա·

1. ԱՒ մեր տրպութիւնս
2. Ա յանած
3. ԱՒ յան ինչ կատար ունակութեան զապացութիւնս
4. Ա զքաւորիր 5. Ա լինիլ
6. Ա արծրունոյ 7. ԱՒ գերենիկ
8. Ա այսմ
9. Ա չունի „աղուանից"
10. Ա հարաՁ՝ յին
11. Ա ի սնուցանող
* Որ եւ Աբուսահլ· տես Մատեան· Նարեկ· եր· 367 վենետ· 1840·

մաղձահոտ հնարիւց դիւահարսին[1] Յակովբայ։ Եւ գնացեալ հասաք յաշխարհն Սիսական՝ յանուանեալն Բազա, և մնաք ի նահապետացեալն կապան՝ յամուրսն Ջուանշիրի[2] Բաղաց բռնակալի։ Որոյ եկեալ հանդերձ տամբ և զարմիւք՝ աղիողորմ դիմովք և խանթահաւթ արտասուօք և ուղիղ դարձիւ, սրտալիր մեղայիւ՝ առաջի անկանէր և ասէր. [Բ] Մեղայ յերկինս և առաջի քո. բարեխօսութեամբ սրբոյ Հուսաւորչին քաղցրասցին կամք քո ի վերայ իմ՝ դատողիս առ քո Սրբութիւնդ, որպէս երբեմն կամք Նորին առ Տրդատ՝ Նորին դատող։ Եւ ոչ կամելով զերկարելն, և մանաւանդ տեսեալ զկղէ արտասուացն՝ օրհնեաք ապա զինքն և զտուն իւր, և ձեռնադրեաք եպիսկոպոս [Ա] աշխարհին զորդի Նորին՝ վնաչակրօն և զրբաանունդ տէր վահան։ Եւ գառնայաք մեծապարգև աւետեօք, առեալ ի Նմանէ ձեռնադիր պատճէնի՝[3] մի՛ և այլ[4] լինել գունակ ասացեալ չարաստիր և ապըստամբամիտ խաբողն Յակովբայ, ծանր և նզովախառն շարաբանութեամբ, որ ունէր օրինակ զայս.

** ՅԱՆՈՒՆ ԱՍՏՈՒԱԾՈՅ, այս* ձեռապիր է իմ վահանայ, Ջուանշիր իշխանաց իշխանի որդւոյ, առ[5] աստուածապատիւ և հոգևոր տէր Անանիա, Հայոց Դամոգիկոս։ Որովհետև չարարին ի կամս, և բարի սրտիւ և քաղցր աչօք նայեցան մեզ, արժանի համարելով իւրեանց ծառայութեան և սուրբ կարգիս խաչակրութեան, և Սիսական տանս վերակացութեան՝ երկրատան[6] գաւառիս, որում չէ մեզ նման ըստ իմ խակ և անլիութեան հասակիս, և չէ իս կամակից։[7]

Արդ՝ ըստ այդ բարեխոհ մնացիր և առատաձիս զինչ կա[յ] փոխարէնս հատուցանել, այլ անձն իմ եղիցի ծառայ և հոգի իմ պաշտօնեայ սուրբ Հուսաւորչի աթոռոյդ։ Եւ դայս ասեմ ևս, թէ Ձիք իմ և որ հետ[1] իմ գալոց են, ի ձէնջ մեծարանաց խնդիրս, ոչ խաչ,[2] ոչ գաւազան, ոչ բազմական և ոչ այլ բարձրութիւն մեզ, բայց միայն որ [Բ 129a] զինչ ձեր աստուածարար կամիդ կամի և տայք՝ այն է իմ փառք և մեծութիւն։ Եւ որպէս ձեռնադրութեանս տէր էք և տուիչ, նոյնպէս և պատուադրութեան, ըստ ոգւոյ արժանին համարիք։ Եւ զայս՝[3] այս հակառակութեանս, որ եղև ի տանս Սիւնեաց, և ձեռնարկեաց Յակովբ յԱղուանից կաթողիկոս ապստամբութեամբ, և օտարացաւ ի սուրբ Հուսաւորչի աթոռոյդ, և ել արտաքս ի հայրական ի զբօսեցդ, որում ինքն տացէ աստուածոյ պատասխանի։

Արդ՝ առ ի յինէն, և որ զկնի իմ գան յայս[4] աթոռս, այս հաստատուն կանոն և կապ. որ թէ ես՝ վահան որպէս Ջուանշիր իշխանաց իշխանի և Սիւնեաց եպիսկոպոս, և ոմ ոք է և իցէ յայս աթոռս՝ [Ա 206a] որ զկնի իմ գան, և յայսպիսի ապստամբութիւն մտաբերէ, կամ[5] յԱղուանից կաթողիկոսէ եւղ բերել մերոյս,[6] կամ ապըստամբութեամբ կալ ի նմանէ բարձրաւորզութեամբ, որպէս թէ մարմնական իշխանութեամբ վարել, և կամ բռնութեամբ ունել զեկեղեցի աստուածոյ, կամ այլ ինչ թերութիւն առնել ի հաւատս սուրբ Հուսաւորչին և լուծանել զկանոնս առաքելականս, և ապստամբեցուցանել զնորա արեամբ ժողովուրդս գնեալ, զոր ձեր կամաւ և յօժարութեամբ ինձ[7] հաւատացէք, և օրք զկնի իմ գան և նոցա շնորհի.[8] և ոչ ամի ամի առնու զեօղ

---

1. ԱՌ զիւահտին * Ա այս իմ
2. Ա Ջուանշերի
3. Բ պատճենի
4. ԱՌ եւս այլ=այլ եւս
5. Բ որդոյ առ առ
6. ԱՌ քժան
7. ինձ թւում է, որ դաւառաբարբառի հետքեր կան այս ձեռնարկներիս մէջ,

1. = յետ.
2. Ա եւ ոչ
3. Բ զայր ? զայդ ?
4. Ա այս
5. Ա կամ յաղագս
6. Այս նախադասութիւնը աղճատուած է. երկու օրինակն էլ ունին «յԱղուանից կաթողիկոսէ եւ զբերել մերոյս» — մինչ կարդում ենք եւ զ (եւզ=իւզ) բերել
7. ԱՌ ինչ
8. Ա շնորհի

լուսաւորութեան, որպէս հրաման է սուրբ կանոնաց, և ոչ ծառայէ սրտի մտօք ամենայն մեծարմանութեամբ՝ ըստ արժանի սուրբ Հուսաւորչի աթոռոյն, և ի բնէն թաւիղ, զոր ի սուրբ Հուսաւորչի աթոռն է, բայց թէ հերձուած լինէ եւ լևի, զոր կանոնք [Բ] և դիրք վկայեն. և յաղագս աւազաց աչառանօք, կամ երեսաց մեծութեան կամ դինէ և [է] մարմնաւոր զօրութեան, և թիկունս դարձուցանէ ի ճշմարիտ առաջնորդէ, և հակառակին հնազանդի՝ նզովեալ եղիցի ի կեանս և ի մահ: Եւ բաժինն ընդ Ծուդայի աստուածավաճառի և գէհզայ բորոտի և Սիմոնի կախարդի և հերկից աստուածասպանիցն եղիցի: Եւ եկեսցեն ի վերայ նորա անէծք սուրբ հայրապետացն՝ տեառն Յովաննիսի և տեառն Թէոդորոսի և տեառն Անանիայի և այլ սուրբ եպիսկոպոսաց, զոր կարդեցին ի վերայ Յակովբայ, որ յառաջն էր քան դիս և ապստամբեաց ի հայրական դրլոկայ սուրբ աթոռոյն և մերժեցաւ յօրհնութենէ[1] սրբոց, և լուծեալ եղիցի ի սուրբ և յաստուածատուր կարգայ և ի սուրբ Հոգւոյն որոշեալ եղիցի:

Եւ թէ[2] ոք յիշխանաց կամ յաղաչաց կամ ի մերձաւորաց, [Ա] եղբարց և յաղգականաց, կամ յօտարաց՝ օգնէ, կամ եպիսկոպոս համարի և կամ քահանայ, կամ սարկաւագ, կամ յուխտ եկեղեցւոյ՝ աստուած նմա մի՛ ողորմեսցի, մի՛ կենօք, մի՛ մահու, և բաժինն ընդ անհաւատիցն եղիցի:

Գրեցաւ ի կաթողիկոսութեանն և ի հայրապետութեանն աստուածապատիւ և հոգևոր—տեառն Անանիայի և ի թագաւորութեանն Աշոտի, որդւոյ[3] Աբասայ, և որ էր ի Սիւնիս իշխանաց իշխան մեր Վասակ, և որ ի Բասէն իշխանաց իշխան՝ [Բ 129b] տէր Ջուանշիր, և որ եպիսկոպոսունք ի տեղիս[4] էին՝ տէր Դաւիթ Շօռոթոռունեաց եպիսկոպոս և տէր Սահակ Գնդունեաց եպիսկոպոս. և Հայոց թուականն էր ՈՂԵ:

Ըստ նմին օրինակի և յիշխանացն առեալ ձեռնարկ՝ մի՛ ևս այլ լինել նմա թիկնածու յապստամբութեան ժամանակս՝ թէ լինիցի արկածք, որ ունէր օրինակ դասս.

*** ՅՈՒՆՈՒՆ ԱՍՏՈՒԱԾՈՅ այս իմ ձեռագիր է՝ Ջուանշերի[2] Ջագիկ իշխանի որդւոյ[3] առ աստուածապատիւ և հոգևոր տէր Անանիա[4] Հայոց կաթողիկոս. Հաւանեալ եմ աստուածոյ միջնորդութեամբ և սուրբ Նշանիս. Որովհետև մարդասիրութիւնն աստուածոյ քաղցրացոյց զաստուածապատիւ և հոգևոր—տէր Անանիա Հայոց կաթողիկոսի կամդ[5] ի լիւրեանց ծառայիս, և այլ ծառայից, և լիւրեանց ի վիճակիս և ժողովրդեանս, և այսպէս բարի կամով քաղցրացան՝ ծառայեմք զսուրբ աթոռս ուղղորդ մտօք և անխարդախ սրտիւ որպէս պատուաճ: Եւ այք լինին մեր վերջականք՝ զսուրբ Հուսաւորչի աթոռոյն գծառայութիւնն ուղիղ ունիմք: Եւ որ ղինի ձեր յաջորդին ի սուրբ աթոռդ՝ ապերսեմք՝ որպէս նոքա կարգին տուիչ են և այլ ամենայն մեծարանաց ի մեր հնազանդութեանն ի վերայ և ի ծառայութեանն՝ պատաջին սուրբ Հայրապետացն զտուեալ պատիւն ոչ որոշել[6] ի մեր առաջնորդէն:

Իսկ եթէ ոք յեպիսկոպոսաց մերոց, որ ղինի մեր զարմից դան և՝ առանց հերձուածոյ և կամ այլ յայ[տ]նի պատճառի,[7] որ կանոնք* և դիրք վկայեն՝ ապստամբեն ի սուրբ Հուսաւորչէն, որ-

1. Ա օրհնութենէ
2. Ա եթէ
3. Բ որդոյ
4. Բ ի տեղս * Ա կանոն
2. Բ Ջուանշիրի
3. Բ որդոյ
4. Բ անանիայ
5. Ա կթողիսի ի կամդ Բ կաթողիս ի ի կամդ
6. ԱԲ որոշեալ
7. ՈՒԲ այլ յայն ի պճռի = այլ յայ(տ)նի կամ այն(պիսի) պատճառի.

պէս [Բ] Յակոբն արար և խրատեաց զտանն Սիսական դկարդապրութիւն [Ա 206ա] և նա եղև կարապետ և սկիզբն ապստամբութեան, որ այլ բնաւ չէր լեալ ի տանն Սիւնեաց մինչև ցՅակոբ,[1] ո-րում թիկնաճու եղեաք[2] և մեղաք աստուծոյ և իւր փոխանիփ։

Արդ՝ թէ այլ ոք ընտրի ի մեր յաւուրս կամ՝ զկնի որդւոց[3] մերոց· ի հոգ[4] ի մեր զարմից, յիշխանաց կամ ի աւերանց կամ յապատաց նմա օդնական լինի՝ դարան թաքստեան՝ և ոչ ասց[5] ի ձեռս Հայրապետին, որ արդարութեամբ դասի ըստ կանոնաց, աստուած նմա մի՛ ողորմեսցի, մի՛ աստ և մի՛ ի Քրիստոսի ահեղ աւետին, և մահն և բաժին ընդ սատանայի եղիցի և ընդ Յուդայի աստուածավաճառի և ընդ Սիմոնի կախարդի, և նզովեալ եղիցի յամենատուրս Երկրորդութենէն և յամենայն սրբոց, և զարիւն ամենայն սրբոց աստուած ի նմանէ պահանջեսցէ, որ ապստամբ եպիսկոպոսին օդնական լինի յանիրաւութեան վերայ։

Գրեցաք ձեռնագիրս այս ·Նէ· թուականին ձեռամբ Յովանիսի՝ որդի Զաղիկայ՝ Բագրատ իշխանի և տուաք ձեզ աստուածապատիւ և հոգևոր—ակն Անանիա[6] Հայոց կաթողիկոս՝ թէ, աստուած կամի։

*** ՅԱՆՈՒՆ ԱՍՏՈՒԱԾՈՅ այս ձեռագիրս[7] է իմ Վաստակայ Սիւնեաց իշխանաց իշխանի, որդի Սմբատայ[8] իշխանաց իշխանի, ձեզ աստուածապատիւ և հոգևոր—ակն Անանիա Հայոց կաթողիկոս· թէ այս օրէս[9] յառաջ, որ Հայ թուականս ·Նէ· կր, յորժամ գուք սուրբ Նշանովք ի մեզ խոնարհեցայք և նիւթ և պատ պ[յան-

1· Ա յակոբ
2· Ա եղաք
3· Բ որդոց
4· ԱԲ այսպէս ի հոգ»
5· Բ տա
6· ԱԲ աննիյ
7· Բ ձեռագիրը
8· Բ սմբատա
9· Ա օրէ

ցանան անտես արարիք, որ վասն ապստամբութեանն ի սուրբ Հաւատոյն աթոռոյն և յԱղուանս [Բ 130ա] գառնայով և անտի զթերակատար և զանկանոնական իւղն օտար երեր ի մեր տունս և ի սուրբ Հաւատոյին սեփական[1] վիճակս, և մեք նմա լսելով և ներելով՝ մեղս գործեցաք և մեղաք աստուծոյ և աստուածոյ փոխանիփ։ Զի զարան եղաք նմա և ոչ տուաք ի ձեռս, որ ըստ աստուծոյ հրամանին և սուրբ կանոնացն խրատեալ էիք զձեր ծառայն, որպէս յաստուածոյ հրաման ունիք՝ արդարացուցանել զարդարն և զատել զանիրաւն, որք արտաքոյ աստուծոյ հրամանին գործեն, որպէս արար Յակոբ և յաստուածոյ դատապարտեցաւ և զմեզ իւր կորըստեանն հատորդ [Ա] արար և ընդ անիծիւք փակեաց զՍիսական տունս՝ երկնատան զաւառաւ։[2]

Արդ՝ եթէ ի մեր տանս այլ ոք յեպիսկոպոսաց՝ եթէ ի մեր յաւուրս և թէ յայլոց, որ զհետ մեր լինին ի զարս զարս, և այլ այդպիսի չար[3] ընտրի, որպէս Յակոբ ընտրեցաւ, և հոգ* նմա ներեա[յ] յիշխանաց կամ ի աւերանց և ոչ ասց[4] ի ձեռս հայրապետին, որ ի ժամանակին, որ ի սուրբ Գրիգորոյ յաթոռն նախկամ ածել յուղղութիւն և կամ բառնալ ի միջոյ՝ նզովեալ լիցի յամենատուրս Երկրորդութենէն և բաժին[ն] ընդ աստուածապանիչն եղիցի, և պարտական եղիցի հայհոյութեան սուրբ Հոգւոյն՝ որ առանց թողութեան է, և ջնջեսցէ աստուած զայնպիսին ի գպրութենէն կեանց։ Նա եթէ մնալարեալական արիւն հեղուցու՝ աստուած ընդ Յուդայի խեղդատահութեանն չափոյն ընկալցի, որ ապստամբ եպիսկոպոսին օդնական լիցի [Ի] տանս Սիսականի, ով ոք և իցէ։ Եղիցի, եղիցի։

1· ԱԲ սեփհական
2· Ա գաւառ
3· ԱԲ այդպիսի ի չար
4· ԱԲ տա
* Տես վերևի ասացուածը՝ „ի հոգ ի մեր զարմից“.

Զայս ձեռագիր պատճենի[1] ընկալաք ի նոցանէ կանոնական հաստատութեամբ վասն [ß] առ յապա ժամանակաց, զի մի՛ լիցին կցորդ ապստամբացն կորստեան,[2] այլ հնազանդելոցն օրհնութեանց արժանաւորք եղիցին։

Եւ մեք դէմ եդեալ՝ գնալ հասանել ձեպէպ յաշխարհն Աղուանից, շինել զաեղի հաւատարմանաւոր գաղկայ, և որք յառաջ քան զնա։

Իսկ ապա զուժկան հասանէր ի մեծ իշխանն Սենեքերիմայ[3] գալ հասանել իմոյեւ լականաց բռնութեամբ յաշխարհ նորա, գերել և աւերել[4] և ի սուր սուսերի մաշել։ Եւ զիւրս ազէտիցն առաքէ ծանուցանել մեզ՝ մի՛ ևս մտանել առ անդամ մի յամպրոպ դառնութեան։

Իսկ մեր ապա գնացեալ եկաք յաշխարհն մեր՝ առ թագաւորն բարեպաշտ Աշոտ Հայոց Մեծաց, որոյ տեսեալ զմեզ ուրախ եղև յուրախութիւն մեծ։ Մանաւանդ պատմեալ[5] մեր զշինութիւն հոգևոր գործոյն՝ բերկրեալ փառաւորէր զաստուած։ Եւ ըստ յաջողելոյն աստուծոյ՝ ի շնորհաց հզօրիս այսորիկ և աղօթից սրբոց՝ ոչ կամելով առնել[6] անտես զաշխատութիւնս մեր, ծագեաց[7] ի սիրտս հզօրացն Աղուանից, ի թագաւորն,[8] որ կոչէր Իշխանակ՝ որպէս տեառն Աարոնեսահի, և Սենեքերիմայ Աղուանից իշխանաց իշխանի, և նորին [Ա 207ձ] ամուսնոյ, և քեռ նորին, և տեառն Սենեքերիմայ՝ որպէս Գրիգորի Խաչենից իշխանի, և տեառն Վաչագանայ Գոլոզանոց իշխանի, և տեառն Գուրգենայ Արևելեաց իշխանի, և այլ բազում մեծամեծաց միանգամայն և աշխատարոյժ ամբոխից։ Եւ միաբանեալ ի հոգևոր շնորհայ՝ ի նոյն ամի, ի նմին ամենայն [ß 130b] երկրորդի առաջնոյ և ընտրեալ գայլ մի հոգևոր և առաքելական և ծերական ալեօք պատուական՝ Դաւիթ անուն՝ Խոտակերից[9] վանական, և առաքեն ի Շիրակ գաւառ, ի նահապետն* լեալ տեառն Սմբատայ Հայոց թագաւորի, Շիրակաւան կոչեցեալ։ Եւ լուեալ զառնե(ա)լն աստուծոյ՝ ամենայն աստուածասէր հոգի փառաւոր առնէր զկից սահմանիչն[1] աստուածայ։

Եւ լուեալ թագաւորն[2] Հայոց Աշոտ և նորին եղբարց Մուշեղայ և Աարոնեսահի՝ ուրախ եղեն յոյժ և մեծապարգև շքեղութեամբ տային ձեռնադրել զնա մերում նուաստութեանս[3] կաթողիկոս Աղուանից նահանգին։

Եւ մեծամեծ պերճանաւք և առատաձեռն տուչութեամբ և մեծապատիւ փառօք տարաք նմա նշան ոսկեզին յոյժ ծանրագին, ընդելուզեալ մարգարտովք և գարդարեալ ակամբք պատուականօք։ Եւ առաքեաք խոպոպութեամբ յաշխարհ իւր՝ մեծապարգև աւետեաց հնչուճն տալով խարհուրդելոցն յաստուածասիրին գրկացն հոգեծին Լուսաւորչին։ Եւ աւարտեալ հաստատեցաւ ջան վաստակոյ մերում և աշխատութիւն բազմամեայ[4] տառապանացն, ի շրջանին Հայոց, ի ՈՂ, կամօքն աստուծոյ և աղօթիւք սրբոցն։ Եւ հանգեաւ իղձք տարփանաց տառապեալ և ներգև[5] հընչոյ մերում։

Եւ արդ՝ շնորհ ունիմ ես այնմ որ զօրացոյցն զիս՝ տեառն իմոյ Յիսուի Քրիստոսի, և պարծիմ յուսով փառացն աստուծոյ, և ապաչեմ զձեզ,[6] ով սրբասնեալ և հոգիա[ß]փարթամ ներանձնաւոր տեարք և եղբարք[7] իմ՝ որք յաջորդիք յամենա սրբոյ Լուսաւորչիս, մի՛ ևս այսպանել զաշխատութեամբ իմով, այլ զունակ փրկչին հօրն ձերոյ ի գոհութիւն ընկալեալ զերկուս խնդրեալս այսորն՝ և գուք ընկալջիք զիմս[8] աշխատութիւն. և ի ձերոյ յոգնաջան աղօթից նպաստ շնորհի [Ա] շնորհել հիքոյս և ձրել չափովք ձրողին ձեզ զանչափելի փարթամութիւնն, և կեալ ի մշանջենաւոր յաղագային[9] հանդերձեալ աւուրն։

Վասն զի աստուածոյ հօր և Յիսուսի Քրիստոսի և հոգւոյն սրբոյ փառք, այժմ[10] և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1. ß պատճենի 2. ԱՒ կորըստեան 3. ß սենեքերիմա
4. ԱՒ աւերե՛լ 5. Ա պատմ. ß պ՛ատմել
6. Ա չունի «առնել» 7. ԱՒ մեր։ ծագեաց
8. Ա չունի «ի թագաւորն». ß ի թագն
9. Ա խոտակերից

* Այս բառի մասին տես իմ յօդուածը՝ ՆՍՏՈՑ, Ապրիլ 1893-Ը։

1. Ա ստեղծին 2. ß թագին 3. Ա նուաստես
4. ß բազմամեա 5. ß ներքեւ 6. Ա չունի «ձեզ»
7. ß եղբայրք 8. Ա զիմ 9. Ա յաւգային 10. Ա այժ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ·

Առ 1 մարտի տարեւոյս ձեմարանիս հանգուցեալ ուսուցիչ Վ· Աբովեանի որբերի անունով ստացուած նուէրների գումարն է ընդ ամէնն 1064 ռուբլի։ Մարտի ընթացքում նուիրեցին նոյն նպատակին· ա) օրիորդ Մարգարիտա Բաբայեան, Թիֆլիսից 10 ռուբլի· բ) Վրաստանի և Իմէրեթի թեմական առաջնորդ Դեր· Դէոդոր արքեպիսկոպոսն ուղարկեց ձեմարանի վարչութեանը Թիֆլիս և Արտուին հանգանակուած գումար՝ 227 ռուբլի 77 կոպ· գ) Արժ· Ղեւոնդ քահանայ Դեղամեանը Բագուից ուղարկեց ձեմարանի վարչութեանը հանգուցեալ Աթամալեանի յուղարկաւորութեան պատահելի փոխարէն Արշ· և Յար· Յակոբջանեանների և Մարտ· Սարգսեանցի նուիրած 80 ռուբլի· դ) Մովսէս Տէր-Թովմասեան 3 ռուբլի· ե) Մ՛իք· Սմբատեան Ախալքալից 8 ռուբլի և զ) Վեհափառ Հայրապետի Դիւանից ստացուեցաւ Պ· Աբգար Յովհաննիսեանի շրջնորհիւ Թիֆլիսում հանգանակած գումար 300 ռուբլի· ընդամէնն վեց հարիւր քսան և ութն ռուբլի 77 կոպեկ։ Այսպէս՝ առ 22 մարտի ստացուած բոլոր նուէրների ընդհանուր գումարն է 1712 ռուբլի 77 կոպ· այդ գումարից վճարուեցաւ այրի տիկին Ե· Աբովեանին նորա զաւակը ուսման ծախս քառասուն ռուբլի· Մնում է մի հազար վեց հարիւր եօթանասուն և երկու ռուբլի եօթանասուն և եօթն կոպեկ (1672 ռուբլի 77 կոպեկ)։

Հ· Ղեւոնդ քահանայ Դեղամեան մարտի 3-ի գրութեամբ ծանուցանում է, որ հանգուցեալ Աթամալեանցի այրի տիկին Աննա Աթամալեանց նուիրել է հինգ հարիւր ռուբլի հանգուցեալ Վ· Աբովեանի որբերի անունով և այդ գումարը կուղարկուի մի ամսից յետոյ։

Տեսուչ ձեմարանի՝

Կ· ԿԱՊՏԱՆԵԱՆ·

ՄԱՅՐ ԷԹՈՒԻՍ ՏՊԱՐԱՆՈՒՄ

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ

ՀԵՏԵԻԵԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ·

		Ր·	Կ·
1·	Սրբազան պատմութիւն Հին Ուխտի, Ամբրոսիոս Վ· Դալֆայեանցի	1	—
2·	Նոյն Նոր Ուխտի (պատկերազարդ)	—	50
3·	Կրօնական բարոյական խորհրդածութիւններ Ա· Դիւք	—	20
4·	Նոյնը Բ· Դիւք	—	20
5·	Նոյնը Գ· Դիւք	—	20
6·	Նոյնը Դ· Դիւք	—	20
7·	Նոյնը Ե· Դիւք	—	20
8·	Նոյնը Զ· Դիւք	—	20
9·	Նոյնը Ը· Դիւք	—	20
10·	Նոյնը Ը· Դիւք	—	20
11·	Նոյնը Թ· Դիւք	—	20
12·	Նոյնը Ժ· Դիւք	—	20

Գումարով պնդիներին 20% զիջումով·

Մամուլի տակ են ա) Հայաստանեայց եկեղեցւոյ ս· կարգ Արշ· Տէր-Միքելեանի·

բ) Տէր-Պետրոս Ա· Գետապարձ· գրեց Ղ· Գոտանեանց։

Պ· Ի· ԺԱՄՀԱՐԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

Լոյս է տեսել Մոսկուայում

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԻ

ԵՐԿԵՐԸ

ՎԱՃԱՌՈՒԱԾ Է

Հեղինակէն ուրիշ ոչ մի տեղ

Կարելի է գնել Թիֆլիս

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

ԵՒ

Վաղարշապատ

Այրի տիկին ԿԱՏԱՐԻՆԷ ԱԲՈՎԵԱՆԻ մօտ

Գինն է առանց ճանապարհածախքի

ՄԷԿ ՌՈՒԲԼԻ

Դրամարով առնողներին զիջումն կը լինի։

ՏՊԱՐԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻՈՑ Ս· ԷՋՄԻԱԾՆԻ

Վաճառուում են

ՀԵՏԵՒԵԱԼ ՆՈՐ ԳՐՔԵՐԸ·

	Ռ·	Կ·
1· Վկայաբանութիւն Գորիւն և Շմոնի (Ագաթանգեղոսէ պղեւոնդէից)· —գրէց Գ· Տէր—Մկրտչեան	—	50
2· Պարզ քարոզներ (Գ· գրքոյկ) —գրէց Էմմանուէլ քահ· Նազարեանց	—	20

Մայր Աթոռիս տպարանում տպագրութեան համար մատչելի գներով ընդունուում են դասական, գրական, գիտական գրքեր, գրասենեակների վերարերեալ տօմարներ, հաշուեգրքեր, հաշուեթղթեր, ծանուցագրեր, հասցէներ, — շրջաբերական, պիեստոմսեր, վերնագրութիւնք նամակի, ծրարի և այլն.

Իսկ կազմատուն բաժնում ընդունուում են կազմելու տօմարներ, տետրակներ, գրքեր, պարզ և ոսկեզօծ·

Պաշտօնեաների համար կարելի է դիմել Տպարանական ժողովին·

ԿՈՎԿԱՍՈՒՄ ԸՆԴԱՅԻՆ

ՉԱՆԳԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ

ԻՆԾԵՆԵՐՆԵՐ

ԵԱՐԱԼԵԱՆԻ ԵՒ ԱԼԻԽԱՆԵԱՆԻ

ՏՓԽԻՍՈՒՄ

ՁՈՒԼՈՒՄ Է ՆՈՐԵՐԸ ԵՒ ՎԵՐԱՁՈՒԼՈՒՄ Է ՀՆԵՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՄԵԾՈՒԹԵԱՄԲ

(մինչև 1000 փութ կշռով)

Գործարանում ձուլուած զանգակները յայտնի են իւրեանց գեղարուեստական ձևերով և հիանալի ձայնով· զանգակի վերայ նկարուում են սուրբերի պատկերներ համաձայն պատուէր տուողների ընտրութեան· Մակագրութիւններ ամեն լեզուներով·

Իմնդրում են պատուէրները ուղղել՝ Въ контору чугунно—литейнаго, машино—строительнаго и колокольнаго заводовъ инженеровъ Яралова и Алиханова, Тифлисъ, Александровская ул., собственный домъ, вблизи вокзала.